



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1

- 1-- Կ. ՇԱՀԻՆԵԱՆ Փոխասացութիւն
փորձուող հորիզոններու

- 7-- * * * Սարգիս Սարգիսեան

- 8-- Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ Սըրաբեժի

- 27-- Է. ՍԱՐԱՃԵԱՆ Իրրել ամայիժ մեդիդի
- 27-- » » Թարգմանութեան պէս կիսահարդր

- 28-- Ն. ԲԻՒՋԱՆԳՅԱՆ Առաջին ժամանակ

- 36-- ՎԱՐԱՆ ՈՒԺ Անտորագիր նամակ մը
անանուն ազգկայ մը շուղուած
Գահիրէ, 7 Յունիս 1934
կ. Ե. ժամը 12.15-12.45
- 37-- » » Զգայաներն ճանապարհորդը

- 38-- Յ. ԿԱՐԱՊԵՆՅ Եզնիկը

- 46-- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Քամին կ'անցնի

- 47-- Վ. ԹԵՔԵԱՆ Անհող եւ հողահօր

- 53-- » » Սփիւռքի բանաստեղծին
(նուէր՝ ժազ Յակոբեանին)

- 54-- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Սերունդի մը տագնապներուն
յանձնառու արձակագիրները

- 65-- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Քերթնողական անոյ սահմաններ

- 75-- * * * Նշմարներ

Բարձր

ԱՂՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ի Վ. ՔԱՐԻ. ԳՐԻԳ ԵՐԵՎԱՆ 1946 ՎԵՐՔԵՐ

Կ. ՇԱՀԻՆԵԱՆ

ՓՈԽԱՍԱՑՈՒԹԻՒՆ

ՓՈՐՈՒՈՂ ՀՈՐԻԶՈՆՆԵՐՈՒ


Դեռ բարեւոյ չես ըսած
սա կեանքին ու մարդկութեան,
որոնք մտփկոյ կանգնած
անծանօթներ կը մնան:

Վարագործուած պատուհանիդ ներսի կողմէն
գաղտագողի բացուածքէ մը
երկիւղի ու դողահար կը լրտեսես
փողոցներուն փռուած կեանքը՝
տառապակիւն ու հոլանքի,
ցանկայարոյց:

Մէջդ կ'անին ջիւերու սօսափները ողբասաց
ու գետնափոր, բնոյատակեայ ապրումներ:

10284-87թ.

digitised by A.R.A.R.@



Պատուհանիդ ետևէն
 մարդոց շունչն ու հեւքը
 կը գգաս,
 շնչատ կ'ըլլաս, կը նախանձիս զսպօրէն
 եւ մարդկային շունչը կամ հեւքն, որ հագիւ
 Ինքզինք
 կանգուն
 կը պահէ,
 պատուհանին միւս կողմէն
 մէջդ տարտամ ու սպարդիւն եռուզեռ մը կը ստեղծէ,
 միշտ գետնափոր, ընդյատակեայ սպրումներ
 կը բազմացնէ:
 Եւ այդ մարդոց նայուածքները գոյնզգոյն,
 որոնց անգոյն լուսանցքին եւ կանգնած դուն,
 իրենց անձայն սուլոցներով
 մէջդ անդուլ կը տարափեն սարսուռներ:

Եւ խարշափող ոչ-նիւթեղէն հեղանիւթեր կը բարձրանան
 ողնաշարիդ բաւիղէն:

Ուղեաններն ու խննդի բոլոր սարքերը կեանքին
 վարագուրուած պատուհանէդ անդին դիզուած
 կը սպասեն
 Բեզի, այսինքն՝ անար,
 որ աշկերտ է ու գործիք
 տառապանքի արհեստին կամ արուեստին:
 Բայց մեծագոյնն ու կատարեալ սարքը դուն ես,
 որ խինդով ու կսկիծով
 պիտի աշխարհն ու մարդկութիւնը փոխադրէ
 իրմէ ներս,
 արքնցնէ տիեզերքը իր մէջ ննջող:

— Մենք ճամբորդ ու գիւտարար ենք
 անծանօթի,
 աննուանի:

— Քարտէս չունինք մենք: — Ուրեմն

մագլցիր դուն դրախտն ի վեր

սանդուխներէն զարմանքի:

— Մենք միշտ կ'ապրինք ժամանակի սլաքներու տակն մէջ:

— Հանդիպման այս եզերքներուն վրայ վերջին

կը խարխափենք միասին

եւ խօսելէ կը խուսափինք:

Հաւաքուած հոս՝

տուայտանքի գետի ափին,
 մենք միշտ կ'ապրինք ժամանակի սլաքներու տակն մէջ:

== Տուայտանքի գետի ափին կը փչէ հով աւազահեղձ,
 ծառերը խուճբ-խուճբ կ'իլնան, խոտը աշնան հետ կը դեղնի:
 Դուն կը մագլցիս աշտարակներէ եւ աշտարակներէ
 դիտելու երկիրը բարբարոս . . .

Խաւար՝ խուփ կայք եւ ամբարտակ յուզումի:
 Հովը կու գայ - գիշերն ամբողջ պատուհանիդ տակ կ'ոռնայ
 անկյափ ու անարգաւանդ,
 առաւօտուն՝
 արշալոյսի գգայագիրկ ու փայլփլուն միսերուն մէջ
 քանճրակուտակ
 աստուածներդ իրենք գիրենք կը խեղդեն:

Ծաղրածու մը ներսէդ կ'ըսէ.—
 Արիւնդ վէրքդ արեւին ցոյց տուր,
 երբ հասունցած է:
 Այս արեւը շպարուող
 լոկ հասուն վէրքեր կը հասունցնէ:

Հարցումներ ուղղէ,
 գիտնալով հանդերձ, որ անոնց համար
 դուն պատասխաններ պիտի չստանաս
 եւ պատասխաններ՝
 որոնք հարցում են:

Որովհետեւ կը հոծուին հորիզոններ կոյս ու խռով,
 ասպատակող նայուածքներէ գերծ կը մնան
 եւ իմաստէ կը պարպուին հորիզոններ կոյս ու խռով,
 ուղղէ հարցումներ՝
 որոնք պատասխան
 եւ պատասխաններ՝
 որոնք հարցում են:

Այնքան ատեն որ կը գգաս թէ
 մարմինէդ դուրս մարմինէդ գատ ոչինչ կայ
 ու մարմնիդ մէջ պարսպ մըն է որ կ'ոռնայ,
 ինչպէս լքուած նուագարան միալար,
 որ յարատեւ կարիքն ունի
 նուագողի մը վարպետ,
 պատահական,
 անուպայ,
 հարցումներ ուղղէ,

գիտնալով հանդերձ, որ ամոնց համար
դուն պատասխաններ պիտի չստանաս
եւ պատասխաններ տուր հարցումներու,
որոնք չեն հարցուած :

Այս բոլորէն առաջ սակայն
ու բոլորէն ետք տակաւին
հարկ է որ դուն կեանքին նետես ինչ քարեւոյ
ու քարեւն այդ ամէն վայրկեան կարկառես ու կամարես
մինչեւ մահ, որ նախօրէն ծնունդդ արդէն
բոյն է դրած շաղախիդ
իւրաքանչիւր հատիկին մէջ՝
իբրեւ ազ ու համեմ կեանքին :

Պիտի գաս դուրս ինչ մարմնին
կուտութենէն մթնշաղ
եւ լուսեանդ միեկնումն եզերքներէն ընթանաս
դէպի հոն՝ ուր նախապարհ է
արեւակէզ - կարկտահար,
դէպի հոն՝ ուր նախապարհ եւ նշմարտութիւն
սեւաբար չեն ջնջեր գիրար,
դէպի հոն՝ ուր
նշմարտութիւնը միակ
նախապարհ է կարկտահար - արեւակէզ,
որ կը քալէ լուսեան ու ժխորի
սահմաններուն տարերային,
ուր կ'իշխէ միշտ լոկ օրէնք մը ջրային ու աւազային.
«Եթէ խօսիս՝ կը մահանաս,
եթէ լռես՝ կը մահանաս»:
— Ռեքեմն խօսի՛ր ու մահացիր :

Մի մտնար, որ դո՛ւն ես հայրն ու գաւակը
եւ դանդաղ թէ յանկարծակամ,
բոլոր, բոլոր մահերուն
եւ ամէն օր ու ամէն ժամ սպաննէ
սաղմուտարուող թշնամանքը ջուրին հանդէպ թէ արեւին,
որոնք միշտ ալ կ'ընծիւղին
ոսկեդրուագ ու գունաքաւի աւազուտէն :
Եւ մի մտնար մանուանդ,
որ ինչ մէջդ կառուցուող
աշխարհը կը կործանի
երբ արեւն ու ջուրը հոնկէ կ'աւարես
կամ անոր մէջ կը բանես :

digitised by A.R.A.R.@

— Դուն պիտի փորես մակերեսը ազմուկին:

Դո՛ւն ես հայրն ու զառակը
 քու դանդաղ թէ յանկարծական,
 բոլոր, բոլո՛ր մահերուն:

— Դուն կը խորհիս բանալիին մտին բանտիդ
 ու խորհելով անոր մասին կ'ամբապնդես բանտդ այդպէս:

Դուն չես կրնար կենալ հոս՝
 սպառելու քու կեանքդ միշտ անցեալին ճայելով:

Աւրուած դէմք մըն ես դուն,
 ուրկէ անցան խաչակիրներն ու մոնկոլներն
 անյիշատակ:

Քակդ չեզոք առաստաղիդ նեղքերէն,
 հալած կողով տանիքներէն ու ցրիտած քիւրէն,
 ուր կտորտած, խուճապահար, երեք քայլեր կը յամենան,
 խուճապահար քայլերու թնուկներէն
 եւ այժուի հոտերու լերդացումէն
 ու սերմի ազեխաշ կաթիլներէն
 ուռչող, սառչող երակներէն

Թերխաշ երգդ,
 հնադարեան ահագանգը
 եւ մահդ ու
 կենսաբազմանքդ
 կ'անին,
 կը հասունան ազերով,
 կը վերածուիս լեղապատառ
 թարմ էակի
 մատաղատի:

Արարուած մը կը վիժի,
 արարուած մը կը սկսի:

Շարքապկերջ չունիս դուն,
 որ շունչ քաշես, աւելի նիշդ՝
 շնչառութեանդ ու հեւքիդ
 դադար տաս:

— Դուն պիտի փորձես մակերեսը լուսթեան:

Թէեւ ամէն մարդ կ'ուզէ ինքն իր հաշուոյն աշխատիլ,
բայց ոչ մէկը կը յաջողի խուսափիլ
ուրիշներու հարկերէն,
իւր ծարաւէն ու քաղցէն,
սէրերէն ու խորշանֆներէն.
Քէեւ ամէն մարդ կ'ուզէ ինքն իր հաշուոյն աշխատիլ,
բայց չի կրնար,
որովհետեւ նոյն ատեն
կ'ուզէ ուրիշն աշխատցնել
իւր հաշուոյն:

Ոմանք կ'ուզեն ապրումներդ ճարտարապետել,
եւր իրենք ա'լ պարպուած են ապրումէ:

Սրուակի բոյրի ծնունդ ապրումներ
կը դեգերին
ամէնուրեք:

Տոփանֆին շուրջ հիւսուած
ուստայն մը բոյն դրած է
քեզ պաշարած աչքերէն ներս,
նայուածֆիդ մէջ:

Պատակտեալ անձ
եւ արուած դէմք ես դուն:

Դուն պիտի փորձես մակերեսը ազմուկին,
որ ոչինչ կ'ըսէ:
Դուն պիտի փորձես մակերեսը լուսթեան,
որ ամէն ինչ կ'ըսէ:

Քու անիծեալ մարմինդ արդ կը քերթէ տարածոյթը լուսթեան՝
քերթուելով տարածոյթէն լուսթեան
ու դուն այսպէս կը բարձրանաս դրախտն ի վեր
սանդախներէն զարմանֆի:
Դուն ո'չ քարտէս, ոչ լոյս ունիս,
բացի լոյսէն քու ներքին:

ԿՈՐԻՆՆ ՇԱՀԻՆԵԱՆ



ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻԱՆԸ

(1930 — 1985)



Արձակագիր և սպարանատեր Սարգիս Սարգիսեան ծնած է 14 Մարտ 1930ին, Պէջ-
բուք: Կազմաւորուող Պուրճ Համառոտ Ինքնազբոժ միջնորդին մէջ հասակ նետող Սարգիս
Սարգիսեան նախնական կրթութիւնը կը ստանայ Թաղի Ծիական վարժարանին և Յիսուս-
եան Հայրերու Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Սէն Կրեկուար) դպրոցին մէջ: Պատանի տարիքին
կը ստիպուի նետուիլ կենսաբիւլոգի և սպորտի բանուարի համեստ միջնակէն կը յա-
նժդի բարձրանալ սպարանատէրի դերփին:

Աթլէթի և աննկարչուի մէջ որոշ յաջողութիւններ արձանագրելէ ետք,
փառանքաւորներու սիմվոլի միայ, բարձրագոյն թշնամական միջնորդի մէջ, կոմպոզիտի
իր կիթառի սիւնիանութիւնը կը խնէ Լիբանանի փառանքաւոր սիւնիանէն, որմէ ետք տա-
րիներ շարունակ կը զանայ Լիբանանի և արաբական ոմիկերու փայլուն ասպարէն մէջը:

1950ին Սարգիս Սարգիսեան կը սկսի փայլել նաև Փոթլուի դաշտերուն վրայ՝
երբևէ մէկ անգամ Չ.Մ.Ը.Ս.ի ներկայացուցչական խումբին, որուն շարքիւր արդարօրէն
կը կրէ մինչև 1961: 1953ին կը հրատարակէ մաս կազմելու Լիբանանի ազգային խումբին,
որուն դրօշը բարձր կը պահէ մինչև 1961:

Գրքոցական տարիներէն նաև գրական ու ղերասանական շնորհներ ցուցաբերած պո-
տանի Սարգիսը ամբողջովին չի կշտուիր միայն մարզական աշխարհով, այլև կը բարձր-
նայ բեմ, նախ՝ «Լեւոն Շանթ», ապա՝ «Գնացար Իրէկեան» թատերախումբերուն հետ: Ա-
ւելիքն այս շրջանին Սարգիս Սարգիսեան կ'առնէ իր գրական առաջին գայլերը՝ աշխա-
տակցելով «Ազգայն մարզական» շաբաթաթերթին և զփարոս երգիծաթերթին, որոնց էջե-
րուն կը ստորագրէ երգիծական յօդուածներ և զուարթախումբերու համեմատ լուսա-
ծուներ:

1968ին կը սկսի աշխատակցիլ «Քաղիմ»-ի, որուն էջերուն կը կազմուի ղիմագրիչ
երգիծական երանգներով յատկանշուող արձակագրիւն, որ նաև յօդուածներ կը ստորագրէ
«Ազգայն» օրաթերթին մէջ: Հետագային՝ առ է մի կը խմբէ «Քաղիմ»-ի էջերուն լոյս տեսած
իւր պատմաւածները, «Պատկն անդին» խորագիրը կըսող հասարակ մը զանոնց հրատարա-
կելու համար, ըսց, դժբախտաբար, Լիբանանի նախօրէ կայութեան հետեւանքով այս ծրա-
դիրը կը մնայ ծրագրի:

Լիբանանեան սազնայի առաջին օրերուն, առնչելի միջնորդող տանի ղարմնիչ
փորձող ճիգերուն իր մասնակցութիւնը բերելու առաջադրանքով՝ Ս. Սարգիսեան կը գրէ
«Պուրճ Համառոտ 78» և «Բարեւներ» Պուրճ Համառոտէն երգիծական պատկերներէ բաղկացած
Թատերախումբը, որոնց կը բեմադրուին զփորձական թատրոնին կողմէ:

Կը մահանայ 25 Մարտ 1985ին, սրտի անակնկալ կաթուածի մը հետեւանքով:

Ս. Ս Ա Ր Գ Ի Ս Ե Ա Ն

Ս Թ Ր Ա Թ Ե Ժ Ի



Քսանչինգ հրաչալի տարիներ, ուրախութեամբ ու երանութեամբ զեղուն քսանչինգ երջանիկ տարիներ անցած են այն բախտաւոր օրէն, երբ հանդիպեցայ Կիրակոսին :

Առաջին հայեացքով, տափակ ու անհաղորդ մէկու մը սպաւորութիւնը զորոնց վրաս, սակայն քիչ-քիչ մտերմութիւն մը ստեղծուեցաւ մեր միջեւ : Այսպէս պատահած է ամէն անգամ, որ արտասահմանէն եկած մէկու մը հանդիպած եմ :

Մեր խօսակցութեան զլխաւոր նիւթը կոփամարտն էր : Հետեւած էր կատարած փորձերու ու երբ անշէն դուրս եկած էի անձեռոցով ծածկուած, նստած էր քովս ու կ'աշխատէր վերլուծել պաշտպանողական ու յարձակողական քաճքիէս, կարգ մը հարուածներու շարունակական կրկնութիւնն ու պաշտպանողական գիրքիս խոցելիութիւնը :

— Աջ ձեռքդ քիչ մը աւելի բարձր պէտք է բռնես, — կը բացատրէր, — աւելի լաւ պաշտպանուելու ու աւելի լաւ հարուածելու համար : Ձախդ կատարեալ է, սակայն կարեւորը միշտ աջն է՝ ճակատադրական հարուածը տալու համար :

Ես մարմինս կը շորցնէի ու միշտ մտիկ կ'ընէի իր դիտողութիւններն ու թելադրութիւնները :

— Կոփամարտի մէջ կարեւորը սքրաքեմի՞ն է, — կը շարունակէր, — աշխատելու է առիթներ ստեղծել ու սպա օգտագործել առիթները : Կեանքի մէջ ալ այդպէս է, — աւելցուց ծիծաղելով, — ամէն ինչ սթրաթեթի է, կարծեմ կը հասկնաք, դուք հայերէն ինչպէ՞ս կ'ըսէք :

— Ռազմավարութիւն :

— Ճիշդ է, — հաստատեց, — ամէն ինչ պատերազմ է կեանքի մէջ, պայքար է ու կողոպուտ, խելացի մարդը պէտք է գիտնայ ու կարենայ առիթներ օգտագործել, տկար մարդը կը պարտուի, ոտքի տակ կ'երթայ :

երկուքս ալ կը ինդայինք:

Երբ մեկնելու համար ոտքի ելաւ, ստիպեցի որ սպասէ ինծի, միւսին երթալու համար:

Հագուած ատեն, պատուհանէն, կրնայի տեսնել զինք: Հսկայ էր, հարիւր քիւրջէն աւելի, անկասկած: Նստած էր անշարժ ու ինքնամոքոք, բոխիկ սպասման սրահին մէջ զտնուող մէկու մը նման ու հակառակ էր անհական գիծերուն, դուրի ու կարեկցութեան զգացում մը կը զբոսէր մէջս:

— Եթէ ժամանակ ունիս, պզտիկ պտոյտ մը բննք, — ըսաւ սքանչւցած, երբ տեղ դրակց ինքնաշարժիս մէջ, — ձեր երկիրը դրախտի կը նմանի ու կեանքը կատարելապէս հաճելի է, եթէ պէտք եղածին չափ դրամ շահիս:

Գրեթէ ինքն էր խօսողը ու իր հարցումներուն ինքն էր, որ կը պատասխանէր: Ռումանիայէն եկած էին ընտանեօք, ամէն ինչ ձգած էին հոն, դուրս ելած էին քանի մը անտուկներով ու հակերով: Լիբանանը առաջին կայանն էր, առժամեայ: Դիմած էին ԱնՁԱյին, Միացեալ Նահանգներ զաղթելու համար ու կը սպասէին: Միայն բախտը դիտէր, եթէ համայնավարներուն հետ զործակցած չէր Ռումանիոյ մէջ, եթէ դատապարտուած չէր քրէական որեւէ յանցանքով, եթէ պարկէշտ արհեստ մը ունէր, այն ատեն կրնար յուսալ երեք, վեց կամ ինը ամիսէն ստանալ մուտքի արտօնագիրը:

Կէս ժամէն հաստատեցի, որ կատարեալ շատխօս մըն էր ու բնաւ դժուարութիւն չէր կրնր նիւթեր ճարելու համար: Ես միայն մտիկ կ'ընէի:

— Ռումանիոյ մէջ դրամ ունէինք, սակայն չէինք կրնար ծախսել, — եղբակացուց երկար մենախօսութենէ մը ետք, որ կը վերաբերէր իրենց վարած կեանքին, — Հոս կրնանք ծախսել, սակայն դրամ չունինք:

— Զկրցա՞ր դրամդ դուրս հանել:

— Անկարելի էր, — ըսաւ վշտահար, — վտանգաւոր էր, սահմանէն դուրս չեկած, նոյնիսկ լուծողական տուին մեղի:

— Զկրցա՞ր սթրաթեժի մը յղանալ, — հարցուցի ծիծաղելով:

— Ի՞նչ սթրաթեժի, — հետաշեց յուզուած, — լուծողականին դէմ սթրաթեժի՞ կ'ըլլայ, սրիկաները մեզ անօթութեան վարժեցուցին ու, երկրէն դուրս չեկած՝ մեր աղիքներն իսկ պարպեցին, սրիկաները:

— Մէկ բան կրնամ վստահեցնել քեզի, — ըսի ծիծաղելով, — Լիբանանէն մեկնած ատենդ աղիքներդ անկասկած լեցուն կ'ըլլան:

Քաղաքին չըջանը ըրինք, երկար խօսեցանք, աւելի ինք խօսեցաւ ու ես մտիկ ըրի: Հսկայ ուսմանահայրը հասարակ արարած մըն էր եւ քանի մը անգամ առաջարկեց շարունակել մեր բարեկամութիւնը, պարզապէս իր պաղթականի օրերը քաղցրացնելու դիտաւորութեամբ:

— Մեր Ռումանիան հրաշալի երկիր է, կ'արժէ տեսնել անգամ մը: Ժողովուրդը քաղաքակիրթուած ու զարգացած է, փողոցները՝ մաքուր: Հոս ամէն ինչ քիչ մը ցիլիանական է, սակայն մնացեալը հրաշալի է: Մանաւանդ սա ձեր ազատութիւնը, բնիկը չեմ գտներ:

— Այսքան ազատութիւն շատ է մարդ արարածին համար, — պատասխանեցի դառնացած, — այսքան ազատութիւն՝ դեռ ցիլիանական բարքերը շթօթափած մարդուն համար, մտնում է միայն: Ազատութիւններն ալ պէտք է չափ մը ունենան: Հոս այնքա՞ն ազատութիւն ունին մարդիկ, ուրիշին ազատութիւնը կաշկանդելո՞ւ չափ ազատութիւն ունին, ասիկա ազատութիւն չէ, անիշխանութիւն է:

— Ապերախտ մի՛ ըլլար, եթէ դուն ալ թու մորթիդ վրայ զգայիր ինչ:

որ մենք տարիներ շարունակ գլխացինք, այն ատեն այս ազատութիւնը քեզ կը գինովցնէր :

— Քիչ մը սպասէ, — ըսի, — յուսամ օձիքդ թօթուելով չես փախչիք Լիբանանէն : Վտանահետեց թէ կը սխալէի : Ապա դրուատեց մեր ժողովուրդի ապակեկանութիւնը : Բաղդատեց լիբանանցիներն իրենց հետ ու եզրակացուց, թէ Լիբանանի պայծառ երկիրքին չափ պայծառ էր լիբանանցիներն սիրտը, բարի՛, մարդամօ՛տ, առատաձե՛ռն : Ապա աւելցուց .

— Հիմա վստահ եմ, երբ աչքերուդ կը նայիմ, գիտեմ թէ կը ղռնուլով ազնիւ արարածի մը հետ : Գիտեմ թէ կրնամ օգնութիւն հասցել ու անպատասխան չմնալ : Այս բոլորը աչքերդ կը վտանահեցնեն ինձի :

Ըսի թէ դադարեցի մը օգնելը մարդկային պարտաւորութիւն էր, մեր պարագային՝ ազգային պարտականութիւն մը, ու աւելի՛ն . Հոգեկան անսահման հաճոյք մը : Ապա, պայման է, որ կարիքաւորը դադարեցնուի ըլլայ, կարելորը օգնելու տրամադրութիւնն ունենալն է :

— Հոս վախ մը կայ, որմէ՛ զերծ էք դուք, կասկածելի մարդիկ չկան ձեր շուրջ, լրտեսներ ըսել կ'ուզեմ :

— Երբ ազատութիւն կայ, — պատասխանեցի, — այլևս լրտեսելը իմաստ չունի :

Ամբողջ շարք մը, գրեթէ ամէն օր ամբան տաքէն խոյս տալով՝ բարձրացանք լեռները, խճողուած սրճարաններու միջեւ սեղանակից եղանք, կերանք ու գինովցանք :



Մէկը լաւ ճանչնալու համար, կ'ըսեն, պէտք է հետը ճամբորդես կամ դրամի գործ ունենաս : Արդարօրէն կարելի է աւելցնել, որ միասին օդի պէտք է իմեն, որովհետև օդին ճամբորտութեան հեղուկն է, օդին կը մերկացնէ մարդու հոգին, այնպիսի՛ անկեղծութիւն ու հոգեկան հաղորդակցութիւն կը ստեղծէ, որ բոլոր պատուարները կը խորտակուին ու ո՛րքան տեսողութիւնը աղօտի, ա՛յնքան սիրտը կը պայծառանայ, զգացումները կը յստականան ու մտքերը կը պարզանան :

— Երանի՛ր թէ Միբանը հոս ըլլար, — ըսաւ Կիրակոս՝ յիշելով իր սիրասուն կիները, — շեռ գիտեք որքա՛ն ուրախ պիտի ըլլար :

Առաջին անգամն էր, որ կը խօսէր կնոջը մասին : Մինչ այդ գիտէի, որ ամուսնացած էր, մանչ մը ու աղջիկ մը ունէր, միայն այդքան :

Միտֆիի բարձունքին վրայ, պողոտայի մը անկիւնը կը հասցնէի զինք ինքնաշարժովս, քանի մը քայլով կ'իջնէր ճամբէն ցած ու կը կորսուէր տեսողութենէս :

Մակայն այդ օր, երբ օդին քիչ մը գլխուն զարկաւ, չկրցաւ ասլէսս պահել ինչ որ քանի մը օրէ ի վեր կը ծածծէր :

— Վաղը մեր սունը ճաշի պիտի դաս, — հրամայեց տիրական շեշտով մը, — անգամ մըն ուլ դուն իմ սեղանս նստիւ, պատիւ ըրէ ինձի, սուսն եկուր, դիտե՛ա, դեռ սուսն չեկար :

— Չհրաւիրեցիր, — պատասխանեցի կարճ :
— Եկուր ու ծանօթացիր կնոջս հետ, շատ կը հաւնիս, իսկական գեղուհի մըն է :

— Աստուած տիրոջը պահէ, — պատասխանեցի անհանգստացած, — Կիրակոս, կը քաւէ իմեն :

— Կը կարծես գինով եմ, բացատրեց լիահազաղ ինչպիսիով, — ես մարմնիս ծանրութեան չափ ըմպելի կրնամ կուլ տալ ու չգինովնալ :

— Բոլոր գինովներն ալ նոյն բանը կ'ըսեն :
 — Կինս անձման կին է, գիտե՞ս, երբ տեսնես՝ կը համոզուիս :
 Հակառակ թախանձանքներուս, շարունակեց խմել, խմել ու խօսիլ
 կնոջ մասին, Ռուսանիոյ ու Լիբանանի մասին, Ամերիկայի մասին ու այն-
 տեղ իրենց սպասող դրախտային կեանքին մասին :
 Այս մարդը երջանկութիւն կը հետապնդէր :

Թողած էր ծննդավայրը, կալուածները, Թողած էր իր էութիւնը լըր-
 ջապատող ամէն ինչ, բարեկամ, թշնամի, սիրելի ու ազգական, ինկած էր
 այս ափերը ու երջանկութիւն կը փնտռէր :

Ո՛ւր կը գտնուի արդեօք երջանկութիւնը, մարդուս հոգիին մէջ, թէ
 աշխարհի վրայ տեղ մը : Մտրդ երջանկի ըլլալու համար պարման չէ՞, որ իր
 մէջ կրէ երջանկութեան սերմը, որ բեղմնաւորուի կեանքի յաջող ընթացքով :

Ո՛ւր կը գտնուի արդեօք երջանկութիւնը. մարդուս սրտին վարակուած
 զգացում մըն է արդեօք, թէ ուղեղին մէջ բանտարկուած մտածում մը, որ,
 տարտամ ու թափանցիկ վարպտոյրի մը նման՝ կը փորձէ ծածկել մարդուս
 էութիւնը կլանող տաղաւորկեղու եւ մտահոգութիւններու ծրարը :

Այս մարդը, որ երջանկութիւն կը փնտռէ, ինչպէ՞ս չէ կրցած երջա-
 նիկ ըլլալ Ռուսանիոյ մէջ, երբ այնքան ջիւղ բան է իր փնտռածը : Արդեօք
 սնկե՞ղծ էր իր հիացումը, երբ այնքան յափշտակութեամբ կ'արտայայտուէր
 մեր վայելած ազատութեան մասին : Փնտռածը արդեօք ազատութիւն էր,
 թէ դրամի ու վայելքի ծարաւը կ'առաջնորդէր զինք :

Ազատութիւն կ'ուզէր : Ահա իրեն կրնայինք հրամայել տրամաբանու-
 թեան կշիռքն իսկ խախտող անասնման տգատութիւն, սակայն իր համակեր-
 պող բնաւորութեամբ պէտք ունէ՞ր ազատութեան : Ռուսանիոյ մէջ անօթի
 չէր, անկասկած հոս ալ անօթի պիտի չմնար, հոն ազատութիւն չկար, այս-
 տեղ՝ կայ, ինչո՞ւ նայուածքը սեւեռած է հեռուոր Ամերիկային, ուր ամէն
 ինչ դրամ է ու մուրհակ, մեքենայ ու պահածոյ, Տիւք-պոքս եւ սնէք-պար :
 Ամերիկան ե՞րբ կրցած է երջանկացնել իրական հայու հոգին, որ կարօտ
 ունի Արեւելքի արեւին : Կորսուած այն ահաղին ընդարձակութեանը մէջ,
 հեռու հայրենիքէն ու հայրենիքի ոտխներէն, թակարդուած թեքասի տա-
 րին ու Ալաբամայի ցուրտին միջեւ՝ հայը պանդուխտ ծիծեռնակ մըն է, որուն
 փերջնական կայանը հայրենիքն է, տառուպած, բայց կանգուն, վեհ ու հրա-
 շայի :

Այս բոլորը իր գլխուն մէջ մտցնելը այնքան ալ դիւրին չէր ու երբ
 Սիոֆիի պոզոտային անկիւնը իջեցուցի զինք ինքնաշարժէն, թերահաւատ
 էի իր քաշելու կարողութեանը վրայ : Առաջարկեցի իրեն ընկերակցիլ մինչեւ
 առուն :

— Աւելի լաւ, — ուրախացաւ, — մէկ անգամէն կինս ալ կը տես-
 նես :

Այս բոլորէն ետք, հետաքրքիր էի տեսնելու կինը, որ օդի մէջ ում-
 պի հետ աւելի կը գեղեցկանար :

Իրենց միակ սենեակին դուռը բաց էր, այնպէս որ, առանց զարնելու
 մտանք ներս : Պղտիկները պակաս էին գետինը, իսկ կինը անոնց ջով նստած
 կը կարդար :

Երբեք անհանդիստ չեղաւ, ոչ ալ յանկարծակիի եկաւ, միայն ժպտե-
 ցաւ :

— Ի՞նքն է, — հարցուց :
 — Այո, ես եմ, — հաստատեցի, — Կիրակոսը այսօր շատ խմեց,
 խնդրեմ օգնեցէք, որ տեղը գնենք :

Տիւանին վրայ երկնցուցին զինք:

Տիկին Սիրան միայն կը ժպտէր ու կը կարմրէր:

— Սուրճ մը շինէ, — ըսաւ Կիրակոս՝ գլուխը բարձրացնելով, — եւ, մա՛նաւանդ՝ մի ձգեր որ երթայ, զինք ճաշի հրաւիրած եմ:

— Պօռքերուն կարեւորութիւն մի տաք, տիկին, մա՛նաւանդ անհանգիստ մի ըլլաք, ես արդէն պէտք է երթամ:

— Անկարելի է, — ըսաւ տիկին Սիրան՝ թեւէս բռնելով ու ստիպելով, որ նստիմ, — ամուսինս ձեր մասին այնքան խօսած է, ամէն օր, ամէն օր, ձեր ազնուութիւնը, ձեր առատամեկնութիւնը այնքան զոգած է. խնդրեմ նստեցէք ու հանգիստ ըրէք, Կիրակոս հիմա ինքզինքին կու գայ, իր բարի սովորութիւնն է, շուտ կը գինովնայ, շուտ ալ կը սթափի:

Կիրակոս իրաւունք ունէր, կինը անհունօրէն զեղեցիկ էր ու խռովիչ գրաւչութիւն մը ունէր:



Ռուսանահայ բարկամիտ հոգեբանութիւնը վերուծելու բոլոր փորձերս արդիւնքի մը չէին յանգեր, յաճախ ինքզինքին կը հակասէր ու երկար մտամտութէ ետք կ'եզրակացնէի, որ դուցէ արեւելեցիի իր նկարագիրը, աղաւաղուած եւրոպական բարքերով, պատճառ կը դառնար, որ իր մէջ ստեղծուէր մեր բարքերուն ու սովորութիւններուն հակասող տրամադրութիւն մը:

Այսպէս, օր մը, կէսօրին՝ քովս եկաւ ու խնդրեց.

— Մեզի պա՛, կինս ու պզտիկներս առ ու մաշինայովդ քիչ մը պարտցուր: Ժամը չորսին եկուր, դիւ ալ առ դործատեղիէս ու երթանք նաւահանդիստ: Այսօր եղբայրս ու իր ընտանիքը կու գան նաւով:

Թէեւ ինծի համար բոլորովին անսպասելի առաջարկ մըն էր, սակայն բնաւ յանկարծակի չեկայ, պազարինով ընդունեցի հրաւերը, ու ժամը երկուքի ատենները ներկայացայ դարձեալ ըսցաւ զրան առջեւ:

Տիկին Սիրան քնացած էր գետինը, իր երկու ձաղերուն հետ:

Պահ մը տատանեցայ աչքերուս պարզուող տեսարանին առջեւ ու, նայածքս անորոշ կէտի մը ուղղելով՝ դուռը ծեծեցի:

Տիկին Սիրան արթնցաւ հանդարտ եւ իր զգլխի ժպիտով, առանց վրբան-գլուխը շտկրտելու՝

— Եկա՛ր, — հարցուց, — մտի՛ր, մի քաշուի՛ր:

Կուրծքերը դուրս կը պոթեկային զիշերանոցէն, եթէ կարելի էր գիշերանոց կոչել հազած կարճ շապիկը:

— Մտի՛ր, մտի՛ր, — թելադրեց՝ երբ տեսաւ վարանուս ու զիշերանոցին վերի մասով փորձեց ծածկել դուրս ինկած կուրծքերը՝ այս անգամ ցուցադրելով սրունքներուն վերնամասը, — մտի՛ր, սուրճ մը առնենք մինչև պզտիկները արթնան:

Ամշկոտ երեխայ մը դարձած էի, որովհետեւ մինչև սուրճին զալն ու երթալը, տիկին Սիրան յաջողած էր ցուցադրել մարմնին զանազան մտերիմ մասերը, նեղ կացութեան մը մատնելով զիս: Չգիտցայ ինչպէս խմեցինք սուրճը, ե՛րբ հագուեցուց երեսաները ու Ե՛րբ հասանք մաշինային մօտ:

Միայն պատուհանէն ներս խուժող օդն էր, որ սթափեցուց զիս: Մինչ այդ զանազան հարցումներ կը պարէին ուղեղիս մէջ: Ի՞նչ մեկնաբանութիւն տալ այս բոլորին: Ի՞նչ էր իմաստը այս մերձեցումներուն, այս հրպուստներուն ու նազանքներուն:

— Երկու շարքի՛ կ'ընէ, որ հոս ենք, — բացատրեց, — մե՛ղք որ ձե-

դի նոր հանդիպեցանք: Սակայն հաղիւ վեց ամիսէն կրնանք երթալ Ամերիկա: Մինչ այդ, վստահ եմ, կրնանք լաւ բարեկամներ դառնալ:

Մաշինան եւ առատ դրամը դիտ իշխանազունի մը աստիճանին բարձրացուցած էին իրենց աչքին: Արեւելեան Եւրոպայէն գաղթած մէկուն համար, Լիբանան Ամերիկայի դուռն էր, շողշողուն ինքնաշարժներն ու հրաշագեղ ցուցադրիչները, անհպելի տեսիլներ էին, որոնք մարմին կը ստանային ու տիկին Միրան անյազ աչքերով կը դիտէր ամէն ինչ:

Պատիկներուն հաճոյք պատճառելու համար, մայթերու սրճարան մը նստեցանք ու պաղպաղակ կերանք, ապա, տիկին Միրանին հաճոյք պատճառելու համար, դեղաբան մը մտանք ու շիշ մը փարիզեան անուշահոտ աւի իրեն համար:

Շատ լաւ տրամադրութեան մէջ էինք երկուքս ալ, երբ յանկարծ յիշեցինք, թէ արդէն ժամը հասած էր, պէտք է երթայինք Կիրակոսը առնելու:

— Ամուսինո շատ լաւ մարդ է, — բացատրեց տիկին Միրան, — լուր ու անփնա, միայն քիչ մը շատախօս է: Սակայն եղբայրը, Թորոսը, սքանչելի տղայ է, քրոջս հետ ամուսնացած է եւ պէտք է ըսել, որ երջանիկ զոյգ մը կը կաղճեն:

— Ըսել է այսօր երկուքիդ համար ալ տօն է, — ուրախացայ, — թէ՛ Կիրակոսին եղբայրը կու գայ եւ թէ՛ քոյրդ:

— Այնքան ալ ուրախ չեմ, — ըսաւ դժգոհ, — այո, եկողը քոյրս է, սակայն վստահարար մեր հանգիստը պիտի խտովեն, ըստ իրենց բարի սովորութեան: Սակայն ինչ ընենք, տանինք, քոյր է, եղբայր է, որէնք...

Կիրակոսը առինք ու, կէս ժամ ետք՝ արդէն նաւամատոյցին վրայ էինք:

Մովը կը ծփար ծուլօրէն ու «Ֆիլիս Աերճինսկի»ն դանդաղ կը մօտենար քարափին:

Կիրակոս անմիջապէս ճանչցաւ Թորոսը, որ մինչեւ մէջըը կախուած էր նաւէն:

Կեցցէ՛ թագաւորը, — աղաղակեց Կիրակոս:

Կեցցէ՛ թագաւորը, — կրկնեցին ուրիշ ուսմանահայեր, որոնք խռոնըւած էին քարափին վրայ:

Թորոսի դէմքին վրայ անսահման ուրախութիւն մը կը ճանանչէր:

— Ուշադրութիւն ըրէք, տղաք, — զգուշացուց, — կեցցէ մէյ մը վար իջնենք նաւէն:

— Կեցցէ՛ թագաւորը...

Այս երկու բառերը արտասանած տտեն, ուսմանահայը արտակարգ կրանութիւն մը կը զգար: Այս երկու դիւթական բառերը իրեն համար կը նըշանակէին ազատութիւն, անկախութիւն, առատութիւն, երջանկութիւն եւ բնականութեան դէմ ծառանայու խիզախութիւն:

— Այսօր երկու չիրա շահեցայ, — ըսաւ Կիրակոս, — երկու չիրա միայն, սակայն փնա չունի, վազը կրնամ աւելի շահիլ: Կը բաւէ, որ կարենամ պոտալ՝ կեցցէ՛ թագաւորը:

Ու, երկու թիւերը տարածելով օդին մէջ՝ շարունակեց աղաղակել.
— Կեցցէ՛ թագաւորը... կեցցէ՛ թագաւորը... կեցցէ՛ թագաւորը...



Միրելը միւտ մեղքերու շարքին դասուած է Արեւելքի մէջ: Ինչ որ կարդացած ենք դիրքերէն ու տեսած Ֆիլմերու մէջ, ինչ որ լսած ենք եւրո-
digitised by A.R.A.R.®

պական ու ամերիկեան բարձրու ժառին, առասպելներու նման անիրական թուացած են մեզի: Երկու սեռերու վայել ազատութիւնն ու անկաշիւանդ փոխարարութիւնները երազային հոգեվիճակ մը կը ստեղծեն, սիրարորը զգացումներով շարչրկուող արեւելքի պատանիին ու երիտասարդի հոգիին մէջ: Թէեւ դատակարարի մը մօտ շարք մը պատուարներ վերցուած են, որոշ ազատութիւններ ներմուծուած են մերձաւոր-արեւելեան մեր կենցաղին մէջ, սակայն շատ լաւ կը յիշեմ, Չճ տարի առաջ, շատ մը հանոյքներ արգիւրուած էին շատ մը մարդոց ու ես այդ շատերու շարքէն դուրս չէի գտնուեր, ասի-տո՞ս:

Իրենց եւրոպացիի հովերով, բուժանահայերը հրաշալի նորութիւններ մերին մեզի ու մեր ծարաւ հոգիները սպունդի նման ծծեցին այդ նորութիւն-ները:

Երկու եղբայրներն ու իրենց ընտանիքը այնքան համակրանք ու սըրտաբաց վերարերուժ ցոյց տուած էին ինձի հանդէպ, որ անմիջապէս ինքզինքս իրենց ընտանիքին մէկ անդամը սեպեցի:

Աւելի լալն սուսն մը վարձեցին քաղաքի կողմերը, իմ երաշխաւորու-թեամբս: Ընտանիքը բազմացած էր, Թորոսը, Թալուհին ու իրենց նազիկի դուստրը՝ Անժէլինան:

Կիրակոսի երէց եղբայրը՝ Թորոս, միայն իր սակաւտխօսութեամբ կը սարբերէր եղբորմէն, իսկ կինը՝ Թալուհին, Սիրանի քոյրը, քառասունի պուսններուն հասած, հաւասարակշռուած, վայելուչ ու գեղանի կին մը: Այս բոլորը, աւելի կամ նուազ չափով, արամարանական նորութիւններ էին: Ան-ակնկալը Անժէլինայի ներկայութիւնն էր:

Անժէլինա... Երազներու աշխարհէն հրաշքով մարդացած հրաշալիք մը... Անժէլինա... Գնջըլութեան, նազանքի ու գեղեցկութեան երանգներով շողախուած հիանալի նկար մը կարծես, լուսնէն կաթած լոյսի կայլակ մը... Անժէլինա... Նոր զգեստի մը չափ մաքուր, արեւելքի երիտասարդի մը խելքը զլուսնէն տանելու չափ սպիտակ, կաթնագոյն մորթով, աչքերուն կանաչ ծիածանը դեռին խոնարհած, ոսկի մազերով ու մեղրածոր շրթներով փերի մը... Անժէլինա...

— Տասնվեցը նոր վերջացուց — բացատրեց մայրը:
Կազմուած կին չէր տակաւին, սակայն վստահօրէն կարելի էր ըսել, թէ երեսայ ալ չէր, թէեւ իր իրաւունքները յաճախ ոտնակոխ կ'ըլլային մօր ու մօրաքրոջ կողմէ:

— Անժէլինան սուսն թող նստի այսօր, պզտիկներուն վրայ կը հսկէ, արդէն մաշինային մէջ տեղ չկայ:

Շարք մը չէր անցած ու արդէն ինկած էի եռակողմանի յորձանքի մը մէջ:

Այնքան սիրալիր ու համարձակ կը վարուէին հետս, որ բոլորովին ինքզինքս կորսնցուցած էի: Երբեմն, երբ կը խանդավառուէին հրաշալի նոր-րութեամբ մը, այնքան առաջ կ'երթային, որ մինչեւ իսկ կը գրկէին զիս կամ երես կը շոյէին, իրենց ամուսիններուն աչքերուն առջև:

Մինչեւ ուշ գիշեր միասին կ'ըլլայինք իրենց տան մէջ ու երբ ակամայ կը ստիպուէի մեկնիլ, ձեռքերէս ու ոտքերէս կը քաշէին, ազաչելով որ մնամ ու հոն պատկիմ:

— Վաղը էրիկ մարդիկը գործի են, — ըսաւ օր մը տիկին Թալուհի,
— ինչ լաւ կ'ըլլայ, եթէ դաս ու մեզ ծով տանիս:

Այսպիսի զգայացունց առաջարկ մը ինչպէս կարելի էր մերժել, մա-նաւանդ երբ էրիկ մարդիկը իրենց աւելի կը պնդէին.

— Յյո, այո, ձեր խօսքը չի կտրեր:
digitised by A.R.A.R.@

Յաջորդ օր ծովափն էինք: Քաղաքէն Հեռու, ամայի ու մեկուսի անկիւն մը, ուր ծովու ջրերը վճիւր էր, ու աւազը՝ մաքուր:

Լուռ պայքար մը կը մղուէր իմ ու երեք կիներուն միջև: Պայքարը սկսած էր մաշինա մտած ատեն, առջև կամ ետև նստելու պատճառաւ: Տիկին Սիրան, իբրև աւելի հին ծանօթութիւն, կը կարծէր բացառիկ իրաւունք մը ունենալ: Քոյրը աւելի Համեստ էր, իսկ Անժէյինա միայն իմ խրախոսովս կը Համարձակէր երբեմն գլուխ բարձրացնել:

Աւազին վրայ երկնցած՝ կը դիտէի ջինջ երկինքը ու կը մոյրէի մտածումներու մէջ: Գործունէութեան լայն դաշտ մը բացուած էր առջևս: Եռարած էի: Ո՞ր ծայրէն սկսէի: Դասուորելի պէտք է, նրբութիւն, ռազմավարութիւն պէտք է, տեղ մը Հասնելու Համար: Տե՛ղ մը: Ո՞ր արդեօք, քաղցր զգացումներ Համակած էին էութիւնս, կարծես կ'երազէի:

Եստ անգամ նոյն Հողեվիճակը ունեցած եմ: Դժբախտութիւններու կամ ձախողութիւններու պարագային, իրապաշտօրէն ընդունած եմ ինչ որ բախտը տնօրինած է, տակալն երջանիկ վարկեաններուս, ամէն անգամ որ վեր բարձրացած եմ կեանքի միօրինակութիւններէն, ամէն անգամ որ վերացած եմ երանաւէտ տրամադրութեամբ, թաքուն վախով մը փորձած եմ վերլուծել միշտ, իրականութիւնն է արդեօք տեսածս, դպացածս, արդեօք արթուն վիճակի մէջ՞ կ'ը շնչեմ, թէ թմրած կ'երազեմ խոր քունի մէջ թաղւած, թեև ու երես կը կամրթեմ, որովհետեւ ինչ որ կը կարծեմ զգալ, կատարեալ երջանկութիւնն է ու ես Համոզուած եմ, որ կատարեալ երջանկութիւնը միայն երազի մէջ կու գայ:

Երբ երջանկութիւնը կ'երկարի, առանց երազային չափազանցութիւններու, տակալ կը Համոզուիմ, թէ արթուն եմ, առատօրէն կը ներշնչեմ ու կ'արտաշնչեմ:

Ոտրհրդածութիւններու երկրորդ մասին մէջ կը փորձեմ բազդատութեան կց մը գտնել՝ իրական երջանկութեան ու երազներու մէջ զգացուած երջանկութեան միջև: ԱՀաւաստիկ սնափառութեան, մարդկային սնափառութեան աղաղակող նմոյշ մը: Ոտրքին մէջ ի՞նչ տարբերութիւն կրնայ ընել, երջանիկ ենք երազի՞ մէջ, թէ արթուն վիճակով, կարեւորը մեր զգացած երջանկութիւնը չէ՞, արդեօք վկանե՞ր պէտք է ըլլան միշտ, որպէսզի մեր երջանկութիւնը իմաստ մը զգենու:

Կեանքը երկարատև երազ մըն է... Փիլիսոփաներն ու քանաստեղծները Հազարաւոր անգամներ կրկնած են, դարերէ ի վեր, ուրեմն այնքան ալ կարեւոր չէ Հաստատել, թէ ինչ որ կը պատահի, արթուն վիճակի մէջ է արդեօք, թէ երազի: Ճշգրիտ չ'արժեք:

Աւազին վրայ երկնցած՝ կը դիտէի ջինջ երկինքը ու կը սպասէի: Ինձի Համար, իսկական երջանկութիւնը, այդ սպասումին մէջ էր, երջանկութիւնը նախորդող այդ վայրկեաններուն, երբ տակալին կարելի էր պատահելիքը դասուորել երեւակայութեանս առաւելագոյն կարողութեամբ, վառ, խօսուն ու կենսունակ: Սոցաւումը որքան քաղցր է, երբ պիտի պտղաւորուի կլեմով մը, երբ անպայման պիտի կատարուի, ինչ որ ծրագրուած է:

Երբ իրենց ծովազգեստներով դուրս եկան ժայռերու ետևէն, ինձի Համար սկսաւ Հազար ու մէկ Հրաշալի ցերեկներու առաջին Հրաշալի ցերեկը: Երեք տարիքի կիներ, ամէն մէկը եղական իր տեսակին մէջ, դիմք բռնեցին դիմացս ու խնդրեցին, որ իրենց մարմինը օժեմ իւղով, արեւուն զէմ պաշտպանուելու Համար:

Պէտք է ըսել, որ առանց ինքզինքս կորսնցնելու կատարեցի օժեմն արարողութիւնը, ձեռքերս երեք չղողացին, երբ միտքս կը շարժուէր...

Գուցէ մարմինս ցնցող սարսուռը յաճախ Հաղորդուեցաւ իրենց մարմնին, սակայն կացութեան Հանդիսաւորութիւնը երբեք չզոհեցաւ:

Երբ երեքն ալ օծուեցան իւրով, յայտնեցին, թէ կարող ինծի Հասած էր ու պէտք էր ես ընտրէի, թէ երեքէն ո՞ր մէկուն պիտի վիճակուէր դիտ Հաճոյցնելու պատիւը:

Չեմ գիտեր ինչու բնաւ ինքզինքս չկորսնցուցի: Շատ արագ, մտքիս մէջ բաղդատեցի կարելիութիւնները, զգացի թէ ճակատագրական որոշում մը կրնար ըլլալ վճիռս, Հաշուեցի թէ Հաւանական բարդութիւններ կրնային ծագիլ ու պէտք էր սթրաթեժի մը յղանալ:

Նախատրուութիւններ ունէի, նոյնիսկ ապագայ զործունէութեան ուղիքի մը պատրաստեի էի, սակայն աւելի խոհեմ դասեցի ծրագրիներս չըհրապարակել ու Հանդիսաւորապէս յայտարարեցի.

— Երեքդ միասին...

Անիշխապէս մարմինս երեքի բաժնեցին ու զործի լծուեցան:

Վիզո եւ ուսերս յանձն առաւ Անժէլինան, կռնակս ու մէջքս՝ տիկին Քազուհին, իսկ մտացեալը՝ տիկին Սիրան, եւ պէտք է ըսել, որ աւելի արդար կարգադրութիւն մը չէր կրնար ըլլալ, եթէ մեկնէինք իրաւունքը զօրաւորին է տրամարանական սկզբունքէն:

Բաւական իւր վատնեցին...

Լուս էին ու նայուածքները խոնարհած: Ամէն մէկը ի՞նչ կը մտածէր, չեմ գիտեր, սակայն այդ պահուն մէջս ստակալի պայքար մը կը մղուէր: Իրենց դիւթական մատներուն ու ակներուն տակ մարմինս կը սարսուտար, արիւնս կ'ետար ու կը բռնկէր աննկարագրելի շերտութեամբ:

Յանկարծ զգացի, որ այնչես անկարող էի դիմանալ, դերմարդկային ճիգ մը ըրի ինքզինքս զսպելու, չկրցայ եւ, ընդոտտ, առանց խօսք արտասանելու, ոտքի ցատկեցի ու վազեցի խոռվքս յանձնելու ծովու վճիռ ջուրերուն: Պէտք է ըսել, որ յանկարծական խուսափումս բարերար ազդեցութիւն զործեց բոլորիս վրայ, քանի որ ի վերջոյ յանգեցանք այն կարակացութեան, որ սկզբունքով լողալու եկած էինք ու պէտք է առիթէն օգտուէինք:

Մովը Հանդարտ էր՝ աւազանի մը նման, ու ալիքներու թեթեւ կորուսթիւնները Հազի կը նշմարուէին ծփացող ջուրերուն վրայ:

Անժէլինան կը խնդրէր, որ լողալ սորվեցնեմ իրեն ու դոյզն առիթն իսկ կ'օգտագործէր ինծի փաթթուելու եւ պաղ ջուրին մէջ իր մարմինին տաքութիւնը ինծի Հաղորդելու Համար: Տիկին Սիրան ձեռքերէս կը քաշէր, յաճախ ծովուն յատակը կը սուզուէր, սրունքներուս արանքէն կ'անցնէր, մտերիմ Հպումներով գիտ զրդուելու Համար, իսկ տիկին Քազուհի միայն ալքերով կ'ուզէր Հասկցնել, թէ ինք ալ պատրաստ էր, ու կամաւոր՝ իր մրցակիցներուն չափ:

Յաճախ խօսքի ծուէններ կը նետուէին օդին մէջ.

— Ի՞նչ մկաններ ունիս, — կը սրանշանար տիկին Քազուհի:

— Շատ Հաճելի է, ամէն օր դանք, — կը թախանձէր Անժէլինան:

— Չըսի՞ր թէ մեր Հանգիստը պիտի խոռվեն, — կը մուտար տիկին Սիրան:

Յաջորդ օր, կէսօրէ ետք, կիրակոս եկաւ քովս, փոխանցելու Համար կանանց Հիացմունքն ու Հնորհակալութիւնը այն Հաճելի օրուան Համար, որ միասին անցուցած էինք ծովափը: Անջերմութիւնը ըրաւ անոնց խանդավառ խօսքերէն, կարակացութիւններ Հանեց անշահախնդիր ու ասպետական կեցւածքէն ու աւելորդ անգամ մը եւս շեշտեց, զգացուած ու երախտապարտ, իր Հիացմունքն ու յարգանքը, ինծի պէս պարկէշտ եւ ուղղամիտ Հայ երիտասարդի մը Հանդէպ:

Քառերու հետ կը խոզար: Լիզուին ծայրը բան մը կար ու ես մտա-
ւորապէս գլտէի լսելիքը:

— Այսոր միայն մէկ լիրտ շահեցայ, — ըսաւ յանկարծ խեղճանալով, —
միայն մէկ լիրտ, գիտե՞ս: Այս մէկ լիրտով ինչպէ՞ս պիտի տանք տան ամ-
սական վարձքը, ջուրի, հլեկարականութեան, ուտելիք եւ հագնելիքի
դրամը:

— Վնաս չունի, Կիրակոս, — մխիթարեցի, — վաղը կընաս աւելի
շահիլ:

— Ձեռ գլտեր, — ըսաւ յուսահատ, — գուցէ վաղը մէկ լիրտ ալ չլա-
հիմ: Բայց կ'աղաչեմ, մտիկ ըրէ, քեզի խօսելիք ունիմ:

Յայտնեց, թէ յիսուն-վաթսուն լիրտի պէտք ունէր, մանր-մունր
գնումներ ընելու համար: Չուզեց ըսել, թէ ինչ պիտի բլլային գնելիքները,
սակայն մատահեցուց, որ եթէ կարենայի փոխ տալ իրեն այդ գումարը, կը
խոստանար քանի մը օրէն անպայման վերադարձնել:

Անշուշտ առաջին անգամ չէր, որ այդպիսի առաջարկ մը կ'ըլլար
ինծի, Կիրակոս, տարբեր առիթներով ալ ըրած էր նման խնդրանքներ, սա-
կայն պահանջուած գումարը ոչ մէկ ատեն հինգ-տասը լիրտին աւելի եղած
էր: Աւելորդ է ըսել, թէ ոչ մէկ անգամ յարգուած էին վերադարձնելու խոս-
տումները:

Մամանակի ընթացքին, ո՛րքան մեր յարաբերութիւնները սերտացան,
ա՛յնքան աւելցան փոխառութիւնները: Դարձած էի ընտանիքին մէկ անդամը
ու առանց իմ կարծիք տանելու, տան մէջ ոչինչ կը կատարուէր:

Յերեկը, երբ էրիկ մարդիկ գործի կ'ըլլային, թուլատրուած էր ինծի
այցելել կանանց, տիկիներուն ու օրիորդին որպիսութիւնը հարցնելու, ու-
տելու, սուրճ խմելու, եւ քիչ մը մրսփելու համար: Սուրճի գաւաթը հրա-
շախ գազանիքներ երեւան կը հանէր ու կարծես կը գծէր հետեւելիք ճամ-
բաս: Ասիկա տիկին Սիրանին մասնագիտութիւնն էր: Տիկին Թադուհին
գուշակութիւններ ու թելադրութիւններ կ'ընէր արիւս մէջ նայելով, իսկ
օրիորդ Անտէլինան խաղաքարթերու օգիտութեան կը դիմէր, զիս հազորակից
դարձնելու համար պատահելիք հրաշալի դէպքերուն:



Քառասունը խորհրդածութեանց տարիքն է:
Քառասունին մարդ պահ մը կանգ կ'առնէ, յետադարձ ակնարկ մը կը
նետէ անցեալին վրայ ու եզրակացութիւններու կը յանդի:

Քառասունը ճշմարտութեան տարիքն է:
Իմաստուն մարդուն համար քառասունը վերջաւորութեան օկզրնու-
ւորութիւնն է: Նաւահանգիստը հորիզոնին վրայ է, տակաւին հետու, սա-
կայն միշտ տեսանելի:

Քառասունը վայելչութիւն օկիզրն է:
Անցեալը գառն իրականութիւն մըն է, սրուն ցայտուն գիծերը զար-
մանալիօրէն կը շնչուին քառասունին, սէք, հարստութիւն, դժբախտա-
թիւն, յաջողութիւն, ճախողութիւն գուրս կը խոյանան անցեալին անպա-
ճոյճ տափակութիւնն ու ծանր կը կշռեն քառասունի նժարին մէջ:

Քառասունը հաշուեյարգարի տարիքն է:
Ամէն մարդ իմաստուն չէ, բարեխախտարար: Կատարեալ մարդը,
աշխարհը պիտի վերածէր ճապաղ դրախտի մը, որուն չկրցան հանդուրժիլ

նոյնիսկ Ազատն ու Եւան, անդէտ նախամարդիկը: Առանց ատելութեան, կերբի ու արհամարհանքի կրնա՞ր սէրը հմայք մը ունենայ:

Ու քառասունի դուռներուն առջեւ, աիկին Քաղուհի կը մղէր իր պայքարը, լուս՝ բայց հետեւողական, թաքուն՝ բայց կատաղի: Կեանքի ընթացքին անհամար հաճոյքներ բեղմնաւորած էին իր սիրտը, սակայն աւելի երիտասարդ մրցակիցներու դիմաց կ'ուզէր զգացնել ինծի, մո'նտաանդ ինքն իրեն, թէ վերջաւորութիւնը դեռ հետու էր, եւ նոյնիսկ կարելութիւն կար նոր զլուխներ բանալու:

Այդ օր, երբ յետմիջօրէին Հանդիպեցայ իրենց, առանձին էր:

Գուռը բացած ատեն, արդէն աչքերուն մէջ կարդացի խանդավառ ուրջ մը:

— Բարի եկար, — ըսաւ, — լաւ որ եկար:

— Ո՞ր են, մէկը չկա՞յ:

— Ես կամ, — պատասխանեց, — առիթն է, որ անգամ մըն ալ ուշադրութիւնդ իմ վրաս դարձնես:

Ժպտեցայ: Կը սպասէի այս առաջարկին, սակայն աւելի ուշ, ատենուզն նստելի ու քանի մը խօսք փոխանակելէ ետք:

— Ուշադրութեան բոլորիդ վրայ է, — ըսի՝ այնպէս ձեւացնելով, թէ չէի հասկցած իր միտքը — ճիշդ պիտի շինայիմ՝ Լիրանանէն ձեր անցքը հանելի դարձնելու համար:

Ժպտեցաւ ու հրաւիրեց, որ նստիմ: Բացատրեց, թէ ինք երկար ատեն մտածած էր ու յանգած այն եզրակացութեան, որ պէտք է սրտբայ ու համարձակ խօսէր ինծի իր առաջադրութիւններուն մասին, որովհետեւ, ըստ իրեն, ես չափազանց համակրելի ու լուրջ երիտասարդ մըն էի ու կ'արժէր արկածախնդրութեան մը մէջ նետուիլ հետս:

— Ես աղատութիւնդ ընաւ պիտի չկաշկանդեմ, — աւելցուց ժպտելով, — միայն կը ցանկամ, որ ինծի ալ բաժին մը Հանես խնճոյքէն:

Ազլած էի: Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով կը Հանդիպէի այսքան համարձակութեան: Կարմրած էի ու նայուածքս դեպիս սեւեռած:

— Ի՞նչ խնճոյքի մասին է խօսքդ:

— Բաներ կան, որոնք բացայայտօրէն չեն տեսնուիր, սակայն կը զգացուին, — ըսաւ բուռերը հասիկ-հատիկ արտասանելով, — այնքան պարզամիտ մէկը չեմ, հաւատալու համար, թէ Սիրանին հետ յարաբերութիւններդ զազտնի ծալքեր չունին:

— Ինչե՞ր կ'ըսես, — ըսի դարձեալ կարմրելով, — այնպէս կը տեսնեմ, որ զիս կատարեալ Տոն ժուանի մը տեղ դրած ես: Կը սխալիս, սիրելիս, կրնամ համարձակօրէն բռնի, որ մեր յարաբերութիւնները եղած են զուտ բարեկամական:

— Իսկ քանի մը համրոյրն ու մնացեալը մեր բարեկամութիւնը թըշնամութեան պիտի վերածէին, — ծիծաղեցաւ, — թէ պիտի ծառայէին աւելի սերտացնելու բարեկամութիւնը: Ես համոզուած եմ, որ ամէն երիտասարդի մէջ Տոն ժուան մը կայ: Իսկ կ'ընդ պարտականութիւնն է այդ Տոն ժուանը գրգռել ու սպասել, յուսալ:

— Ես քեզ շատ լուրջ ու խոհեմ կ'իմ մը կը կարծէի, — ըսի՝ օւռելի կարմրելով:

— Ինչո՞ւ, արդեօք անընթաց անընթաց նշմարեցի՞ք վրաս:

— Կը ներես, ձեր խօսքերը դուրս դարձուցին, նոյնիսկ հիմա շուտաբան եմ, չեմ դիտեր ինչ ընեմ, ինչ խօսիմ:

Գորովստ ժպիտ մը ունէր աչքերուն մէջ: Աւելի մօտեցաւ ինծի: Ըսաւ թէ օւռելի պարկեշտ կը համարէր անկեղծ ըլլալ ու յայտնել զպացումները:

— Եթէ անպարկեշտ ըլլալի — աւելցուց՝ ձեռքը ուսիս դնելով, — հիմա վրադ կը նետուէի ու կը բզկատէի քեզ, մինչդեռ կը տեսնես, նախաձեռնութիւնը յեղի կը թողում:

Եւ մած էի: Նայուածքս դեպի սեւեռած՝ կը մնայի անշարժ: Կը դոռոյտի յանկուցիչ սարսուռով մը ու դէմքիս վրայ կը գլխալի իր Խաբ շունչը:

— Ինչո՞ւ լուռ կը մնաս, — հարց տուաւ ընթրօրէն, — արդեօք կորոսընդուցած եմ կանացի հմայքս, թէ ղէմքս ու մարմինս դիւր շնն զար քեզի:

Ես դեռ կը մնայի լուռ, շփոթ ու վերացած: Ձէի գիտեր ինչ պատասխանել, ինչ ընել:

— Ո՛հ, — ըսաւ վիրաւորուած, — չեմ գիտեր այս լուսթիւնը ինչ բանի վերագրել: Աւելի լուռ չէ՞ր ըլլար, եթէ իսկական էրիկ մարդու մը պէս երեսիս ըսէիր, որ հանդիսա թողում քեզ:

Նայուածքս իրեն դարձուցի:

— Հոս Լիրանան է, — փոփոսցի, — ինչպէս որ դուք Ռումանիոյ մէջ քաղաքականութեան մասին ցած ձայնով կը խօսէիք, մենք նոյնը կ'ընենք Լիրանանի մէջ, երբ հարցը տրոյ մասին է: Պէտք է աւելի դուսպ ըլլալի, որպէսզի յանակարծակիի դալով հաւասարակշռութիւնս չկորսնցնէի: Սակայն ըսուածը ըսուեցաւ ու լա՛ւ որ ըսուեցաւ:

Գրկեց գիտ ու պինդ սեղմեց կուրծքին:

— Անօթի, աճչկոտ ու հպարտ տղաս, — ըսաւ մատները մխրճելով մազերուս մէջ — յուսախար չեմ ընէք քեզ, երբ ինծի յանձնուիս:



Տիկին Թագուհիին գործ մը կարգադրեցինք: Ետպկազործի մը քով, օղակներ պիտի շինէր: Թէ՛ն արհեստով մանկերի էր, սակայն նկատի առնելով վճարումի սակաւութիւնը ու գործատեղիին հեռաւորութիւնը, աւելի ձեռնտու սեպեցինք օղակազործութիւնը: Անժէլիան աւտուն դպրոց կ'երթար, անգլերէն սորվելու, այնպէս որ, տիկին Սիրան առանձին կը մնար սունը, մինչեւ կէսօր:

Ես, ժամը չորսի ատենները կը հանդիպէի իրենց ու կը մնայի մինչեւ ուշ գիշեր: Սակայն իրիկուն մը, երբ տիկին Թագուհիին հանդէպ մասնաւոր ուշադրութիւն ցոյց տուի, տիկին Սիրանի տրամադրութիւնը այնքան ինկաւ, որ ամբողջ գիշերը հետո չխօսեցաւ: Միայն մեկնումիս պահուն ընկերացաւ ինծի մինչեւ դուռը ու կամացուկ մը փոփոսց ախանջիս:

— Վաղը աւտու անպայման հանդիպէ, կարելոր ըսելիք ունիմ:

Առաւօտուն կանուխ ներկայացայ տիկին Սիրանին: Տխուր էր՝ երբ դուռը բացաւ, ու սակաւահաս՝ առաջին ըստորդ ժամը, մինչև որ ես ուզուակի անցայ նիւթին:

— Կանչեցիր եւ եկայ, — ըսի կտրուկ, — ի՞նչ բանի համար էր:

— Ի՞նչ է ուզածդ, — հարցուց տակաւին ջղայնացած, — գիտ ճաթեցնէ՞լ կ'ուզես:

— Ձեմ հասկնար, — ըսի գարմացած:

— Ի՞նչ գէշութիւն ըրի քեզի, որ այդպէս կ'արհամարհես զիս, հետո չես խօսիր ու, աւելի՛ն՝ այդ քած քրոջ հետ բացէ ի բաց կը սիրաբանիս: Ես գիտէի, որ այսպէս պիտի ըլլար, որովհետեւ չուզեցի մէկ անգամէն սիրտ բանալ, ըսել՝ ինչ որ կը զգայի քեզի հանդէպ, ա՛յս պիտի ըլլար վերջաւորութիւնը:

Յաճախ հայելիին նայած եմ: Տրսխոմայէն պզտիկցած աչքեր ունիմ, Հաստ չըթնիր ու քիչ մը դէպի աջ թեքած քիթ մը: Ականջներս ձեւաւոր են, սակայն դէմքիս ամբողջութիւնը քաղցրական ոչինչ ունի կը կարծէի ու առիկա ինծի տեսակ մը բարդութիւն կու տար: Մտնաւոր հարստութիւն ալ չունէի, ու մաշինաս հասարակ մաշինա մըն էր: Գլուխս կու տայի, թէ՛ այս մեղունները արդեօք ինչպիսի՞ Կիւթ կը յուսային ծծել ինծի պէս անպստոյճ ծաղիկէ մը:

Մական սիրային պոռթկումներու այս խաւածեւումը իր ընդհանուր գիծերուն մէջ անակնկալ մը չըլլալով հանդերձ, իր դրսեւորուելու եղանակով կը շփոթեցնէր զիս: Այս պատճառաւ էր, որ միայն կարճ, կտրուկ ու տարտամ նախադասութիւններով կը պատասխանէի:

— Պապանձեր ես, — պոռայ աւելի ջղայնացած, — քրոջս ներկայութեան պլուզ կը կտրիս, իօկ հիմա որ առանձին ենք, պապանձեր ես: Բացէ ի բաց ըսէ, արդեօք վանողական բան մը կա՞յ վրաս, թէ՛ քոյրս պայմաններ դրած է ու իօսք առած է քեզի՞, որ չմտնեաս ինձի:

Հագին բերանս կը բանայի, դինք հանդարտեցնելու համար, բայց ինք թոյլ չէր տար ու կրկին կը սկսէր հարցումներու ու ենթադրութիւններու շարանը:

— Արդեօք առանց գիտնալու վիրաւորեցի՞ք զեզ, ըսէ, — Հարց տուաւ, — այդ պարագային ներողութիւն կը խնդրեմ: Սակայն որքան որ դիտեմ, միայն հիացմունք ու դորով արտայայտած եմ քեզի հանդէպ, չես կրնար հակառակը ըսել:

— Ի՞նչ է ուզածդ:

— Ուզածս, — զարմացաւ, — ուզածս...

Անշուշտ դիտէի ինչ էր ուզածը, այնպէս որ, ներածութիւնը շատ կտրճ եղաւ, շուտով անցանք բուն նիւթին, որ նոյնպէս կարճ էր, սակայն զգայալուց: Վերջաբանին մէջ աչքէ անցուցինք ընդհանուր կացութիւնը, ախտանք արձանագրեցինք կորուսած առիթներուն համար եւ խոստումներու ու երդումներու տարափոխ մը բացինք բազմիքին դուռը ու ներս մըտանք:

Տասը վայրկեան ետք, երբ անուշահոտ օճառին թարմ բոյրը դեռ կը յամենար սենեակին մէջ, յանկարծ դուռը բացուեցաւ ու ներս մտաւ Կիրակոս:

— Ո՛հ, սիրելի բարեկամս, — աղաղակեց ուրախ ժպիտ մը դէմքին, — Աստուած զրկեց զեզ կարծես: Այսօր դործ չունինք, ես ալ ըսի, գամ Սիրանը առնեմ ու ապա զեզ փնտռեմ: Գիտե՞ս, Զարիէ ըսուած սեղ մը կայ եղեր, Հոն երթանք, ծախսը կը բաժնուինք:

Պատյաի բոլոր առաջարկները կը վերջանային ծախսը կը բաժնուինք յանկերդով: Նորութիւն մը չէր: Մտիսը բաժնուելու հարց չէր կրնար ըլլար, որովհետեւ քանի մը վայրկեան ետք, յուզարկաւորի դիմակ հազած, Կիրակոս կ'իմացնէր, թէ կա՞մ ջուրի, կա՞մ ելեկտրականութեան եւ կամ տան վարձքի գումարը պէտք է անպատճառ ճարէր, ու իր շահած քանի մը լիրայով անկարելի էր հասնիլ այդ բոլոր ծախսերուն: Ապա զնքընթացքով կ'իմացնէր, թէ միայն մէկ հոգիէ կրնար անվարան փոխ ուղել այդ գումարը ու չմերժուիլ, եւ թէ՛ այդ միակ անձը ես էի: Ապա, բարոյախօսի պէս կ'եզրակացնէր.

— Մինչև մեր կեանքին վերջը ես ու Սիրանը պիտի լմուանք քու անկեղծ բարեկամութիւնդ:

Այդ բոլորին պատրաստուած էի: Զուրը, էլեկտրականութիւնը, տան

վարձքը, բոլորը ես կը վճարէի ու խորքին մէջ բնաւ ինքզինքս անխրաւուած չէի զգար, որովհետեւ, ս՛հ, դեռ օճառին բոյրը կը յամենար սենեակին մէջ, ձեռքերուս ու սրունքներուս վրայ, ս՛հ, այդ բոյրը...

*
*
*

Ամէն անգամ, որ Գիրակոս պատրուակ մը ստեղծէր ինձմէ դրամ կոր- զելու, տան մէջ մենաշնորհներս քիչ մը եւս կը շնչատէին:

Մերային կայութիւնս ալ շատ լաւ վիճակի մէջ էր եւ պէտք է ըսել, որ տիկին Սիրան ու տիկին Թադուհի իրտախառնութիւն ցոյց կու տային ու ես կարելի եղած շահով կը գոհացնէի ընտանիքին կարիքները: Պայ- քարը դադարած էր երկու քոյրերուն միջեւ, ամէն ինչ դարձած էր բնական:

Ամէնէն անտեսուածն ու անխրաւուածը Անժէլինան էր:

Այսպէս, երբ օր մը ճամբան դիպումսով իրարու հանդիպեցանք, քաղցր ու զուսպ ժպիտով մը դիմաւորեց զիս ու արտասանեցով իմացուց, որ իրեն հանդէպ հետաքրքրութիւնս պակասած էր:

— Առաջ տարրեր էր, — ըսաւ, — երբեմն ինձմով կը զբաղէիր: Սա- կայն աւելի գործնական յանձնառութիւններու մէջ կորսուած ես կ'երեւի ու ես ամենեւին չեմ մեղադրեր քեզ:

— Ճիշդ կը խօսիս եւ իրաւունք ունիս, — պատասխանեցի, — առա- ջին ցանկութիւնս դուն էիր, սակայն առիթները պակսեցան: Աւելին՝ հե- տաքրքրական խալաճեւումներ ներկայացան:

— Ձիս չիմենա չե՞ս հրաւիրիր:

Պահ մը լուռ մնացի: Պարծես զղջաց ըրած առաջարկին համար ու կարմրեցաւ:

— Միրով:

— Պաղպաղակ մը ուտենք:

— Ուտենք:

— Յետոյ զիս քիչ մը պտըտցուր մաշինայով:

— Պտըտցնեմ:

— Միտն ես ու դուն, առանձին:

— Ես ու դուն, առանձին:

Պարծես հեքիաթի մը մէջ կ'ապրէի: Ձէի կարծեր, որ ամէն ինչ այս- քան դիւրութեամբ պիտի կարգադրուէր: Յանկարծ ցաւեցայ, որ ինչո՞ւ այսքան ժամանակ վատնած էի, ինչո՞ւ չէի համարձակած ուղղակի եր- ջանկութիւնը ըմպել ակէն, ինչո՞ւ երկշտ քառուած էի ամէն անգամ, որ առիթը ներկայացած էր:

— Պաղպաղակ կերանք ու չինեմս կացինք, — ըսաւ՝ մայրն ու մօ- րաքոյրը ճաթեցնելու եղանակով, — վերջն ալ պտոյտ մը ըրի՞նք:

— Լաւ, լաւ, — պատասխանեց տիկին Սիրան՝ կասկածոտ նայուածքը ինձի դարձնելով:

Անժէլինա երկար շունչ մը քաշեց ու տպաւ շարունակեց երջանիկ ժը- պիտով մը:

— Վաղը նորէն պիտի երթանք...

Այդպիսի հարց դոյութիւն չունէր, սակայն կ'երեւի բուսական ներ- շնչուած էր ինքնազատաւորութեամբ, այսպէս համարձակօրէն յայտարարելու համար բան մը, որուն մասին իտասած չէինք: Ձէի կրնար զինք յուսաբար ընել, մա՛նաւանդ չէի ուզեր, որովհետեւ, ինչ որ ինք հրապարակաւ ըսաւ,

ևս, անսահման երջանկութեանս մէջ՝ ժողոված էի առաջարկելու, երբ վերադարձի ճամբուն վրայ կը գտնուէիք:

Յաջորդ օրուան ժամադրութեան, յուսարարութեամբ նկատեցի, որ Անժէլինա դարձած էր աւելի զուսպ ու սակաւախօս, կը զգայի, որ մեր միջև պատենչ մը սուղծուած էր: Ակնէրէս էր, որ մայրն ու ժօրաքօյրը անմիջապէս հակադրած էին: Գուցէ թելադրութիւններ ըրած էին, խրատած էին, կրնային մինչև իսկ սպառնացած ըլլալ, ընդունելով հանդերձ, որ չէին կրնար ներդաշնակ զիս, վերաւորել իմ փափկասուն արժանապատուութիւնս:

Մեքծեքուծները պայմանաւորուած էին, քայլ մը առաջ կ'երթար ու քայլ մը ետ, քանի մը վայրկեան կը խօսէր ու ապա կը լռէր, պահ մը կը դուրսընար ու ապա կը տիրէր: Հաղորդական կը դառնար ու յանկարծ կ'այլափոխուէր՝ յուսահատութեամբ վարակելու համար բոլոր նախածեռնութիւններս:

Այս ալ սթրաթեճի մը, ժտածեցի:

— Ի նշ ընելու եկար այսօր, — հարցուցի Հետաքրքիր:

Անմիջապէս շարտասխանեց: Պահ մը մտածեց ու ապա՝

— Չէ՞ որ երէկուրէն համաձայնած էիք, որ այսօր պիտի պտըտցնես զիս, — ըսաւ, — ինչ յաւ է այսպէս, նայէ, այնքան արագ է ինքնաշարժը, որ ճամբու եղբորի ծառերը չիմ կրնար համբել:

— Ուրեմն ծառերը համբելու եկար, մուտանիտյ մէջ կ'երեւի ծառերը համբելով ժամանակ կ'անցընէիք ու կը զուարճանայիք:

— Ինչ խնթի ես, պզտիկ սխալ մը, որ բռնես, կ'ուզես անմիջապէս ծիծաղել ու քննադատել:

— Եթէ դիտեմ, թէ որու հետ կը խօսիմ, գուցէ կարենամ հասկացողութեան դալ հետդ: Ըսէ ինձի յստակ. մե՞ծ աղջիկ ես, թէ փոքր:

— Մեծ աղջիկ եմ, քանի անդամ ըսած եմ, — պատասխանեց մեքենարար ու վերաւորուած, — մե՞ծ աղջիկ եմ:

— Ո՛չ, դուն դեռ փոքր ես, պէտք է աւելի զգոյշ ըլլալի ու անմիջապէս չխանդավառուէի խօսքերովդ, — ըսի, իմ կարգիս զլուխս պատուհանին դարձնելով, — թերեւս մայրդ ու ժօրաքօյրդ իրաւունք ունէին, երբ կը զգուշացնէին քեզ:

— Մայրս ու ժօրաքօյրս իրենց դարձին թող նային, — ջղայնացաւ, — ես մեծ աղջիկ եմ ու աղատ եմ ուզածս ընելու:

— Իսկ ի՞նչ է ուզածդ հիմա:

— Ուզում եմ, — հարց տուաւ շուտրած, — ոչինչ մասնաւոր, ամէն ինչ եւ ոչինչ, ամէն ինչ որ կրնայ հաճելի թուիլ ինձի եւ քեզի միտմտաւորակ, հաճոյք եւ ժամանց:

— Այսինքն ի՞նչ, — պնդեցի, — աւելի յատկօրէն ըսէ:

Վայրկեան մը ինքնամփոփուեցաւ ու ապա պատասխանեց.

— Հաճոյք եւ ժամանց, պաղպաղակ, շինեմ եւ մալինա, երբ ու երևակայութիւն, լեռ, ծով, ծառ ու տեսարան, հաղուստ, նուէր, ծափ ու ծիծաղ:

— Տեսա՞ր որ տակաւին մանուկ ես, մենք օտար ենք իրարու: Հաճոյքը մեզի համար նոյն տեսիլը չէ, քու փնտտած հաճոյքներդ խորթ են ինձի:

— Ինչո՞ւ, պաղպաղակ չի՞ս սիրել, — ծիծաղեցաւ:

— Լըջայի՛ր ու ըսէ հիմա, թէ ինչ պէտք է ընենք: Վերադառնա՞նք:

— Ո՛չ, ո՛չ, տար դիս ո՛ւր որ կ'ուզես եւ ըրէ ի՞նչ որ կ'ուզես, խօսք կու տամ, որ մեծ աղջիկ պիտի ըլլամ:

Ի՞նչ էր իմ ուզածս, հարց կու տայի ես ինձի, արդեօք յատկօրէն

գիտէի՞, որպէսզի կարենայի բացատրել իրեն: Իր մէջ փնտաւս էզը չէր միայն, զբարոյի կերպով իրարմէ անջատուած իր ծունկերը չէին, իր ժարմինին ժաքամաքուր սպիտակութիւնը չէր, իր մեղրանոց շրթները չէին, այդ բոլորը ամէն վայրկեան կրնայի դռնել իր ծօր ու ծօրաքոյ զով: Ես ծարաւ էի իր տեսքին, իր տասնվեց տարիքին, իր ժաքութեան ու նիհարութեան, որովհետեւ այս նրբակերտ պարժանուհին զիս կը վերադարձնէր իմ տխուր ու մենակեաց պատանեկութեանս, հին երազ մըն էր, տնցեալ անկատար մըն էր, որ ջազը ներկայի ու արբեցնող ապանիի կը վերածուէր, կրկներեւոյթ մը՝ որ թակարդուած էր զրկիս մէջ, Անտէլիան Աթրոտիթէն էր, սիրազեղ պարիկ մը, որ իր դիւթիչ նայուածքով զիս վերադարձուցած էր տասնվեց տարեկանիս:

Այս բոլորը իրեն բացատրելը զուցէ շատ դժուար ըլլար, սակայն կը ֆանայի լուսութեամբ ու ինքնամոհոմոմով տպաւորել զինք, ֆանալով հազորդակից դարձնել իր հոգին, էութիւնս ալեկոծող փոթորիկին:

- Այս վայրկեանին ի՞նչ կը զգաս, — հարց տուի վերայում:
- Ոչինչ, — պատասխանեց անհոգ, — օշինչ եւ տպուշ նայուածք:
- Շփացած, — զայրացայ, — անզգայ եւ տպուշ:
- Ինքնաշարժը կէցուցի ճամբու եզրին, ու՝
- Իջի՛ր, — հրամայեցի, — ինքնաշարժը յոցնեցաւ, սկէտք է քիչ մը

հանգստանայ:

Յանկարծ լրջացաւ, ու սարսափած եղնիկի իր նայուածքով նայեցաւ ինծի ազայական:

- Կը նեղուի՞ս, եթէ մաշինային մէջ մտամ:
 - Իջի՛ր, — պնդեցի, — իջի՛ր եւ հետեւէ ինծի:
- Բաւական բարձրանայէ հոսք, կանգ առի, մինչեւ որ հասաւ ինծի: Յողանձ՝ կը հեւար: Անքա երկնցուցի իրեն ու մինչեւ բլուրին դադարէր, արդէն հանդարտած էինք:

Հսկայ մայրիկի մը տակ նստեցանք, մեր նայուածքը յառած պարսպին, անխօս ու մտաշիր:

Դիմացի լեռներուն վրայ այծեր կ'արածէին ու կը լուսէին միայն հովիտին ցասկոտ կանչերը, որոնք կարգի կը հրաւիրէին յանդուգն շորքուսանիները:

Ամառութիւնը ցազցր տրամադրութեամբ կը համակէր էութիւնս ու ես յուշիկ մօտեցայ իրեն:

- Ձէ՛, չէ՛, շեմ ուզեր, — ընդդիմացաւ, ազատ ձեռքով հրելով զիս, — եթէ մայրս իմանայ, շատ կը նեղուի:
- Ես թու մայրդ... — հայհոյեցի ջղայնացած, — մայրդ ի՞նչ գործ ունի հոս:

— Եթէ պիտի ջղայնանաս ու հայհոյես, — պոռաց՝ ձեռքէս ազատուելով, — աւելի լաւ կ'ընես, եթէ զիս տուն վերադարձնես:

Ես հսկայ մայրիկի կոթնեցայ, տխուր ու յանցաւոր, հիասթափ նայուածքս յառած էի սարսափած եղնիկէ ալքերուն: Ո՛հ, ի՞նչ քաղցր էին այդ ալքերը իրենց ազաշող արտայայտութեամբ ու ի՞նչ անզօր էր ինք այդպէս դիմացս, բնութեան ամայի ծոցին մէջ: Կրկնուի մը մէջ կարծես առանձին ու անզգն կանգնած էր սարսափած, դէմ-յանդիման անյազ գազանին ու կը սպասէր սարսափելի մահուան:

Մէջս ամէն կիրք հալած էր ու մարած: Ափսոսանքով կը գիտէի զինք, իմ կարգիս վարմացած: Դեռ մեր նայուածքները իրարու յառած էին ու անշարժ կեցած էինք մեր տեղերը:

Հուռ, սկսայ դանդաղօրէն իջնել բլուրն ի վար: Հետեւեցաւ ինծի

անիսու ու կարծես յանցաւոր: Քիչ ետք արդէն ինքնալարժին մէջն էինք ու նայուածքս դամուած կը մնար անիւններուն տակ սողացող սսֆալթէ դարձ- դարձիկ ոգիին:

— Վերաւորեցի՞, — հարցուց քնքշօրէն, — յանկարծակիի եկայ ու վախցայ, — պէտք է աւելի փափուկ վարուէիր հետս:

Ես չէի պատասխաներ, ոչ ալ իր կողմը կը նայէի:

— Ձէի պիտեր, որ այսքան զգայուն ես, կարծեմ ես պէտք է լայի այս ըրածիդ համար, մինչդեռ կը տեսնեմ, որ եփշտ հակառակը կը պատահի:

— Ո՞ր ըրածիս, — աղաղակեցի ջղայնացած, — ի՞նչ ըրի, ձե՞ռքդ սեղմեցի, ներողութիւն, ու՞սդ սեղմեցի, դարձեալ ներողութիւն: Ուրի՞շ:

— Մօրս հայհոյեցիք, — ըսաւ ցած ձայնով:

— Ես քու մայրդ... — դարձեալ հայհոյեցի ջղայնացած, — ինծի ժպտեցար, որպէսզի մինչեւ հո՞ս հասցնես: Կ'ուզես զիս քմալքներուդ գերբ՞ն դարձնել, հա՞, քեզի ըսած չէի՞, որ վերադառնանք: Ըսած չէի՞, որ տա- կաւին փոքր ես: Դուն շպնդեցի՞ր՝ տար ինծի ո՛ր որ կ'ուզես եւ ըրէ ի՛նչ որ կ'ուզես, ապա չըսի՞ր, թէ խօսք կու տաս որ մեծ աղջիկ պիտի ըլլաս:

— Հանդարտէ, — պաղատեցաւ, — գուցէ իրաւունք ունիս, գուցէ դու փոքր եմ:

— Ո՛չ, ո՛չ, — գոչեցի միշտ ջղային, — դուն փոքր չես, դուն կին ես, դուն հասուն կին ես ու դիտես երիտասարդ մը շարչարելու բոլոր խա- գերը: Անիտ՛ս, կէս ժամ առաջ երջանիկ էի, որ սիրուն պարմանուհիի մը հետ էի, իսկ այժմ կ'ափսոսամ, գուցէ աշխարհի երեսին պոռնիկ մը ա- լեյցաւ:

— Այս բոլոր ըսածներուդ համար պիտի զղջաս, — ըսաւ գորովոտ, — ես չեմ վերաւորուիր, քանի գիտեմ, որ ջղայնացած ես: Նոյնիսկ կ'ըն- դունիմ հաշտուիլ հետդ ու դառնալ երազներուդ անուշ պարմանուհին, եթէ խոստանաս նուէր մը առնել ինծի:

Ես տակաւին նայուածքս սեւեռած էի ճամբուն ու եմբ իր տաք շունչը զգացի զէմքես վրայ, քիչ-քիչ սկսայ հանդարտիլ:

— Ի՞նչ կ'ուզես իրրեւ նուէր ու ի՞նչ կը խոստանաս այդ նուէրին դի- մաց, — հարց տուի շեշտ նայելով երեսին:

— Թոյլ կու տամ, որ համբուրես զիս, — բսաւ խնկայով, — թոյլ կու տամ, որ քանի մը անգամ համբուրես զիս, եթէ զոյդ մը աղոտ կօշիկ տանես ինծի:

— Եթէ խիւօք ու հնադանդ աղջիկ մը ըլլաս, — ըսի չոր շեշտով մը: Անսահման ուրախացաւ ու հնչուն համբոյր մը գրտմեց երեսին:

— Անհունօրէն շորհակայ եմ ու անհունօրէն կը սիրեմ քեզ, — ճըս- տողէջ, — չես գիտեր որքա՞ն երախտապարտ պիտի մնամ քեզի:



Անժէլինայի հետ յարաբերութիւններս ոչ մէկ յաջողութիւն արձա- նագրեցին եւ այս պատճառաւ ալ որոշ ժամանակ մը խուսափեցայ իրենց հանդիպելէ: Սակայն պատշաճութիւնները յարգելու համար, որոշեցի աշ- ցելել, ինչու չէ՞ նաեւ ամուրի տղու որոշ ակնկալութիւններով:

Ափսոսանքով նկատեցի, որ զահրնիկէց կղած էի: Նոր քարեկամներու ծանօթացած էի, իսկ ես սնանկացած էի օրուան սակարանով: Յիշուող գումարները շատ բարձր էին ու որոշ բարդութիւն մը կը համակէր հօթիւնս: Զափազանց բազարավար էին հետս, ամէնքն ալ: Կարծես պատշաճութիւն- ները յարգելու համար էր միայն, որ զիս ներս ընդունած էին:

Կարելոք ժամադրութեան մը պատրուակով, զիչ մը կանուխ մեկնել ուզեցի: Մինչեւ վարի դուռը անխօս հետեւելէ ետք ինծի, Կիրակոս ամերիկեան պերճաւոր ինքնալարժ մը ցոյց տալով, խնդալատութեամբ ըսաւ.

— Տես, մեր նոր բարեկամներուն մալինան է: Ի՞նչ հանգիստ է եւ ի՞նչ արագ: Եւ ի՞նչ սուղ...

Գլխիկոր հեռացայ: Որոշեցի այդ փողոցէն շանցնել այլեւս: Սակայն որո՞ւ հօգը:



Քանի մը շարաթ անցած էր, երբ մեծ վաճառատան մը առջեւն անցած տանն, յանկարծ զիթ-զիթի հանդիպեցայ Կիրակոսին:

— Ո՛հ, սիրելի բարեկամս, ո՞ւր ես, եղբայր, — տխուր կարօտեցի եմք զեղի: Սիրանին հետ երեք անգամ զեղ փնտաւրու եկանք, սակայն երբ ամենդ առջեւ մալինայիդ շանդիպեցանք, առանց ձերիններուն հանդիպելու վերադարձանք:

Ես յանկարծակիի եկած էի:

— Տեսայ որ այլեւս ինծի պէտք չունէիք, — ստարկեցի, — նոր եւ ինձմէ աւելի լաւ բարեկամներ դասած էիք:

— Ատոնք բարեկամներ չեն, — ազդակեց յանկարծ Ղայանցած, — ուղղակի սրիկաներ էին ու աւելի յարմար դասնք այլեւս դուռը չքանալ իրենց առջեւ:

Շատ մաքուր հազուած էր ու քանի մը մեծ կապոցներ ունէր հետը:

— Գիտե՞ս, — յայտնեց՝ դէմքին լուրջ արտայայտութիւն մը տալով, — մենք արդէն մէկ շարաթէն պիտի մեկնինք: Քանի մը Էմաքիւս գնեցի եւ քանի մը վերարկու: Զորս-հինգ զայդ կօշիկ եւ ուրիշ մանր-մունր բաներ:

Գնած էք քաղաքի ամենատուղ վաճառատուններէն: Իմացուցի, թէ շատ աւելի նուազ գիներով, շատ աւելի ապրանք կարելի էր գնել, ծանօթ վաճառատունից:

— Վնաս չունի, — ըսաւ ծիծաղելով, — ամէն օր չի պատահիր:

Երբ կապոցներու ծայրերէն փորձեց ցոյց տալ գնած ապրանքները, պաղ սարսուռ մը անցաւ վրայէս: Ակներեւ էր, որ պատկառելի դուժար մը ծախսած էր՝ միայն իրեն համար զգեստներ գնելու:

Ապա գրպանէն գուհարեղէնի քանի մը տուփեր հանեց: Յոյց տուաւ թանկազին քարեր եւ սփեղէններ.

— Ամերիկայի մէջ շատ յարդի են:

Գլխու պտոյտ ունեցայ: Եզրակացուցի, թէ Ռուսանիայէն դուրս եկած պահուած, աղբիւրները պարապ չէին, լուծողական տուած չէին իրեն զարիկաները:

— Հիմա ո՞ւր պիտի երթաս:

— Պզտիկ գործ մը ունիմ, — ըսի, — պէտք է անպայման երթամ:

— Եթէ մալինադ հետդ է, դիւ տուն հասցուր: Մեծ բարիք մը ըրած կ'ըլլաս, — ազաչեց: Ապա ծիծաղելով աւելցուց.

— Անձէլինան ալ կը տեսնես, հիմա եկած կ'ըլլայ զպրոցէն:

— Ծնորհակալ եմ, — ըսի՝ առանց ազդուելու իր սինիֆ արտայայտութեան, — պէտք է անպայման հասնիմ ժամադրութեանս, շոտ, բարեւէ բուրբն:

Վերջին անգամ Հանդիպեցայ իրեն Ս. Նշան եկեղեցւոյ առջեւ: Գէտօրուան մօտ էր: Զեւքը քանի մը տողարակ՝ դանդաղ կը քայլէր դէպի տուն: Ետեւէն Հասայ ու թեւէն քաշեցի:

— Դեռ հո՞ւ ես, — հարցուցի ծիծաղելով:

Անսահման երջանկութիւն արտայայտող ճիշերով ու շարժումներով ընդունեց զիս: Յայտեց իրենց դաջած կարօտը: Իմացուց թէ տիկինը անպայման զիս տեսնել կ'ուզէ: Աւելցուց թէ տան մէջ ամէն վայրկեան իմ խօսքս կ'ընեն: Սիրանը, Թադուհին, Անժէլինան ախճա՞ն տեսնել կ'ուզեն զիս:

Ապա յանկարծ լրջացած հարցուց.

— Զըլլայ թէ առանց զգալու նեղացուցած ենք զեզ:

— Ամենեւի՛ն, ես ձեզմէ չեմ նեղանար:

— Հիմա մեզի պիտի դա՞ս:

— Զե՛մ կրնար, — պատասխանեցի, — արդէն ուշացած եմ, պէտք է երթամ:

Տողարակները գետին դրաւ:

Ոչոր ամիսներով պինդ բռնեց թեւերէս ու պահ մը անլարժ աչքերը սուսեց աչքերուս:

Յաջորդ օր վերջնականապէս պիտի մեկնէին Ամերիկա: Շատ երախտապարտ էր ինձի ու մինչեւ մահ պիտի շնորհար դիս: Ամէն անգամ, որ Լիբանանը յիշէր, զիս պիտի յիշէր: Ամէն անգամ, որ օդի խմէր, զիս պիտի յիշէր: Արդէն հետը քանի մը շիշ ալ առած էր:

Ապա, գիւտ մը բրածի պէս, աւելցուց.

— Լա՛ւ որ միտքս ինկաւ: Քանի մը քիլօ լաւ պատրմա կ'ուղէի: Ի՞նչ լաւ կ'ըլլայ, քանի մը քիլօ, լաւ տեսակէն...: Գի՛նք ինչ է, կը վճարեմ: Վաղը առտու մեզի բեր: Վերջն ալ մաշինայով մեզ օդակայան կը տանիս, Ի՞նչ լաւ կ'ըլլայ, մերիներն ալ կ'ուրախանան:

Այնքան թախանձեց, որ ընդունեցի իր առաջարկը ու բաժնուկացանք:

ՍԱՊԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

(Անտիպ)

Ի Բ Բ Ե Ի Ա Ն Պ Ի Ղ Ծ Մ Ե Ղ Ե Կ Ի

Կեանքի նարտը քեզի՛ բզկտուելով
Իսկ դու՛ յայ մեզու՛ ծուկն-ծուկն կ'անջատուիս,
Զկարդալու համար քու արգանդէն յառնած՝
Բալասանը արցունքներու:

Նսեմացած շնորհակալութիւնս կը բանաստեղծականանայ
Իբրեւ ամէնօրեայ կորուսեալ արձագանգի բիծ,
Իբրեւ շնչասպառ ու սպաննիչ արեան տնկոց,
Իբր անուխի շիթ,
Թռեցերու ներքեւ ծուարած
Դաժան ու սարսազգեցիկ մահազգացում...

Դուն կ'արտաշնչես, բայց ես կ'ապրիմ ծանազանութեամբ
Ու անգոր սկարութեամբ կ'օրհնեմ օրը դեռ յբացուած՝
Արեւուն ոտքը լուսմ...

(Մահը կը հնչէ «տիւ եւ գիշեր»)
Իսկ փախչող մայրական պատրանքդ
Կը հնչէ բացակայութեան մամլիչին տակ:

Այսօր,
Հառազայթահար աւիշը երակներէս ներս
Քու օրհնեալ
Յիշատակդ կ'արուագծէ
Իբրեւ մայրական ճնճոյշ ու անպիղծ մեղեդի:

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Է Ս Կ Ի Ս Ա Հ Ա Ղ Ո Ր Կ

Սպասումով լիցփառութեամբ ժամանակը
Կը ժանգոտի առկախումբ արցունքներով:

Խոնաւութիւն մտերմախոյս-

Լուսագուրկ գունդերանգնք
Կտաներ գերթ՝
Բիւրեղաձայն եւ քափանցիկ:

Մայիսեան համբոյրով սնուած մրբիայոյց,
Փետրուարեան մտերմութիւն փաթիլ-փաթիլ,
Թնդանօթներու բարեգութ խնամքին տակ,
Կամբջումներ կիսաժպիտ:

Համբոյրին հետ ապակիին շագծուէն՝
Ուռկաններու պայմանական առկայութեամբ կենակցութիւն,
Հեռաձայնի բազմաբաղ թելերէն համր՝ իմանալի.
Թաքմանութեան պէս կիսահազարդ
Կնիսահայրութեամբ՝ գրկարաց
Ամուլներու պռոնկութեամբ:

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ

Ն. Բ Ի Ի Զ Ա Ն Դ Ա Յ Ի

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Երբ որ Հայեցողական զուարճութեան էն եաքը կ'ուզէի գիշ մ'ալ նիւթական զուարճութիւն վայելել, կ'երթայի տատարակներու քով, որոնց վրայ աւելցեր էին նաեւ քանի մը աղանիներ: Ամէնքն ալ ունէին իրենց փաղաքչանաց զոգարիկ անունները. ոմն կը կոչուէր Սթէֆանի, ոմն Հայկանոյշ, ոմն Նեմզար, ոմն Վիրգինիա. ես էի որ իրենց ցորեն, բրինձ կամ կորեակ կը կերցնէի, ես ջուր կը խմցնէի, բոյններին կը մաքրէի, ծաղերը կը Հոգայի, երբեմն վարուժան մը ձեռքս կ'առնէի որ փայտալանջներէս կը ջերմանար եւ զլուրը ծածծ ու թելերը թէթել հեղիկ շարժելով սիրոյ վուզունները կ'երգէր, մինչեւ որ ընկերն ալ վազէր քովը դար, եւ այնպէս երկուքը մէկէն փոխ առ փոխ երգելով եւ զիրար գգուելով ձեռքիս մէջ կը կատարէին իրենց տրփանաց նախերգանքը: Քանի՛ քանի՛ անգամ երբ որ մտղաձուրթեան սեւ մատախուղը կ'իջնէր վերաս, աղանիներ ու տատարակներ սիրելով մխիթարուէր եմ. քանի՛ քանի՛ անգամ երբ որ անիբաւ յանդիմանութիւն մը, անգութ հրաման մը, գառն եւ կծու խօսք մը կը խշխշանէր իմ սիրաս, արցունքներս արբեր եմ տատարակի մը փետուրներովը: Ո՛հ, վանքի մէջ մեծնալու

է մէկը որպէս զի Հասկնայ թէ ինչպիսի՛ ցուեր, ինչպիսի՛ վշտեր կրնայ կրել խեղճ պատանի մը զոր ուրացած են իր Հայրն ու մայրը անծանօթ վերակացուի մը ձեռքը մատնելու Համար: Ա՛խ, երբորդ Լև վերջին վերակացու, կը յիշե՛ս այն իրիկունը յորում մտածականն սկսելէն ետք վայրկեան ետքը եկեղեցի գալուս Համար, եւ այն ալ ոչ իմ յանցանքովս, Հապաքանայից մէկուն պատճառաւ որ տրպարանի ամենակարեւոր սրբազրութեան մը Համար խօսքի բռներ էր դիւ, բաւական չոքեցիր առանձին սենեկիդ մէջ քեզմէ թողութիւն ուղելս եւ ստիպեցիր որ ամենուն առջեւ այ խոնարհիմ, անիրաւ եւ անպատճառ տեղ մահանամ՝ յանցաւորի մը պէս, եւ ծնրադրելով թողութիւն պագատիմ. ի՛նչ անդիթութեամբ վարուեցար Հետս այն առթիւն մէջ, ի՛նչ դատան կերպարանք ցուցուցիր ինձի եւ ի՛նչ շնչին մտգուկի Համար ուղտի չափ խօսքեր բերնէդ Հանեցիր: — Կը յիշե՛ս որ գիւղազնացութեան ժամանակ առաւօաբ կանուխ եւ անօթի փորանց տասը մզոն, տասնուհինգ մղոն ճամբայ քայելու կը տանէիր գմեզ որպէս զի իրիկունը արեւը մանկէն ետքը տուն դարձնես, գիտնալովդ Հանդերձ թէ այնչափ երկայն

ճամբայ չեմ կրնար քալել ու ծնկուրններս կը կորտին. երբ կը տեսնէիր որ քեզմէ շատ հեռու մնացեր եմ ու ոգեսպառ եւ կաղ ի կաղ հաղիւ կրնամ ոտքերո շարժել, կը սպասէիր որ քեզի հասնիմ ու բարկութենէդ կրակ կտրած, աչքերդ պատռտելով, նախատինք չէր մնար որ ինծի շնչէր, կշտամբանք չէիր ձգեր որով շտամբանք չէիր զիս. եւ մինչդեռ Բոշաներու թափառական զնդի մը պէս փոսի մը եզերքը նստած ընկերներս եւ դու կը ճաշակէիք հացերեիդ, կը յիշե՞ս որ աչքիդ ծայրովը իմ կողմս կը նայէիր եւ կը տեսնէիր որ հացիս շէի դպչեր ու ձեռքովս երեսս դոցած՝ արցունքներս ալ կը ծածկէի քեզմէ որպէս զի ցաւոցս վրայ չծիծաղէս, դու փոխանակ անոյշ խօսք մը ըսելու հեղձական ակնարկութիւններ կ'ընէիր ընկերացս իմ վրայօք: — Կը յիշե՞ս դարձեալ որ առաւօտ մը ուսումնականիցներէս մէկը քունէն յարթուած չկրցաւ ներկայ դրնուիլ, դու նախանշակի տանն երբ որ մէկալ ընկերներս տեղերեին նստած կաթով խահուէն կը խմէին, կանչիլ տուիր խնդը յանցաւորը, որ ամօթէն չէր համարձակած հրամանդ կատարել եւ եկեղեցի դալ ժամերգութեան կիսելէն ետքը ու նոյն ամօթէն եւ ոչ մեզի կ'ուզէր նրեւնալ, հապա զնացեմ անեակը փակուել էր, ի՞նչպէս հրամայեցիր որ ծնկան վրայ դայ. աչքդ գոցեցիր, բերանդ բացիր ու ծանր ծանր եւ ամենածանր խօսքերով յարձակելով վրան չարայար յանդիմանեցիր զինքը, ու աւելի զկեցնելու համար զարմանելի հնարք մը գլուտով պէս ճոխութեամբ պատուիրեցիր որ իր կաթին գաւաթը զլիւթվայր դարձրի: Ի՞նչ գեղեցիկ օրինակ կուտայիր մեզի կրօնաւորութեան հեղուքեան եւ քահանայական չքաւորութեան. ի՞նչ աղէկ կը դործածէիր բանաստեղծական հանճարդ բարկութեանդ ատեն զմեզ աւելի խայթելու, աւելի ցաթքեցնելու համար, նորանոր բացարձակութիւններ դրանելու. ի՞նչ աղէկ կը միտքարէիր զմեզ որ ծաղիկ հասակի մէջ, աղբիւսը ծնած, հայր մայր չունեցող որբերու պէս վերկըւած ընտանեկան եւ աշխարհային կեանաց ուրախութիւններէն՝ զքեզ միայն ունէինք, զքեզ միայն կը տեսնէինք, քեզ-

մով միայն կրնայինք սփոփիլ եւ զուարճանալ, եւ դու Աւետարանին հօրը նման երբ որ քեզմէ հաց կը խնդրէինք՝ քար կուտայիր, երբ կ'արտասուէինք՝ փշերով ու եղիճներով կը սրբէիր մեր աչքերը, երբ թեթեւ ու աննշան յանցանքներու մէջ կ'իյնայինք՝ խարանով ու դանակով կը կեղեքէիր, կը պատռէիր զմեզ որպէս զի կատարելութեան շաղկին մէջ բարձրաւանդեց, եւ երբ սրտերնուս մէջ նոր զգացումներ ոկսեր էին երգել, դու փոխանակ մեր զոհին վստահութիւնը մեզի հասկցնելու եւ զմեզ քաջալերելու, բորւորովին կը խորասակէիր զմեզ ու եւս աւելի կ'իմացնէիր մեզի մեր չորս կողմի ունայնութիւնը: Բայց ի՞նչ կ'ըսեմ, ո՛չ, դու յանցանք չունէիր այդ բանիդ մէջ, վասն զի գրաւորական մեծամեծ աշխատութեանցդ համար մէկը Բարիդ, մէրմը Լոնտոն եւ Պեռլին կամ Բեռլինի թղթակցելով ու Հայաստանի ուրուականին պէս միշտ անոր աւերակաց վրայ թափառելով, ժամանակ չունէիր ոչինչ զրազանաց խնարհելու, այսինքն մեր վիճակին դառնութիւնը մոռցնելու, մեր կրածներն մեղմացնելու, եւ քու ընել չըկրցածդ յանձնեցիր աստարակներուն, հաւերուն, աքաղաղներուն, բաղերուն, սաղբերուն, panem et circenses(16):

ԺԷ

Ինչպէս որ ըսի նախընթաց գլխի մը մէջ՝ նախընթացութեան առաջին տարւոյն լրացած օրը կրօնաւորութիւն կը խնդրուի, եւ ընծայարանէն չորս հինգ ամսիս ետքը կը կատարուի ուխտագրութեան հանդէսը, կթէ ժողովրդական ջրակարկութեամբ նորընծան ընտրուի միայնութեան անդամ: Այս ժողովը որուն

(16) Լատիներէն՝ «էւսց եւ կրկնայիմ խնդրատակութիւններ», սր հռոմայեցի *Satires*, X, 81) անկումս շրտաթի լառայեցիմերիմ, արաթ արիմ չէիմ ուզում այնես, բացի արի քրքրից եւ կերկնայիմ խաղերից:

մէջ միայն վարդապետք իրաւունք ունին մանելու՝ նորընծային խրատելական է, թէպէտ քիչ անդամ կը պատահի որ նորընծայ մը ժողովքին առաջարկուի եւ ոչներուն թիւն այններուն թուէն աւելի ըլլայ: Թեւ վերակացունն առաջարկութեան պատանուին ներքողը ճառարտելու, վարդապետք կրնան իրենց տեսութիւնքը եւ դիտողութիւնքը հրապարակաւ զրուցել նոյն պատանուին վրայ, եւ երբ որ ա'լ ըսելիք չմնար, քարտուղարը կը պատգնէ քուէներու տուփը եւ վիճակները կը ձգուին: Երբ որ սն կրօնաւորութիւն ինչպէս (հարկ չէ կրկնել թէ ո'րչափ հասկցեր էի երեք ուխտերէն ծանորայնը, այսինքն ողջախոհութիւնը), կը կարծէի որ քանի մը ամսէն ուխտադրութեան օրուանը պիտի հասնիմ. բայց որովհետեւ նոյն տարուան ընթացքին մէջ Երկրորդ վերակացուս պաշտօնէն էլիս ու տեղը նոր մ'եկեր էր, եւ մինչեւ որ սա ալ հիմնովին թափանցած չլլար իմ ուղ եւ ծուծս թէ' բարոյակաւնի, թէ' մտաւորական կարողութեանց եւ թէ' ջերմեւանդութեան կողմանէ, չէր կրնար հասնել դեռ միաբանութեան աստեղծելու ջանքով ըլլալ ինծի. անկէ աւելի՝ որովհետեւ հազիւ աստեղծվեց տարեկան կայի, Երկու անգամ հայրենիք դառնալ ուզած էի ու սովորութիւն ունէի մտղերս ճեղքելու եւ կաշի դօտիով մէջըս սեղմելու՝ պղտիկ փոթ մ'ալ ձըզելով կապույիս կրծոցը վրայ (նշան զարդատիրութեան կամ աղջկական նազանաց՝ ինչպէս որ կ'ուզես), սլառնաճ տեսնուեցաւ. որ արտաքոյ սովորութեան յետաձգուի իմ փորձութեան աստիւ: Այս կերպով կրկնակի կը շահէի՝ ազօթքով եւ հանապազօրեայ հոգեւոր ընթերցամար, մտածականներով եւ խրատներով Ատուծմէ լոյս պաղատելէս զատ, օրէ օր տարիքս ալ կը յառաջանար, մտածումներս, կ'եփուէին կը հասուննային, եւ ուշիմ մտքը բաղդատելով վանականութեան երանութիւնքն սեւեւուր աշխարհիս վաղանցուկ կամ պղծայից առաւելութեանց հետ՝ կրնայի ազատ եւ ինքնիշխան կամօք մեռցնել մարմինս եւ թողուիլ կրօնաւորական վեղարին ներքեւ:

Յեղկատակութիւնն որ միայն վանքերու մէջ կը խաղցուի, ինչո՞ւ փոխանակ ի ծաղր շարժելու կը լեցնես զիս դառնութեամբ եւ կատաղութեամբ: — Միամիտ ու երկչոտ տղայ մը ինք տարւան հասակէս կը փակուիմ շորս մերկ եւ թանձր պատերու մէջ, հետի ի հայրենեաց, հետի ի ծնողաց, հետի ի յամենայն աշխարհական շփմունքէ, մարդու երեսնաւ չեմ տեսներ, արտաքին բաներէ մեծնեին տեղեկութիւն չունիմ, ընկերներուս հետ չեմ կրնար սէր եւ բարեկամութիւն հաստատել, վասն զի իրենք զիս կը մատնեն, եւ զիրենք, նոյնիսկ հօրս ու մօրս ազատ չեմ ամէն մտքէս անցածը գրելու՝ պատճառաւ որ նամակներս վերակացուսիս ձեռքէն կ'անցնին ու ինքը ուզածին պէս կրնայ խօսքերս փոխել փոխփխել, ամէն օր ան կը մտածեմ որ պիտի մեռնի, ամէն օր ան կը կարգամ որ յաշխարհի հոգիս կը զատապարտուի ու դժոխք կ'երթամ, ամէն օր ան կը կարգամ որ կրօնաւորութիւնը երջանկութիւն է եւ վանքը իբրեւ թէ արքայութեան նախագահիք, ինծի համար իմաստութիւն, դիտութիւն եւ սրբութիւն բովանդակուած են Թագմա Փեմպայցի, Հոռոզերիկ, Լոյսլայի հրահանգ կըրթութեան, հրաշից, մահուան պատրաստութիւն, Tout pour Jesus ըսուած յուսահատիչ եւ սարսափ բերող գրքերուն մէջ, եւ մեծադոյն զգուշութեան համար նորընծայարանի մինչեւ հինգերորդ տարին ձեռքս չեն տրուի Պօղ եւ Վիրգինիայ պէս անմեղ ու պարկեշտ վիպասանութիւնը(17), նոյն իսկ առաջինի եւ սըրբակեաց Եպիսկոպոսի մը դրչէն հլած եւ ուրիշ եպիսկոպոսի մը ձեռքով թարգմանուած Տիլիմալայ խրատական վիպասանութիւնը(18): միշտ պարտքս կ'ըլլայ վերակացուսիս աչքովն տեսնել եւ տկանընովն լսել, միշտ կը վարժիմ խոնարհելու, դուրս հոգի եւ փոշոյ մէջ թաւալելու,

(17) Փրակսերէն վեպ՝ Paul et Virginie, հեղինակ՝ Bernardin de Saint Pierre: Երկու երիտայի անմեղ պատմութիւն:

(18) Փրակսերէն Les aventures de Télémaque, հեղինակ՝ արեւելահայոս Fénelon.

անիրաւ տեղ յանդիմանութիւն եւ պատիժ ընդունելու, մազմաղ կրակի վրայ կամ ասեղի խայթոցներէ չարչարուող ժարտիրոսի պէս ամէն օր մէջմէկ նեղութիւն, մէյ-մէկ ցաւ անսլակաւ կը կրեմ եւ առանց ճիկ հանելու, կամքս ոչ երբէք կը դործածեմ, միտքս ոչ երբէք կը բանեցնեմ, ազատութիւնս ոչ երբէք կը ցուցնեմ, ու կատարելութեան հասնելու համար կ'աշխատիմ որ նիւթական զգացողութիւնս ալ կորսնցնեմ, տաքի եւ ցրտի, անօթութեան եւ ծարաւի, վշտակրութեան եւ հիւանդութեան անտարբեր ըլլամ, միով բանիւ տնկործ, դանդաղ եւ լքացեալ կեանքով մը բուրբուրովի գիտակնամ, եւ դեռ հոպելոր առաջնորդներս կը կարծեն որ կատարեալ ազատութիւն եւ կատարեալ ծանօթութիւն ունիմ վիճակս ընտրելու, իբրեւ թէ նախապաշարմամբք լեցուած եւ տոգորուած միտքս աւելի բաց եւ աւելի հասուն կ'ըլլայ ուխտաւորութեանս ժամանակին մէկերկու ամիս ետ ձգուելովը: Այն ի՞նչ տագնապ էր իմս երբ որ ընելիքս չգիտնայով չորս կողմս կոյրի պէս կը խարխափէի, որպէս զի այն խղրուկ օղէն, այն կպշուռ գետնէն դուրս ինծի ուրիշ տոնկուիւ, ուրիշ միջոյրտո մը գտնեմ, բայց ո՛ր կողմը որ դառնայի՝ վանքին հաստարեսս եւ խնամ որմունքը առջեւս կը գտնուէին ու զլուխս անոնց կը դարձուէր. չկար բարեաց խորհրդատու մը, այլ ամէնքն ալ շարեացս եւ իրենց շահուն խորհրդականք. չկար Արիստո մը որ սորվեցնէր ինծի անել թաւիղէն ազատելու հնարքը: Սաղմոսներով եւ լիթութեան իրօք կուրցած խեղճ ոգորմելի պատանի մը, ի՞նչ պիտէի աշխարհի ի՞նչ ըլլալը որպէս զի սիրեմ կամ ատեմ դայն, մինչդեռ վերակացուիս եւ կարգացած հոգեւոր գրքերուս խօսքերը, զորոնք պզտիկուց Աստուծոյ խօսքին պէս պատուել եւ պահել սորված էի, դիս կը դարձուրեցնէին շարաշար կատարածով մը եթէ հրամարէի կրօնաօրական կեանքէն: Ուրիշ տեսակ մտածումներ ալ ոչ սակաւ կը տանջէին եւ կը պաշարէին իմ միտքս. եթէ տարուբնէ ի վեր վանքին աղն ու հացը կերած եւ քիչ շատ երկու երեք լեզու եւ ուսմունք սորված էի. հիմա ի՞նչ-

պէս անշնորհ եւ ապերախ չըսուէի վանքը ձգելով. հինգ տարիէն աւելի իբրեւ ուսանող յարատեւեր էի եւ անհամբերութեամբ նորընծայութեանս օրուան սպասեր էի, նորընծայ ըլլալէս ետքն ալ հասարակութեանց առաջ ամենայտօր փափանօք խնդրեր էի կրօնաւորութիւնը. հիմա ի՞նչպէս դասալիք չըսուէի ուրանալով Մխիթարեան անունը, ի՞նչպէս ամէնքը երեսս վար չառնէին՝ փոփոխամիտ եւ վատ կարգալով ինծի. ինչպիսի՞ ծանր նախատինք պիտի ընէի պատուոյս այնչափ ժամանակ վանքին վարդապետները զոմն իբրեւ դատախարակ եւ զոմն իբրեւ ուսուցիչ յոգնեցնելէս ետք իրենց ջըրտիներ զերեւ հանելով(19) (Անապիտ Նշ 130րդ) հապա Աստուած որ անհուն ոգորմութեամբը զիս ընդունել էր իւր ցանկալի յարկը եւ հոգեւոր հարց բերնով անզն ի տեղը հասկցուցեր էր ինծի որ զի յաւիտենից նախասահմանեալ եմ ի կրօնաւորութիւն եւ ի քահանայութիւն», ի՞նչ սոսկալի պատիժներ պիտի չթափէր գլխուս թէ՛ այս եւ թէ՛ հանդերձեալ կեանքին մէջ: Կրօնաւորք եւ քահանայութիւն, որ ինծի պէս մատաղ հասակի մէջ որ եւ ինչ պատճառով վանքի կամ կղերանոցի մը դռնէն ներս մտեր ես, պատանեակ՝ ուխտեր եւ ձեռնադրուեր ես քահանայ, կ'երգուրեցնեմ զքեզ առաջի երկնից եւ երկրի որ բնա ինծի թէ արդեօք յօժարակամ եւ իրուի ծանօթութեամբ ընդունել ես վիճակդ, չէ նէ կամ խաբէութեամբ, կամ անպիտութեամբ, կամ բռնութեամբ հաներ ես բերանէդ այն սարսափելի խոստումներ որուն չես համարձակիք դրժել՝ երգմտագանց չըլլալու համար: Իսկ արդ առանց նուիրմանդ ծանրակշռութիւնը, ողջակիցիդ ամենամեծ յարգը քալ ըմբռնելու կը կարծե՞ս որ Աստուծոյ հանձնական նուէր մ'ըրած ես եւ անբակտելի երդմանդ ահաւոր նշանակութիւնը եւ զօրութիւնը

(19) Այս բառով, ասոց վերջակտի, ճարտարի ձեռագրի էջ 89ի երկրորդ տողի սկզբում ընդհատուած է մագաղաթաբեռը: Ետբանաբանութիւնը՝ սեւագրից:

այն ատեն շիմացա՞ր երբ տարիներդ...
(շարունակութիւնը չկայ) :

(Սեւագրութիւնից)

ժէ

Ընդհանրապէս ուխտ խնդրող նոր-
ընծային տակաւին չորս Հինգ ամիս կը
շնորհուի :

«Որ որդն նոցա ոչ մեռանի եւ Հուրն
ոչ չիջանի» - «Երթա՛ք յինէն անիծեալք,
ի Հուրն յաւիտեական», «զոր ակն ոչ
ետես եւ ունկն ոչ լուաւ եւ ի սիրտ մար-
դոյ ոչ անկաւ, պատարաստեաց Աստուած
սիրելեաց իւրոց», եւ ասոնց նման Հա-
զարումէկ ուրիշ վկայութիւններ ի սուրբ
գրոց չկրցան միտքս փոխել: Տեսնելու
էր իր վշտադին կերպն եւ խորին տխրու-
թեամբ լեցուած խօսքերը: կը տեսնէր որ
ստատանան զիս երեքտանուոյն շամփրած հե-
տը մէկտեղ տարտարուք քաշել տանիլ
կուղէր, եւ ինքն սղորմելին գորովալից
ձոր պէս իր մարմնովը կը ջանար զիս ծած-
կել եւ թափել դեւերուն ձեռքէն: Ծօթը
սիրասուն աշակերտներ Հաւատարիմ մը-
նացեր էինք իրեն, եւ ամենուս Համար
նստիւած էր շարթուան մէկ օրերը, ամէն
օր կը յի:էր զիս պատարագին եւ աղօթք-
ներուն մէջ ու մասնաւորաբար մէկ օր մը
ամբողջ ինծի նուիրած էր: Մինչեւ այն
ատեն բարի օրինակ մ'էի ոչ միայն ըն-
կերներուս, Հասկա բոլոր վանականաց
եւ Հազիւ թէ ընդունէի պիտի իմ բաղմա-
մեայ ջրտանցս վարձքը, նախանձոտ
բանաբկուն կ'աշխատէր զիս խարելու
որդէս զի եաքը վրաս ծիծաղի եւ յու-
սահատութեան մէջ ձգէ զիս: որ իրենց
կամբով վանքէն ամէն ետ զարձոններ
զղջացած եւ ցաւած են եւ ո՛րք մէկ կերպ,
ո՛րն այ ուրիշ կերպ թշուառ ապա-
զայ մ'ունեցած էին: մէկը մասնաւոր-
աբար վեց տարի անընդհաւ աղայա-
նաց թուղթ գրեր էր վանք որ զոնէ վան-
քին խոզերը կամ կողերը պահէ, բայց

անոր ալ արժանի չէր եղած. որ աշխար-
հական կեանքը ինծի Համար չէր եւ կըր-
նար ինծի մահառիթ ըլլալ, որ Պօլսոյ
քաղաքական եւ առեւտրական վիճակը
յետին աստիճանի խեղճութեան եւ սա-
ռապանաց մէջ է եւ շատերը անօթութե-
նէն կը մեռնին, թէ ծնողքս ալ որ իմ ա-
ղէկութիւնս կ'ուզեն (Աստուած անպա-
կաս ընէ զիրենք) կը յորդորեն զիս որ
ուխտեմ եւ օր մը առաջ քահանայ ըլլամ
եւ թէ կէս ճամբէն ետ դառնալովս կրնամ
իրենց ծերութիւնը ցաւովք եւ Հեծու-
թեամբ գերեզման իջեցնել եւ Հայրաս-
պաններուն կարգը կ'անցնիմ, եւ այլն եւ
այլն: Վերջապէս յետին անգամուն, բո-
լորովին լքեալ եւ վհատեալ՝ վերակա-
ցուիս անտեղիտալի պնդութիւններէն չկա-
րենալով իր խօսքերուն ստութիւնը եւ
խորամանկութիւնը իմանալ ու այսպիսի
նկարագրէ մը իրաւամբք զարհուրելով
թէ այս աշխարհիս նեղութիւններէն եւ
Հանդերձելոյն պատիժներէն... յուսա-
հատութեամբ ոչնչացեալ եւ անզայա-
ցեալ՝ առանց ըսածոս Հասկնալու գրու-
ցեցի թէ «Կ'ուզեմ ուխտել»: Եւ այսպէս
մտքէս՝ վճռական որոշումը ձեռքի քա-
հանայից Ժողովոյն վասն զի վստահ էի
որ եթէ կան իմ վրաս Համարում ունե-
ցողներ, կան ալ որ ծուռ աչքով կը նա-
յին մաղբրուս Տեղքին եւ կապայիս փոթ
չունենալուն Համար ու կարելի է որ ա-
ւելի ինծի չհամարող պտնուի քան թէ Հաւ-
նող. այս մտածելով կ'ըսեմ. ապահով-
ցուցի վերակացուս որ ամէն բան կը ձը-
գեմ Աստուծոյ երկրպագելի կարողորու-
թեանը: Այս խօսքիս այնչափ մեծ եղաւ
ուրախութիւնը որ առաջին անգամ մոռ-
նալով իր քահանայապետական ծանրու-
թիւնը ստք էլաւ եւ խանդաղատանօք
Համբուրեց թուշերս վարչահոտ բերա-
նով: Ո՛վ Համբոյր, քանի՛ աւելի քաղցր
եւ Հեշտալի պիտի ըլլալիք ինծի Հա-
մար եթէ զքեզ ընդունէի փափայիկ եւ
նուշահոտ վարդապոյն շրթունքներէ, ու-
րուն ուղւովս շափ կը փափաքէի, փոխա-
նակ բարբաբոս դահճի մը բերնէն ըն-
դունելու որուն շունչը նոյն օրուան ճա-
շուն կերած պտորովը տողորուած էր
եւ մինչեւ Հիմա սոսկ յիշատակն ան-
գամ կը նողկացնէ զիս :

ԺԸ

Վեց շարաթ ետքը ուրախութեամբ կ'անեւտէր ինծի որ Աստուծոյ եւ միաբանութեան հանոյ էր իմ կրօնաւորութիւնս եւ թէ առաջիկայ Վերափոխման տունին երրորդ օրը պիտի կատարուի ուխտադրութեան շքեղ հանդէսը: Այնպէս անզգայ դարձիւր էի որ չհասկցայ իր ըսածին զօրութիւնը եւ մտքէս ըսի որ թող ինչ կ'ուզէ ըլլայ: Վեց օր առաջ կրթութեան մտանք եւ պատրաստութիւն տեսանք. օգոստոսի 17ին եկեղեցւոյ զանգակները իրենց զուարթ դանչիւններով օդուն մէջ երդնով կ'իմացնէին թէ իմ անուանս հանդէսը պիտի կատարուի թէ բոլորովին ձգեմ պիտի աշխարհը, հրամարեմ պիտի յընտանեաց, ի դրօսանաց, ի սիրոյ եւ ողջ ողջ պիտի թաղուիմ: Սակայն երբոր փոխնը կ'անակս ձգեցին եւ վեզարն անցուցին գլուխս, արցունքի հեղիւղ մյ որ շատոնց ժողովուներ էր լալու ամաններու մէջ, ժայթքեց աչքերէս. ուրեմն կատարուած էր զոհը, ուրեմն ես իմ ձեռքովս ինչպէնքս մեռուցիւր էի, ուրեմն ա՛յ աշուհիս ես եւ սիրտս պիտի չբարախէր, կամքս եւ միտքս իմ չէին, մարմինս սպաննած էի, (սկսուած տողն այսպէս ընդհատուում է ստորակետով եւ չի շարունակուում):

Վանքի վարդապետները զատուարտելէն իբրեւ խորթ զաւակք Մխիթարայ, օտարացեալք ի նախահօրն կրօնաւորական շաւղաց, որ պարծէր Հոմերի եւ Միլտոնի տպագրութիւն: Թղթերը արտաքնոցի ջնջան (torche-cul) գործածելուն համար, որ դեռինը կը փռուէր, կը պառկէր խոնարհութիւնը ցուցնելուն համար, որ ճըմեռուան բորբոքած վառարանին կը պըլլուէր ո՞րպէս զի քաւարանի կրակը այս աշխարհս կրած ըլլայ, որ ուրիշներէն ծաղր ըլլալու համար գիտին մագերի արմատան կտրել կուտար եւ կը կընտանար, եւ օր մը ելաւ յոնքերն ալ մկրատով կրտրեց կերպով մը զարբուչ շիններուն նմանիւ: Համար որ մօրուքնին կը ձգեն, բայց կ'երեւայ թէ քահանայից մեծագոյն մասն ալ պերեւելուները կ'ածիլեն: Վերակացուն բոլոր ճարտասանութեան դանձերը հասցնելէն ետքը երբ որ կը սպասէր որ ժողովական քահանայից թուովը այն ելլէ տուփին մէջէն, շանթահար մնաց տեղը երբ որ երեք շորս այննընէն զատ մնացած բոլոր ոչ ելաւ. զԱ՛ս հիմա ազատ է գարդաւիցն ըլլալու այդ անզգուական նորոնծարդ, մըռմըռաց անդիէն Բագրատունի Հ. Արտէնը որ ժողովքէն էր եւ բոլոր ժողովականաց զուարթութիւնը շարժեցաւ (շարունակութիւնը չիայ):

(Սեւագրութիւնից)

...հոգեւէտ պատանի մը չէր տեսնուած վանքին մէջ, որ կը հալէր կը մաշէր Աստուծոյ սիրովը, նոր նոր շարժարանքներ եւ մահացուցումներ կը հնարէր մարմինը նեղացնելու համար եւ մինչեւ անգամ փորձութիւն տեսնցած էր, երկնայի՛ն փորձութիւն, վեզարաւոր փրանկիսկեան (զարբուչիին) ըլլալու: Եթէ Մինասեանը այդչափ յարգ կ'ընծայէր այդ պատանուն, ես եւ ինծի պէս ընկերներէս մեծ մասը ազուաշի բթամատի համարմունք ստացած էինք նոյն պատանուն վրայ, որ չէր պատկառեր բոլոր

...անցնէ եւ կղակիդ նորաբոյս ազլաւագր թաւ մօրուքի փոխուելէ ետքը յանկարծ Սամիտնի պէս թօթափեցիւր ծանրութիւնքը եւ ինքզինքը սոսկալի շահատիրութեան կամ անգթութեան մը խաղալիկ եղած տեսար, ուզեցիւր խորտակել կապանքը, բայց լսեցիւր որ մարդկային զօրութիւնը չկրնար զանոնք արձակել, բողոքեցիւր որ մորտեր ես, խարուեր ես, բայց սարսափեցուցին զքեզ որ Աստուծոյ զէմ դառնայ կ'ուզես, չես կրնար, եւ ի՛նչ լրիւր այն ատեն. լալ, ողբալ, ծիւրիլ ծնդիլ, Հիւանդանալ եւ յուսահատիլ, ատել բու վրեստը, նոյնիսկ բու շուքէդ զգուիլ եւ սրտիդ մէջէն անխճել թուառութեանդ ամէն պատճառեղոցները:

Եւ օսկայն զեւ շուրտած՝ վերջին անգամ փորձեցի ազատիլ վիճակէ մը որուն համար ախորժ ամենեւին չէի ըզդար վերակացուիս բարբարոս կերպը, ընկերացո մէկիկ մէկիկ թօթափիրը 20էն եօթնի իջեր էր մեր դասուն թիւը, կա՛նանց սէրը, որ թերազարտ երգեցողի մը պէս առաջին ուրբակները կը թոթովէր արտիս մէջ եւ խոսովութեամբ կը լեցնէր, զիս, յորդոր եղան ինծի վերջին փորձ մ'ընէրու: Երեք անգամ մեծաւ պնդութեամբ եւ թաջութեամբ յայտնեցի վերակացուիս որ կ'ուզեմ Պօլիս դառնալ, երեք անգամ օ: աղայանք պաղատանք, սպառնալիք, խոստմունք, ահարկութիւնք... (շարունակութիւնը չկայ):

Նորընծայութիւնից վերջին հրատարականը (Դիւան, 8:0, 18:14)

ՎՅՈՋԻՆ

Այսչափ ատեն փորձելով ու կրօնաւորութեան վիճակին յարմար չգտնալով ինքզինքն՝ կը յայտնեմ աս թղթով հաստատուն կամքս որ իմ արձակուրդս աւարտի:

Կը խնդրեմ որ չըլլուին ինծի հարցմունքներ եւ շտրուին խրատներ եւ լուրդորներ, ինչպէս սովորութիւն է վերակացուաց, վասն զի գիտեմ որ միտքս պիտի չփոխեմ:

Կը խնդրեմ որ իմ երթալս ուրիշները չմտածեն իբրեւ Վանքիս գէժ հակառակութեամբ եղած, ինչպէս եղեր են ո՛մանք որ ըրեր են:

Կը խնդրեմ որ իմ կամքս Առաջակալից Ժողովքին շուտով յայտնուի, եւ Ժողովքին որոշմանը շուտով ի գործ դրուի:

Կը խնդրեմ որ իմ Պօլիս դառնալս Ժողովքին որոշմունքէն վերջը մէկէն նամակով մը իմ ծնողացոյ ծանուցուի, եւ պատճառը գրուի՝ իբրեւ իմ եւ ոչ Մեծերուս կամօքը կ'զատ:

Կը խնդրեմ որ իմ երթալուս օրս ինծի

յանկարծակի չիմացուի, որպէս զի անխընդ վրամ:

Կը խնդրեմ որ երթալէս առաջ մէյմը տեսնուիմ Հ. Իզնատիոս վարդապետին հետ, եթէ միայն իրեն հոճոյ է:

Բոլոր իմ վրաս աշխատողներուն, վերակացուաց եւ Ուսուցչաց՝ ջերմ երախտադիտութեամբ մեծապէս շնորհակալ կ'ըլլամ, եւ ո՛րչափ որ իմ յանցանքներովս եւ խեղութիւններովս զիրենք դառնացուցեր եմ, աստիկ ցաւով թողութիւն եւ անյիշազարտութիւն կը խնդրեմ, թէպէտ անտարակոյս եմ որ իրենց սէրը շատ մեծ էր իմ թերութիւններուս քով, որոնք իրենց իմ վրաս ունեցած յոյսերն եւ թափած անհուն քրքրտինքները՝ փուն հանեցին: Նոյնպէս ահոնց ամենուն որ Վանքիս մէջ ինծի հետ վերաբերութիւն ունեցեր են, շնորհակալ եմ զիս այսչափ ատեն իբրեւ իրենց Միաբանութենէն մէկը սեպելով գուցե եւ խրանա՞մք անպակաս իմ վրայ ցուցնելուն: Եւ երբէք պիտի չգաղղիմ ըսելէն որ իմ ներքին եւ արտաքին հրահանգներս Ս. Ղազարու Ս. Վանքին մէջ սորոյցեցայ:

Այս կամայց որովամաք եւ յայտարարութեանը կը ստորագրեմ:

(1862 Ապրիլ 30)

Եւ Գազեզ

Որդի Յովհաննիսի եւ Յուլիանիայ

Քահանայութեան առաջին տարուայ եւ Մուրատ Ռափայելեան դպրացում ասուցչութեան շրջանի օրագրից սեւագիրք երկու էջ

Հիւանդութիւնս օրէ օր կը սաստկանար անփարատելի տխրութիւն մը ոչ զարնանային եղանակին գեղեցկութիւնը, ոչ գուարթարար արեգական պայծառութիւնը, ոչ թուրք արուեստաւոր դասը լայիկներն եւ ոչ ծաղկանց երգիներանգ գոյներն եւ հոտաւէտ բուրմունքն թող կուտար որ վայելեմ: Այն սիրտը որ բարկ կրակի մը վառարանն էր եւ իր բուռն

դպրացուցներն ուրիշ սրտի մը մէջ թափել չկրնալուն համար ինքն իրեն կը հալէր եւ կը սպառէր, միայն խոր հառաչանքներով կ'իմացնէր ժերթ ընդ ժերթ որ դեռ ի սպառնապուռ մեռած չէ, ինչպէս հրաբխի մը խառնարանէն ընդհատ ընդհատ ժայթքած ծխէն կ'իմանաս որ բոցաշունչ վիշապն կրակ չփսխէր, բայց արթուն է: Բժիշկը պատուիրած էր որ շարժմունք ընծմ, քաղաքին մէջ շրջագայիմ, միտքս ցրուած բռնեմ. սողաչական եւ սնուի հնարք եւ հեթեթանք հիւանդութիւն մը բուժելու — որուն դարմանը միայն կին մ'է: Ո՛վ հիանալի կարողութիւն կանանց. ինչ որ բազմամեայ աղօթք եւ մրտածականք, ինչ որ արքայութեան եւ գծիոց առաւելագոնց նկարագիրները, ինչ որ ուսմունքները, քառգրքի մը ցժուարաբերտն պաշարմունքը(20), գրու-

յազրաց շոր ցամաք ընթերցումը, (անբնթնոնիի բառ) սղալոց վրայ հակողութիւնը եւ դասատուութիւնը չէին կրցած լինել, մէկ կին մը իր մէկ խօսքովը, իր մէկ նայուած լովը, իր մէկ ժպտովն կրնար ընկ. բայց ո՛ւր էր այն սիրական կինը... Շատ անգամ թերեւս ողուն մէջ կը տարածէի եւ կը կարծէի որ բռնած եմ գինքը. ցնճճը շղթաներու ձայնէն կը փսխէին բոլոր թիթեռնիկները եւ թռչունները, եւ ինծի պէս դատապարտեալ ներքինաց լուրջ եւ միզապատ երեսը կը հասկցնէր ինձ թէ յորպիսի խորաթշուառութեան մէջ կը գտնուիմ:

Դպրոցին տեսուչը նկատելով իմ ըրգալութեամբ տկարանալս՝ թոյլ տուաւ որ մէկ շաբաթ երթամ Բատուս անցընեմ եւ քիչ մը հանգստանամ: Բիրոց ճոխ բուսարերութիւնը, մաքուր եւ բարակ քամիի մը զովութիւնն եւ ընդարձակ հորիզոնի շրջապարոյթ ծիրը ոչ ոք կրնայ այնպէս ազնկ վայելել ինչպէս ամեններով անձուկ բնակարանի մը մէջ (Պախալասուրիւնը չի վերաբացել):

(20) Նորայրն սկսել էր իր ֆրանսերէն-հայերէն մեծ բառարանը, որ 1884ին Պոլսում հրատարակեց իր կնոջ փողով՝ «Բասապերք ի զուգրիւն լիզուէ ի հայերէն, յօրինաց նորայր Բ. Բիւզանդացի»:

(Շար. 4 եւ վերջ)

ՆՈՐԱՅՐ ԲԻԻԶԱՆԴԱՅԻ

Վ. ՈՒԺ

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ ՆԱՄԱԿ ՄԸ
 ԱՆԱՆՈՒՆ ԱՂՋԿԱՑ ՄԸ ՈՒՂՂՈՒԱԾ
 ԳԱՀԻՐԷ, 7 ՅՈՒՆԻՍ 1984,
 Կ. Ե. ԺԱՄԸ 12-15 - 12-45

Սիրոյ աշխարհ մը ուզեցի քեզէ,
 Բայց սիրոյ բառ մ'իսկ զլացայ քեզի.
 Կարծիքդ զեղեցիք, մտածեցի ես
 Քո պտուկներուն մեծութեան մասին:
 Կ'ուզէի ծըփալ մակոյկի նըման,
 Քարափիկ կապուած՝ տափնայ, տըրտփել,
 Զի կարծած էի երկուքնուս միջեւ
 Ամէն ինչ պարզ էր... պարտքի նըման:
 Սակայն անձն — հիմա ես կը հասկնամ —
 Պէտք է ինքզինքին հետ խօսի նաեւ:
 Յամկարծ դադրեցար զիս այցելելէ
 Ու բացատրութեան բառ մ'իսկ զլացար.
 Փորձեցի պահել հմայքը քու մութ,
 Բայց բուխ մարմնիկ հետ մեկնած էր անդարձ:
 Ինքզինքը սուի սիրոյ շուրթերուն,
 Առազաստներըս քակեցի կայմէս
 Ու արձակուեցայ... սակայն գէպի ս'ըր,
 Ո՛ր ծոցը գէպի՝ ես կ'անցիտանամ,
 Պատրաստ եմ հիմա սիրահարուելու,
 Սակայն
 ուրիշին:

ԶԳԱՅԱՀԵՐԶ ԸԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ



... Եւ պատուհանէն ծրփացող
 վարանոտ լոյսին մէջ
 Աննիւթ պարիկներ կը պարեն.
 Տիկիներ գետինը կ'աւլէ,
 Տիկիներ՝ պարարտ ու խուպոտ,
 Անիրակամ հիմա՝
 Իբրեւ առատ:
 Մ'արմինէս որդեր կը պոկուին՝
 Թեւերէս, մէջքէս, ոտներէս:
 Հանրակառքն արեւին կը դիմէ՝
 Նարինջի հիւքով օծուած.
 Բացած է արեւը կեզեր:
 Կը քերքեմ մորքըս քեփերէն.
 Նեխած ձուկ մըն է կախուած
 Ոտներուս մէջտեղ:
 Բացիլըփող աչքեր հըրաշքներ կը ծնին
 Յանկարծամտե:
 Կը փաշկոտեմ մեռելըս՝ որ մահ չունի, աւա՛ղ՝
 Լուսացնցուղ փողոցներէն:
 Ազգիկը չունի ոտներ.
 Կը ցուցնայ սասուզաբաղ.
 Կը ծածանի իբրեւ դըրօշ մշուշային:
 Կամուրջը նուէր է երկնային՝
 Կողբուած երկրէն.
 Նարինջը կը հոտի գետին հետ՝
 Կամուրջը դէպի:
 Գանկըս լեցուն է կիսով
 Կոյսուրով:
 Այլակերպ գոյութեամբ,
 Հիւքեր ըմպելով քաւշային
 Եւ գոյնի երանգներ...

ՎԱՐԱՆ ՌԻՃ

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Յ

Ե Ղ Ն Ի Կ Ը



Հոկտեմբերի վերջերին եկաւ եղնիկը, այս անգամ պուտաւոր երեք եղ-
նորթներով: Անշարժացայ պատուհանի առջեւ: Երեկոյի վերջին լոյսին տակ
հաստիք բարձրացել էր, սրունքները երկարել, իսկ վիզը շնորհալի կորու-
թինն ստացել: Ականջները յետ սրած՝ եղնիկը նոյնպէս արձանացել էր: Ձա-
ղկը ախորժակով թփերի տերեւներն էին փրցնում, մերթ ընդ մերթ իրենց
կարճ պոչերը թափահարելով: Մէկ անկամ զլուխը շուրջը գարձնելուց յետոյ
եղնիկը մօտեցաւ ցանկադառից ներս կախուած ճիւղերին: Տակաւին թարմ
տերեւներ կային: Առանց շարժում գործելու, ձայն տուեցի Ամալիային, որը
խոհանոցում ընթրիքի պատրաստութիւն էր տեսնում:

- Ամալիա՛, շո՛ւտ վար իջի՛ր:
- Ի՞նչ կայ որ, — անակնկալի եկած պտտախանեց Ամալիան:
- Եղնի՛կը, եղնիկը եկե՛լ է:
- Ո՞ր եղնիկը, — լսուեց Ամալիայի ուրախ ձայնը:
- Մեր եղնիկը:

Ամալիան զոյշ ջալլերով իջաւ աստիճաններից, նոյնպէս քարացաւ
պատուհանի առջեւ: Արևը զնայել էր, լոյսը պղտորուել: Դիմացի մարգա-
ղետինը դարձել էր դորշ կապոյտ: Մարգաղետնի ծայրում փայտէ ցանկա-
պատն էր, իսկ ցանկապատից այն կողմ անտառն էր: Հիմա եղնիկի գոյնը
փոխուեց, դարձաւ մութ սրճադոյն: Նա յանկաբժ դուռը յետ շրջեց, հաջ-
եացքը դարձրեց եղնորթների վրայ, ապա ինչ-որ ազդանշանի վրայ, ձա-
ղկը հետեւեցին եղնիկին, որը ցատկեց մազառների վրայից դէպի հարեւան
բացատը: Երբ նրանք կորան մեր աեսողութիւնից, դարձայ Ամալիային.

- Տեսա՞ր, Լղնիկը վերադարձաւ:
- Ի՞նչ գիտեա, որ մեր եղնիկն է: Մէկ տարի է անցել, Անտառը լի-
ցուն է եղնիկներով:
- Ես գիտե՛մ:

- Ինչի՞ց գիտես, — ասաց Ամալիան:
- Ես գիտեմ: Կրօնի՞ց գիտեմ: Մի՞թէ չտեսար իր սպիտակ կուրծքը:
- Բոլոր այծեամեներն էլ սպիտակ կուրծք ունեն:
- Սակայն մեր եղնիկի կրծքի սպիտակի վրայ սեւ գիծ կայ:

Մեզ մօտ եղջերուներ ու եղնիկներ շատ կան: Երբեմն անտառից ու շքերհայտյա ճահճուտներից դուրս են դալիս դաշտերը, մտնում տնամերձ այգիները կամ շուտարած կանգնում ճամբի եզրին: Աշնան վերջերից մինչև ձմռան սկիզբը սկսում է սպանողը: Մթնշաղին ու վաղ առաւօտեան հրացանի տրաքոցներ են լսում ծառախիտ բլուրներից: Բնիկները ջանում են մտի պաշար ապահովել՝ ծմբան երկար ամիսների համար: Այդ շրջանում ես սարսափեմ ապրում եւ խուսափում եմ անտառի խորքերը գնալուց: Ո՞վ գիտէ, լաւութեան մի գնդակ կարող է գալ ու զգեստն էլ ինձ: Այդպիսի դէպք ասկաւին չի պատահել: Սակայն ո՞վ գիտէ: Այս բարձունքներում ժամանակին ապրել են կարմրամորթները՝ ալգոնկուիները, որոնք այս շրջանը կոչել են «Հազար բլուրներ»: Որքա՞ն աստ է եղել մինչև որ եկել է Սպիտակ մարդը: Հիմա ոչ մի կարմրամորթ չի մնացել: Փոխարէն, Ենիֆազ բլուրի վրայ կատուցել են մի թանգարան՝ ցուցադրելով Ալգոնկուին ցեղախմբի կեանքն ու կենցաղը: Իմ ամէնօրեայ պտոյտի բերումով ճանաչում եմ գրեթէ բոլոր որսորդներին, ոմանք ինձ դրացի են, ամենամօտ հարեւանս երեք մղոն հեռաւորութեան վրայ է ապրում: Ըստ օրէնքի, արածուսթիւն ունեցող որսորդը մէկից աւելին որսալու իրաւունք չունի: Սակայն օրէնքը զանցողներ կան: Մանդի Բրուէնզն օրինակ: Նա Եարաթ առաւօտեան խփել էր իր երկրորդ եղնիկը: Մանդի Բրուէնզի դէպքում հասկանալի է: Նա ութ բերան ունի կերակրելիք, հինգը իր գաւակները, երեքն էլ քրոջ որբերը: Այդուհանդերձ, որսորդները նկատմամբ վերապահութիւն ունեն:

Նոյեմբերից ի վեր մի նոր որսորդ է երեւացել մեր բլուրների վրայ: Սրճագոյն մի հին ինքնաշարժ ունի, որը կանգնեցնում է Սօսիների ճանապարհին բեկուղ կէտում, թաւուտի եզրին: Հետուից նկատելի է ինքնաշարժը: Նախ կարծեցի, թէ քնութեան սիրահարի մէկն է: Ճանապարհը բարձունքի վրայ է: Ճանապարհի մի կողմում անտառը բարձրանում է, իսկ միւս կողմում բլուրի լանջը իջնում է ձորակ, որից անդին Սօսիների անտառն է տարածուում, կորելով մթութեան մէջ: Երբ մօտեցայ ինքնաշարժին, դատարկ էր: Ներսում, նստարանների վրայ պարանի մի խուրձ տեսայ, աղտոտ լաթի կտորներ, մի քանի դանակ, ծխախոտի տուփեր եւ պառկած մի հրացան: Ձգացի, որ մէկը մօտենում է: Ծուռ եկայ: Նախ՝ մորթէ մի դռակ տեսայ, ապա՝ խանձուած մի դէմք: Մարդը բարձրացաւ բլուրը, կտրեց ճամբան, կանգնեց իմ առջև: Ձմեռ էր: Միջատասկ մէկն էր, փաթաթուած հողագոյն բաճկոնի մէջ, տարատի ծայրերը խրած բարձրալիզ ցիխոտ կօշիկների մէջ: Նրա բերանի անկիւնում մխում էր գլանիկը: Նրա դէմքն էլ հողագոյն էր, միականց խաչածեւոյ կնճիռներով ծեփուած: Աչքերը հագիւ էին երեւում: Նա անուտզն եօթանասուն տարեկան կը լինէր: Նրա հրացանից վառօդի հոտ էր դալիս: Անակնկալի եկած՝ ասացի.

- Լաւ օր է, չէ՞:
- Չպատասխանեց: Մեր միջև անմիջապէս դոյաջաւ պատուարը: Նա մըտաւ ինքնաշարժ, հրացանը դրեց ծնկի վրայ, ծծելով դլանիկի ծուխը:
- Ատում են զիւերը ձիւն պիտէ դայ, — ասացի:
- Այո, — մեքենաբար պատասխանեց որսորդը:

— Գուցէ վազը բախող բացուի, — ասացի, ատելով ինձ, ասածիս չամար:

— Տեսնենք, — ասաց որսորդը, խուսափելով իմ հայեացքից: Նա շարունակ դիմացն էր նայում:

— Ես զնամ, — ասացի:

Նա չպատասխանեց: Ես զնացի: Գիտէի, որ Քրնթիքը թիւ եանքիները քշախօս են, սակայն այս մէկը ուղղակի անհաղորդ էր: Զդիտեմ ինչու այդ վայրկեանից հակակրանք պիտի նրա հանդէպ: Այնուհետեւ բազմաթիւ անդամներ հանդիպեցի որսորդին Սօսիների անտառը եզերող ճամբայի տարբեր կետերում, ինքնաշարժի մէջ, հրացանը ծնկին: Մի անգամ ձեռքով բարձրացի նրան, չպատասխանեց: Մտնեցայ: Քնած էր ձեւացնում: Մի ուրիշ անգամ ուղեցի իր որսորդները հարցնել, չէ՞ որ մենակ էինք, Գեկտեմբեր էր եւ Հիւֆիդի բլուրները տխուր էին: Որսորդը մեզենայի պատուհանը փակեց, զլուրը թողեց լրացրի մէջ: Այդ բուրբը շէք պատահի, եթէ ես հանդիպած չլինէի եղնիկին:

Այդ օրը անազին դործ ունէի: Զայնասփիւսը յայտնեց, թէ կէսօրին անձրեւ պիտի դայ, ասպ՝ մին: Որոշեցի իմ առօրեայ շորս մզոն պտոյաը կատարել վաղ առաւօտեան: Ոտքից զլուր փաթաթուեցի բրդեղէնի մէջ, ճամբայ ընկայ: Եկեղեցու վերին բլուրի ճամբան բռնեցի, դուրս եկայ Ուայթհէդի կաթնաբուծական ագարակի դաշտերը, մարգագետնի ծայրում հայտնէն խօսեցի կովերի հետ, թեքուեցի ղէպի Սօսիների անտառը: Թաց մառախուղը կախուել էր երկնքից, իջել անտառի վրայ, նստել բլուրներին: Ճամբի բեկման այն կէտում, ուր դառիվարն է սկսում եւ ուր առաջին անգամ հանդիպել էի որսորդին, ինչ-որ նախազգացում մի անխթարթում քարացումի մատնեց ինձ: Զնացի ամբողջ մարմնիս փշաքաղուելը: Մտտաւ քաղ հետաւորութեան վրայ, ժայռուտ կտրուածքի ղլիսին կանգնել էր եղնիկը՝ խրոխտ, մաքուր, ազատ: Մեր հայեացքները մի պահ հանդիպեցին: Եղնիկի պարանոցի տակ, կրծքի սպիտակի վրայ շեղբի պէս փայլում էր սև եռանկիւնին: Տեւեց երկար լուծիւն: Եղնիկը դունչը վեր բարձրացրեց, հոտտեց միջոցը, զգոյշ վար իջաւ ժայռակոյտից, ամբողջութեամբ դաշն ու վայելչութիւն, կտրեց ասֆալտապատ ճանապարհը, յետ դարձաւ, աչքերով մի անգամ եւս շոյեց անջրպետը, պրկեց մարմինը ու մի ոտիւնով իջաւ բլրի լանջին: Ուղեցի կանչել, մի բան ասել: Եղնիկը արագ մտաւ մառախուղի մէջ:

Երբ ատեն վերադարձայ, Ամալիան դեռ ննջում էր: Արթնացրի նրան.

- Գիտե՞ս, ճամբին տեսայ մեր եղնիկին:
- Ի՞նչ կոչեի, — աչքերը կիսազոց խօսեց Ամալիան:
- Մեր այգու եղնիկը:
- Եղնի՞կը, — սթափուեց Ամալիան, — որտե՞ղ է եղնիկը:
- Սօսիների անտառում: Քիչ առաջ տեսայ մեր եղնիկին:
- Ինչի՞ց գիտես, որ մեր եղնիկն է:
- Գիտե՞մ, գիտե՞մ: Կրծքի սև խաւը: Նա ինձ ճանաչեց:
- Շատ եղնիկներ սև գիծ ունեն կրծքներին, — ասաց Ամալիան, ապա՝ ձայնն ու հայեացքը փոխեց, — վստահ ես:
- Այո, վստահ եմ: Ես գիտե՞մ մեր եղնիկին:
- Որ այդպէս է, այսօր զնանք թարմ սերեւ հաւաքենք: Անպատճառ սնոթի է խեղճ կենդանին:

Յաջորդ օրը ճանապարհի նոյն կէտում կանգնած էր սրճադոյն ինք-

նաշարժը՝ ինչպէս սպառնալիք համատարած սպիտակութեան մէջ: Արեւի մէջ քայլելով մօտեցայ: Որսորդը շփար: Անպատճառ դարան է մտել անտառում: Այս ու այն կողմ նայեցի, ապա՝ առանց այլեւայլի, մեքենայի առջևի աջ անիւնի ողախցանը հանեցի, ինքնահոս գրչիս ծայրով այնքան սեղմեցի մետաղէ լիզուակը, մինչեւ որ անիւնի օդը ամբողջովին դատարկուեց: Վերարկուիս օձիքը վեր բարձրացրի, շարունակեցի ճամբաս: Լուս մենամարտը սկսուել էր: Ատուճ էի որսորդին, թէեւ տրամաբանութիւնս այլ բան էր ասում: Մակայն ո՞վ է լսում տրամաբանութեան: Որսորդը այնչաւ լվերադարձաւ: Երկու օր յետոյ սրճադոյն ինքնաշարժը դասայ մեր այգուն կից եղիպատացորենի դաշտերը տանող կածանի ծայրում: Դաշտերը եղբրում էին Սօսիների անտառի արեւմտեան ջղանցքները: Ուրեմն, որսորդը իր սրողայթը տարածել է: Նոյն օրը հովիտ իջայ, մանրերկաթեղէնի խանութից հրկու դոլարով խաւարտեայ տպագիր մի ազդարի գնեցի, վերադարձայ ու ազդարի դամեցի կածանի մուտքի ձախ կողմի հին կաղնու բունին: Ազդարի վրայ գրուած էր՝ «Աստուար սեփակման քիւն: Որայլը արգիլուած: Մուտքը արգիլուած: Օրէնքը խախտողը կ'նմքարկուի 300 դոլարի տուգանքի եւ 30 օրուայ բանտարկութեան»: Ազդարի բաւական տպաւորիչ էր: Մուտքը վերաբերուիս գրպանի խոթեցի եւ բաւարարուած սուճ վերադարձայ: Գիտէի, որ արածս ապօրէն էր, սակայն, մտածեցի, զէպէր կան, երբ մարդ ինքը պիտի տնօրինի օրէնքը: Սրճադոյն ինքնաշարժի հետքը կորու: Վերադարձայ բնականոն կեանքիս: Ազդարի դամելուց մօտ մէկ շաբթ էր անցել, երբ մեր քաղաքի օրաթերթը ինձ կործուղեց հարցազրոյց ունենալու Քատերազի Արթուր Միլլերի հետ, որ ապրում էր մօտակայ գիւղաւանում: Ճամբաս կարճելու համար բռնեցի գետափի քառուղին, որը գտնուում էր Սօսիների անտառի հարաւային լանջում: Գարձարձիկ արահետներից հաղիւ էր առաջանում ինքնաշարժը: Երբ բացատ դուրս եկայ, ի՞նչ տեսնեմ: Դիմացում դանդաղ շարժւում էր սրճադոյն մեքենան: Որսորդը հրացանի փողը ուղղել էր զէպի բլուրը, ուր մի խումբ եղջերուներ ու այծեամենք, պարանոցները շարած՝ եղեւնիների հեղեղ էին փրցնում: Ահարեկում՝ արիս սեղմեցի ինքնաշարժի ազդարի ողիս: Եչակի զիւ ճիւղը ջանդեց մեռնային անդորրը: Եղջերուները իտեւասպահար զէս ու զէն վաղեցին, կորան անտառի մըթութեան մէջ: Լսուեց հրացանի մի բուժ թնդիւն: Ներսումս յանկարծ մի խուրձ զսպանակներ բակուեցին: Ոտքս ամուր սեղմեցի ինքնաշարժի վառելիքի սրճադոյն: Հնց այն է պիտի զարնէի որսորդին եւ դեպք հրէի, երբ սրճադոյն մեքենան ընդոտ ուղղութիւնը փոխեց: Ետրունակեցի տաշ սուրբալ, ինքնազէկ, ինքնամուղ, մինչեւ որ հասայ կամուրջ:

- Երեկուեան, ընթրիքի սեղանին՝ Ամալիան դարձաւ ինձ:
- Պեսկիդ ձեռք չես տուել, ի՞նչ է:
- Ախորժակ չունեմ:
- Քեզ լաւ չե՞ս դուռ:
- Ոչինչ, յոգնած եմ, կ'անցնի, — պատասխանեցի՝ տխուր ժպիտի պէս մի բան զսպանալով Ամալիայի հայեացքից:
- Դուք տղամարդիկ, բոլորը էլ շախաչաս մանուկներ էք, — տոաց Ամալիան:

Եղջերուները այնչաւ շտեպայ: Բայց վատահ էի, որ այցելում է այգին եւ մեր ժողոված թարմ տերեւները վայելում: Ցանկապատի մօտ տրորուած խոտի հեաքեր կային, այս ու այն կողմ սեւ գնդիկների մանր բուրգեր: Այդ օր անըս-

պատելիօհն պայծառ էր երկինքը: Արեւը թեքուել էր Սօսիների անտառի մէջքին, լուսը արտացոլուել ճերմակ բլուրների ու հանդերի վրայ: Պայծառ ցուրտ էր, ա՛յն աստիճան, որ կարծես ապակեայ վարաչոյր կախուած լինէր միջոցում: Դեռ հեռուից նշմարեցի սրճազոյն ինքնաշարժը այն նոյն վարրում, ուր տեսել էի առաջին անգամ: Ուրեմն, որսորդը վերադարձել է: Քայլում էի ճամբի մէջտեղից: Միակ անցորդն էի, ինչպէս սովորաբար: Հանդիպումը ինձ մղձաւանջ էր պատճառում: Ակամայից դարձել էինք թշնամիներ: Երբ մեր միջև տարածութիւնը նուազեց, որսորդը իջաւ ինքնաշարժից, կանգնեց ճամբի կենտրոնում՝ Հրացանը ձեռքին: Որքան մօտենում էի, այնքան նրա հասակը պարթեւանում էր: Մի պահ կանգ առայ: Իբր թէ կօշիկիս թռւլացած կապն էի ամբոցնում: Վախը պատել էր ինձ: Վերադառնում քանի ուշ չէ, մտածեցի, սակայն շարունակեցի առաջանալ: Երբ հասայ որսորդին, նրա հասակը իջաւ: Նրա դէմքը աւելի մոխրագոյն էր դարձել — չափորուած երես, բերանը կապոյտ գիծ: Ինձ թուաց, թէ նա մահանում է:

- Դու շան ցնկնած, — ասաց որսորդը՝ ձայնում ժանդ ու մաղձ:
- Դո՛ւ ես շան ցնկնած, — պատասխանեցի:
- Դու բողի զաւակ, — շարունակեց որսորդը:
- Բողի զաւակը դո՛ւ ես, — պատասխանեցի:
- Որսորդը հրացանի փողը ուղղեց կրծքիս:
- Որ բողի զաւակ չես, ինչո՞ւ ես ինձ հալածում, — ասաց որսորդը:
- Ես քեզ չեմ հալածում, — պատասխանեցի:
- Եթէ քեզ հենց այստեղ սպանեմ, ոչ ոք չի իմանայ, — ասաց որսորդը:
- Ինչո՞ւ պիտի ինձ սպանես: Ես քեզ ի՞նչ եմ արել:
- Դու ուզում էիր ինձ դետը դլորել, — ասաց որսորդը:
- Հրացանը լեցո՞ւն է:
- Այո, լեցուն է, — պատասխանեց որսորդը:
- Դէն դէր հրացանը, որ խօսենք:
- Ինչո՞ւ ինձ հանգիստ չես թողնում, — ասաց որսորդը, հրացանի փողը իջեցնելով վար:
- Ես նոյնիսկ քո անունը չգիտեմ:
- Միեւնոյնն է, դու ուզում էիր ինձ սպանել, — ասաց որսորդը:
- Ի՞նչ գիտես, որ ես էի:
- Կարմիր ֆորդը ո՛ւմն է՝ եթէ քոնը չի, — ասաց որսորդը:
- Դու ապօրէն բան ես անում, որսալու շրջանն անցել է:
- Դու ի՞նչ գիտես, — հաղիւ արտաբերեց որսորդը, ձայնը նուազեց, կարծես հրարուիս պայթեց նրա ներսում, ազատ ձեռքը կրծքին տարաւ մեղմելու շոր հաղը, որը խեղդում էր նրան: Երբ հանդարտուեց, բերանը բացեց, աղմուկով թքեց ձիւնի վրայ, թեւով սրբեց երեսը ու մի զլանիկ վառեց:
- Թերթում կարդացի:
- Դու բան էլ չգիտես, — ասաց որսորդը՝ տակուէին շնչակեղծ:
- Հիմա եղնիկների յղութեան շրջանն է:
- Պարո՛ն, ես քեզ մի բան ասեմ, — ասաց որսորդը:
- Ասա:
- Դու գեռ ծնուած չէիր, ես որսորդ էի: Ես քեզանից լաւ գիտեմ,

Թէ ինչը ինչ է: Ես այս բլուրների ամէն մի խորը պիտեմ: Ես գիտեմ իմ որսը: Գուք քաղաքացիներդ ի՞նչ գործ ունէք այստեղ: Ինչո՞ւ չէք վերադառնում ձեր անիծուած նիւ Եւրօքը: Ձեր դաւուց ի վեր մեր կեանքը խաթարուել է: Օրէ՞նք: Օրէնքը ա՛յս է, — ասաց որսորդը՝ ձեռքը փորին զորնեկով:

- Այս տարի քանի՞ եղնիկ ես որսացել:
 - Ոչ մի հատ:
 - Ոչ մի հատ:
 - Գու ինձ հանդիսու թող: Ես ջորդ անգամ դուրսդ կը պայթեցնեմ,
- ասաց որսորդը:

Նա մի քանի քայլ նահանջեց, աւելի պարտուած քան յողթական, ուսերը հաւաքեց, դանդաղ յետ դարձաւ, քայլեց դէպի ինքնաշարժը: Մեքե-նան տնքաց, բութ հոնդիւններ արձակեց, մի պահ դողաց, շարժուեց իր տեղից, հեռացաւ՝ ծուխի ու գոլորշու մի վիթխարի ամպ թողնելով իր ետին: Ես կանգնած մնացի ճամբի մէջսեղում:

Եթէ թէ ութ անգամ մահը անակնկալօրէն երեւացել է ինձ, այսպէս ասած՝ նայել բրեքիս ու չբացել եւ ամէն անգամ չեմ զգացել իր ներկայութիւնը: Միշտ էլ արկած է եղել: Ես մասնակից չեմ եղել արարին: Ես իմ գործին եմ եղել, մահը յանկարծ եկել է, ցցուել առջեւ: Միշտ էլ, այսպէս ասած՝ իրերի դասաւորման եմ վերադարձել: Երկվայրկեանի խնդիր է եղել: Այս անգամ, սակայն, պարզ տեսնում եմ, որ անխուսափելի առջեւ եմ կանգնած: Որսորդը եղնիկին չէ որ հետապնդում է, այլ՝ ինձ՝ Գետափի զէպը օրինակ: Ես ուզողակի դէպի մահն էի քլում իմ մեքեանս: Ձլինի՞ թէ այս բլուրը ինչ-որ դեռային մի բեմադրութիւն է:

- Որսորդի հետանալուց յետոյ էր, որ սարսափի ալիքը ինձ հասաւ:
- Ձուգահոտարը՝ կարեկցեցի որսորդին:
- Տուն վերադարձայ, հետախօսեցի բարեկամին՝ Սանդի Բրուէնզին, որը մեր ասանի ազգադիրն է համարում, բոլորին նանաչում է, եթէ պորտից սկսած:

— Ո՛չ, այդպիսի մէկին չեմ նանաչում, — ասաց Սանդի Բրուէնզը, — անպատճառ թափառաշրջիկի մէկն է:

Այդ օրուանից ի վեր շտեսայ որսորդին: Եարուեսակեցի իմ ամէնօրեայ զբօսանքը Լիշֆիլդի բլուրներում ոչ այնքան որպէս մարգանք, որքան որպէս հաղորդութիւն բնութեան հետ, ինձ հետ: Փաստօրէն, փնտրում էի որսորդին, ուզում էի բաներ ասել, որ չէի ասել, չլինի՞ թէ հիւանդ է: Եղնիկները զլոյշ էին դարձել: Հազուադէպ էին դուրս գալիս անտառից: Այլեւս տերեւ չէր մնացել ծառերի վրայ: Ձրօսանքիս ճամբան փոխեցի: Փոխանակ Սօսիների անտառի ուղղութեամբ քայլելու, ձախ թեքուեցի, կորեցի կաթնարուձական ազարակի կածանը, բռնեցի ճահճուտների ուղին, դուրս ելայ խնձորենիների այգիները, որոնց ծայրին բացւում էր հովիտը՝ շրջապատուած անտառուտներով, յուսալով, թէ օրեւէ տեղ կը հանդիպեմ որսորդին: Նա կարող էր ինձ մնասել, սակայն չկրակեց: Հետզհետէ անդրադարձայ, որ ես բնաւ նրա աչքերը չտեսայ, միշտ կկոցուած էին թաւ յօնքերի տակ: Գուցէ նրա տեսողութիւնը խաթարուել է: Գուցէ նա վանում է ապացուցել իրեն, որ տակաւին երկկուայ փորձ որսորդն է, չլիտեմ: Այս անգամ բռնեցի Սկոֆիլդի դաւտերի ուղղութիւնը: Որսորդը չկար: Ամէն անգամ երբ մտաբերում էի գետափի զէպը, ցնցում էի: Ժիշդ էր նա: Ես որոշել էի նրան իբր ինքնաշարժով գետը դուրսել, իսկ նա հրացանը վար դրեց: Իմ փնտառուքը

լարունակուեց մինչեւ Դեկտեմբերի կէսերը, ապա զործով Թորոնթօ զնացի: Մէկ շաբաթ յետոյ երբ առն վերադարձայ, այլեւս մոռացել էի որսորդին:

Երկուշաբթի էր: Գիշերը երկու ոտք ձիւն էր տեղացել: Հոկտեմբերին անտառից բաւական փայտ էի բերել, կուտակել թղկենիների տակ, սակայն ծուլացել էի կոճղերն ու վերանները շարժել պատամիջի կրակարանի համար: Մինչեւ Էրեկոյ կացինով ջարդեցի փայտը, դասաւորեցի, երկրորդական քառակուսիների վերածեցի եւ այն է պատրաստուեմ էի ջրակայուն ծածկոցով պատել զէզը, երբ այդին արձագանգեց հրացանի թնդինով: Առաջին թնդինին հետեւեց երկրորդը, երրորդը, մի քանի վայրկեան ընդմիջումից յետոյ յաջորդեց չորրորդ եւ հինգերորդ պայթիւնը, ապա տիրեց լռութիւն, սակայն իմ ականջներում շարունակուեմ էին կրակոցները, հետքահետէ օրհասական տարածք ստանալով: Կասկած չունէի, որ պայթիւնները եկել էին եգիպտացորենի դաշտերի կողմից: Կանգնեցի ձիւնի մէջ եւ գազանի պէս ոտնացի, երկար ու հայհոյալից, ալիսարհի հասցէին, զիտէի կատարուածը, հագար անլամ աւրել էի կատարուածը, չէի ուզում հաւատալ կատարուածին: Այնքան անզոր էր աշխարհը այդ երեկոյ: Մտապատկերիս մէջ շարունակ ներկայ էր եղնիկի մաքուր աչքը՝ վերջին անգամ երբ շոյեց միջոց եւ դունչը հորիզոնին տուած ցատկեց բլուրն ի վար դէպի անտառի լանջը, թեթեւ ինչպէս զեփիւռ, մինչեւ որ մատախուզը կլանեց նրան: Տնեցիները դուրս թափուեցին: Միայն այն իմացայ, որ մազլիցեցի աչքու քարէ պատը, մտայ հարեւան դաշտը, վազեցի դէպի անտառը, որը յաւիտենութեան լափ հնու էր, ձիւնը խոր, քայլերս դանդաղ, մարմինս թունոտ, ցարձ նանկատու էր կուրծքս: Որքան խորանում էի անտառում, այնքան տարածուեմ էր անտառը, ո՛ւր զնալ, ի՞նչ անել: Երկար որոնելուց յետոյ ուղղուեցի դէպի ծառայիտ կածանը, շարունակ յուսալով, որ եղածը վրիպանք է, որ անտառը պիտի շարունակի իր կեանքը:

Հեռուից լսուեմ էր Եդիսկոպոսական եկեղեցու զանգերի ղողանջը, բայց ոչ թէ արեւելքից, ուր հովիտն էր, այլ՝ հանդիպակաց բլուրներից: Զլինն՞ թէ ձմեռնային երեկոն խաղ է խաղում: Մովորաբար, որսորդը երկու, ամէնից շատը երեք զնդակ է արձակում: Հինգ զնդակը այլեւս որսորդութիւն չէ, այլ՝ սպանդ: Գուցէ հեռաւոր կիրճերում ինչ-որ մէկը նշանառութեան փորձ արեց: Անվերջ էր թուեմ անտառը: Ես զիտէի անտառը, նոյնիսկ իր մթին խորշերը, սակայն ձիւնի տակ կերպարանափոխուել էր բնութիւնը, միանգամայն անճանաչելի դարձել: Կածանը ինձ տարաւ խորքերը: Յանկարծ դիմացում մի կիրճ բացուեց, վար իջայ, երկու անգամ սայթաքեցի, թաւալվար ընկայ մացառուտների վրայ, ոտքի կանգնեցի, շարունակեցի վայրէջքը: Կիրճը փաստօրէն պոռնոն էր մի այլ ձորի, որը մութ էր ու անթափանցելի: Այստեղ մութը թանձր կապոյտ էր: Ուռնապի մատնուեցի: Հետզհետէ պղտորուեմ էին գծերը: Բունեցի կիրճի ամէնից դիւրամատչելի լանջը, վեր մազլիցեցի, մինչեւ որ հանդիպեցի իմ իսկ ոտնահետքերին: Այնուհետեւ ի սպառ մոլորուեցի: Ոտնահետքերը ինձ տանում էին անծանօթ թաւաւտներ, ապա բերում այն նոյն կէտին, ուր սկսել էի: Այստեղ լոյսը սպիտակ էր, մէզը մնացել էր կիրճում: Գուցէ իմ ոտքի հետքերը չեն: Քայլեցի դէպի լոյսը: Անտառը նստացաւ, այս ու այն կողմ եղեւիներ տարածուեցին: Ընդարձացել էին սրունքներս: Ամէն մի քայլը գերմարդկային ճիգ էր: Անտառը որոշել էր կուլ տալ ինձ:

Մի պահ կռթնեցի ծառին՝ շունչ տանելու համար: Մտրմինս հրդեհուեմ էր: Ծառերի մերկ ճիւղերը տէգերի պէս խրուել էին երկնքի մէջ: Մտածեցի

վերադառնալ, սակայն այնքան յոգնած էի, որ ուզում էի նստել ձիւնին ու հանգչել: Մի քանի քայլ հեռաւորութեան վրայ արեան բծեր տեսայ, հետեւեցի արեան շաւիղին, որը մերթ այս, մերթ այն կողմ էր դառնում, արեան հետքերը մերթ կտրում էին, ուստի բոլորածեւ երկարում, թեքում, աստիճանաբար թանձրանալով, վառելով ձիւնի ճերմակը, մինչեւ որ կարծիքը խտացաւ, լայնացաւ: Դեւեր էին մարտնչել ձիւնի վրայ, անտառը բոսոր էր փոխել: Այդ կէտում ալանդակ արահետ էր բացուել: Հետեւեցի արահետին, որն ինձ տարաւ թաւուտ, թաւուտի բերանում կողի վրայ ընկել էր եղնիկը, պարանոցը կախ, սրունքները չոած: Մօտեցայ, նշնակը աչքերը յատել էր դիմացի մացառներին: Նրա մարմինը արեան բազմադրէր վտակներէ էր վերածուել: Երբ աւելի մօտեցայ, մոխրագոյն մի գանդուած նշարեցի եղնիկի փորի տակ: Որսորդն էր, գլուխը կիսով թաղուած ձիւնի մէջ, երեւում էին միայն նրա անթարթ, սղոտոր աչքերը: Նա թեւերը առաջ էր պարզել, ձեռքերով ճանկել մացառը, անշարժացել: Նա փոքրացել էր, Երբեմն քամին շոյում էր նրա ճերմակ մազերը: Որսորդը պարանով եղնիկին կապել էր իր ուտերին: Թաշիխակով մաքրեցի եղնիկի կրծքի լերդացող տրիւնը: Նրա սպիտակ լանջի կենսորոնում սեւ եռանկիւնի շերտ կար, որը փայլում էր շեղքի պէս:

ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՅ

1 Յունուար 1985,
Կընթիւքը

Ք Ա Մ Ի Ն Կ' Ա Ն Յ Ն Ի

Անտառին մէջ՝
 Ծառերն ամէն
 Մարդանման ստուերներ են,
 Որոնց միջեւ՝ Քափառայած տաղերգու՝
 Քամին կ'անցնի
 Սօսեաց Քաճուն բարբառին յուշամտեանն համբուրելէն...

Իւ աշնամերձ շուփերու յուզարկաւոր ակնքարք՝
 Ան՝
 Տեսադաշտի վրայ անվազորդայն սեւեռման՝
 Կը մնայ լուկ ուղեւորն, իր հայնացքին մէջ բանալով
 Վերահաս ցիչը օրուան:


Կ'անցնի քամին.
 Ու հեղումովն իր վարարուն ծիծաղին
 Կը շղարշէ Քալիծը մեր ամայացած օրերուն,
 Ուր բլուրներ երկններանգ՝
 Հողի բոյրով կը մրան...

Համբոյսին պէս,
 Որուն ծնունդն ու թուականը մահուան
 Միշտ անծանօթ կը մնան,
 հաշտարին վրայ շուրթերուն՝
 Հոտ, քամի՝,
 Մտածումիս ցօզուններուն ընդմէջէն,
 Ուր կոկոններն իրիկուան
 Վազուան վարդով կը լուսնան...

Եզիր բապէն
 Ու չպզծուած ժամանակի կշռոյթով՝
 Յայց տուր ինձի
 Ան՝ որ կու գայ,
 Զի աչքերուն սոււրբական կանաչէն
 Նախադարեան անտառ մը՝
 Անհետացած իր թռչունին հմայքով՝
 Կը խուզարկէ քարանձաւներն հաւատքիս...

Ճայ մը՝
 Իր սպիտակ առանձնութեամբ՝
 Մաք ստուերիս կը ձուլուի...

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ



Վ. ԹԵՔԵԱՆ

ԱՆՅՈՂ ԵՒ

ՀՈՂԱՅՁՕՐ



Բախտաւոր է այն սերունդը, որ կ'ունենայ դոնէ մէկ բանաստեղծ, որուն քերթորութիւնը ամէն շնորհի վրայ ծածանող ծուխ կը դառնայ, որ կ'առնէ իր սերունդը բնորոշող իրավիճակն ու զգայութիւնները եւ անոր ոգեկան կայմին համար դրօշ կը շինէ: Հարկադարար եւ նոյնքան ահաւոր բան է բանաստեղծ ըլլալ Սփիւռքի որեւէ ժամանակաշրջանին:

Մնիլ եփբառի շամբուտն հազիւ ազատած ընտանիքի մը մէջ՝ հոթնասուն տարիներ առաջ, ապրիլ արտասուքի շաւղի եւ որբերու հառաւանքներու միջեւ, եւ կարենալ կերտել ոգեկան հիացք, ու ծաւալիլ այնտեղ ինչպէս լոյս եւ ոլորտ, մարդ հայ ըլլալու է եւ բանաստեղծ, այսինքն՝ Ժապ Եսկորեան:

Ազգային ետք ամբողջ սերունդ մը մնաց կարիքի եւ պատրաստի բաւիշներուն մէջ. պէտք էր փրկել մարմինը եւ հոգին. եւ երկու սերունդ անդու լծուեցան հացի եւ երգի ստեղծագործութեան: Մրբեմն ծննդայի, երբեմն Թիթեզի ազմուկներուն մէջ՝ խորերէն հասնող ձայնը արձագանդեցին, անոնցմէ կ'անջատուէր ոսկեգոյն ձայն մը, որ կը բխէր մեր պատմութեան

ներուղումէն՝ ստեղծելով Հրաշակերտ երթ մը: Ձայնը ժազ Յակոբեանինն էր, ուր յաճախ Հրահապազ գնդապետի ահազնութեամբ կ'իջնէին իր բառերը:

Մենք աշխարհ մը թո՛ք, Սփիւռք մը կարօտ,
Ջահաւոր Հայկի՛ ձեռքի՛ն տակ
Մենք՝ աստղի գուճար ու դա՛ր մը քայլեր,
Մենք՝ հազար դրօշի մեծաշաչ կոնա՛կ,
Յաղթանակի ճայնն ենք քառամրակ:

Քորհրդանշաններով ողորուն զերթուածներ գրեց, որ միայն Հայը պիտի բմբոնէ:

Մենք՝ յարուցեալ Տէր-Ջօր,
Հեղեղոյ Մեք, մեր ձեռքը՝ շեփօր
Եւ կամբը՝ վահան եւ կռուփը՝ ուսմբ,
Արախ ու Արախ, առի՛ծի՛ բամակ,
Վաղուամ վառ ու գառ յաղթութեան կ'երթանք:

Բայց որո՞նք էին այս բանաստեղծին կեանքին հիմնական կայանները: Մնած է Երուսաղէմ՝ 1917ին: Մանկութիւնն ու երիտասարդութիւնը կ'անցընէր Գահիրէ: 1956ին կ'երթայ Լիբանան, ուր կը մնայ ինը տարի եւ կը դասաւանդէ Հայ լեզու եւ գրականութիւն կենաց վարժարանին մէջ: Այնուհետեւ, իր կինն ու չորս զուակները առած՝ կ'անցնի Աւստրալիա, եւ այդտեղէն՝ Լոս Անճելըս, գաղթաշարժի վերջին կէտը, ուրկէ անդին ուկիրանոսն է այլեւս: Եւ այս Հայտոյ պատմութեան մէջ մէկ բան անխախտ կը մնար. իր ստեղծագործութիւնը: Իր գործերը մրկարաւ յորձանքի նման Հեղեղեցին Սփիւռքը: Ժազ Յակոբեան իր մանկութիւնը շերտեց, իր եսի ճամբաներուն մէջ չպարտեցաւ: Գիտակից էր իր կոչումին, որ գրելէ անդին է. Հակառակ դեղագործութեան վկայական ունենալուն, դարձաւ ուսուցիչ՝ Պէյրութի մէջ. եւ մէկ մասեանէն միւսը իր կոչումին գոյութիւնը ցուցաբերեց: Առաջինը «Գաղտնի մամբան» էր՝ Հրատարակուած 1938ին — սիրոյ ոսկեղենիկ բուրաստան մը Մեծարենցոյ թաթաւուն, անոր յաջորդեցին «Մեղրալուսիմ»՝ 1941, «Մեքապաշուկ»՝ 1946, «Մարդ մը մեռաւ»՝ 1947, «Վերածնունդ»՝ 1949, «Աստուծայ փառքի՛ն համար»՝ 1959, «Ջահիրթ»՝ 1964, «Յիսուսարայր»՝ 1965, «Մասիսածիմ»՝ 1966, «Ժազափունդ»՝ 1969, «Հրաշաղար»՝ 1978, եւ «Ուլունգաշար»՝ 1983: Գումար՝ 2050 էջ սպազբուած, 1000 էջէ աւելի՝ անտիպ:

Բանաստեղծը ներքին կեանքի մը ուղեկիցն է ամէնէն առաջ, ուր ուրիշներ կը վարանին ընթացակցելու: Յատկապէս երբ իր զերթողութեան մէջ իր անձը չկայ, Մեք-ի մը, կայուցեան մը խօսնակն է: Ժազ Յակոբեանի բանաստեղծութիւնները կը շողարձակեն լոյսը իր սերունդի կեանքէն, հոգեբանութենէն վերբերուած յստակ պատգամներու:

Հայկի բուռնգէն հրաբխած ճիգա՛կ՝
Անհունէն կու գանք, յաւերժիմ կ'երթանք:

Անոկիդը եւ անվերջ ազգ մը ըլլալու դաղափարը կայ այս տողին մէջ: Այսպիսի ժողովուրդի մը գաւակը ըլլալուն Համա՛ր է, որ ս'յաջան կառուցողապաշտ է. բան մը պիտի չփլի. այսբան հաւատացեալ է եւ ոչ թէ հաւատաքննիչ: Հոն՝ ուր սերնդակիցներ կոտորած եւ աւեր կը տեսնեն, ինք պիտի տեսնէ բերդ ու դզիրը եւ, թերկացած Աղէտին հազցուցած սուսի հանդերձներէն՝ պիտի ըսէ:

Աշխարհի սրտին ռուսրի պէս ինկած՝
Պայքաւմով յղի Սերունդ Մասիսի:

Ներսուզում եւ սրաց ունեցող բանաստեղծ մը պիտի կարենար մատուցել այսպիսի քերթողութիւն մը՝ թէ՛ իբրեւ շարական եւ թէ՛ իբրեւ յաղթերգ:

...Մեր պապեմարմատ
Հողերէն ենք մեզ գերծծեր
Մեր գոյութեան աւելն անհատ,
Այ ա՛վ կրնայ, ա՛վ կը կարծէ
Արմատաքի ցաւքեցնել
Արիւնը մեր Աստուածատար:

Հայ ըլլալու զգացումը ժապ Յակոբեանի խառնուածքին էական կշռաքարն է: Դժուար է զատել զինք այդ միախառնումէն, անզազրում եւ կարեկից, իր ժողովուրդին ճակատագրին հետ:

Հայաստանը հետուն խնկարուող թռնիր է, եւ «Մասիս»-ի մէջ բանաստեղծը ունի հողահոգ կտորներ, որոնք կարծես կրակով զրուած են:

Ազատ ըլլաւ աստղի պէս, թէ շղթայի տակ գերի,
Ըլլաւ միրգի պէս անաչ, թէ մրուրի պէս լեղի,
Արքայ ըլլաւ ծիրանի, թէ մութացիկ ձորմակիր,
Անժխտաբար մերն ես դուն, իմ հայրենիք, իմ երկիր:

Յաղթանակներդ մերն են, պարտութիւններդ ինչպէս վատ,
Մերն են վիհի պէս վերէնդ, մերն են երգերդ՝ լեռի չափ,

Ինչ ալ ըլլաւ մերն ես դուն, եւ ինչպէս հայր ու գաւակ
Պապեմական հանգոյցով իրար կապուած ծագէ ծագ,
Դուն մեր սէրովն ես կանայ, մեր արիւնով կենդանի,
Մենք՝ կենդանի հաւատքովդ, եւ տեսիլքովդ յուսովի:

Եւ պարմանալի չէ, որ պիտի ենթադրէ, թէ իր հոգին ուժէն Հայաստանն այցելողի հետ պիտի սաւառնի հոն՝

Թէպէտ Հայկի հողին վրայ ստեղծայլերը թնդան,
Բայց Մասիսեան երկնի մէջ, սիրտիս ծիծառը թռչի:

Սփիւռքը չ'ընդունիր իբր իրազիճակ, անցք մըն է Սփիւռքը. բայց նաեւ քանի որ մենք ճշմարտ Մայիսի նաւագայթաւն ենք, կը հաւատայ, որ որ մը շարմէնաւանդ բառն ու հոգին ու հոգին, Դաւիթի կայծակին եւ Մասիսի հովիտի պէս պիտի ըլլան ազատ, ազատ լիւզիլն:

Իր «Ուշուրեմաշար» հատորը Հայ հոգեին աւուրն է, ուր հարցերը չեն խուզարկուիր, կը պատմուին: Կը սկսի որդիական ծաղկեփունջէն. կ'երգէ իր ծեր որբութիւնը, իր մօր զամբոսէն եւ խունկէ՝ օրհնութեան կը դիմէ. կը դաւանի, որ մայրը Աստուծոյ ներկայացուցիչը կամ ներկայութիւնն է, երբ կ'ըսէ՝ «պիտի ըլլայ օրհնութիւնդ օրհնութիւնն իսկ Աստուծոյ»: Այս քերթողագիրքին մէջ հիացման սանձը քակող քերթուածներն են «Ձեռքերդ մայր», «Մատուցի», «Վիպային», «Մեր տունը», «Իրիկնապահը», «Պանդուխտ հայրը», «Հայրական օրօք» քերթուածները: Եւ եթէ քիչ մը մեր աչքերը բանաստեղծուրէնք արեւելաւայ բանաստեղծութիւնները ծամածուռ շնչտերով արտասանելէ, եւ Յակոբեանի քերթողութեան հարուստ անքէն զանձի բեկորներ հաննք թեմ, մեր սրտերը պիտի լեցուին Հայ բանին անհարպախ աւելումով: Ինչի մասին չէ գրած այստեղ, հիներուն յղուին ոճը իւրացնելէ հոգ

իր ոճն ու կատայրը ստեղծելով, — Վարդանանց, Մայիս 28, Կոմիտաս, ՀԲԸՄ, ՀՅՄ, նորածին ժանուկ, տարեմուտ, տարեվերջ, շրջանաւարտ, Նոր տարուան շեմ, ևւայն: Պատահաբար չեն դրուած, ուլուենքները ծրագրուած շարքեր են աղագտկող մտայինճակներու:

Հետաքրքրական է, գոնէ կիին ընթերցողին համար, երբ իրբնւ տղա-մարդ Հայ կնոջ մտապատկերը կու տայ:

Դում երբ ամուսն կրգնցիր՝ ֆարերն առին շունջ եւ գոյն,
Մայր ունեցաւ սրբութիւնս, տուիս ակութքը՝ կրակ,
Բայց երբ քեւերդ բացիր ճշմնիի մը հանգոյն,
Ճտմբաւ կայան մը գտաւ, պանդխտութիւնս՝ ծոց մը տաք,
Իսկ դարաւոր սպասումս, իր աւաւտը ամմար:

Կեանքի խղերուն հմուտ պիտի ըլլայ մէկը, որ ըսէ իր գուակին, թէ հեթակայէն կտիտալ է իր կեանքը ընել «դրախտ ցնծութեան կամ գնեմն անճկութեան»:

Իսկ ի՞նչ է ըստ իրեն՝ մարդուն կոչումն ու տեղը:

Եղիբ անմն ամիւի՛, որ տիեզերքը շարժի,
Եղիբ արե՛ւ, լոյս փչէ, որ տիեզերքն առնէ լոյս,
Եղիբ աղբի՛ւր, բաշխուէ՛ եղբայրութեամբ մը սուի-
Բայց չմտնաւ,
Որ դեռ ոչինչ ետ ըրեր, դեռ վերջինն եւ մարդերուն
Եւ քոզ անպատրդ հակի խնամարութեան փառքին տակ:

Ուրեմն՝ պատահական չէ, որ այսպիսի անձնաւորութիւն մը տարին-ներ ևւք ըսէ. «Պոճուեցա՛յ ամուսնս քե՛ւ՝ ամօթեմ, քե՛ւ՝ փառքեմ»:

Միայն Սփիւռքի բանաստեղծը, Սփիւռքի շնորհն ու կսկիծը ապրող բանաստեղծը պիտի գրէր Հայ դպրոցի մասին իրբնւ «Մեքորագիւղու գննա-րան, Լուսէ ցուկը միսած արեւուն մէջ ապագայ»: — Ժազ Յակոբեան իր-րնւ տարիներու ուսուցիչ է բանաստեղծութեան երգուսոյց՝ անհաստեղծ ապրումով պիտի գրէր դպրոցամուտի մասին, գասարանի: Պիտի սերերգէ՛ «Մենք մեր լեզուն կը սիրենք այրութենի քաղցրութեամբ, Իմաստն հիւթեղ՝ մերգի պէս, մայնն է ծափի պէս ծիծղուն»: Եւ միայն Սփիւռքի բանաստեղծ մը, որուն համար լեզուն է իր հայրենիքը, պիտի ըսէր. «Երբ ձեզ կը հնչեմ հնձի կը.թուի, թէ կը համբուրեմ հողին հայկական»: Ուսումնասիրելի է այն երեւոյթը, որ իր «Մասիսածիմ»-ի պերճարայ, տողերուն յաջորդող «Ընչա-տըրափ» գործին մէջ՝ Արտերկրի իրականութեան հետ բանաստեղծին բա-խումներուն անդրադարձը կայ. երբ այլեւս իր շորս գաւակներուն հետ հաս-տատուած է Միացեալ Նահանգներ, ուր այդ օրերուն հոժ հայութեան մը հոսանքը չկար: Պիտի զգար անձկութեան կսկիծը, երբ հինգ տարեկան տղուն ձեւքէն բռնած, 1962ին, ուր երբ Միացեալ Նահանգներու մէջ Հայ-կական վարժարան չկար՝ օտար դպրոց կը տանի: Բայց այդ շոր ու տարտամ ակերտ մէջ իր հին հաւատքով գրահուած է հոն, ուր կը նկարագրէ ոսկե-դրուագ պահը, երբ իր տան մէջ գաւակին ԱՔԳ կը սորվեցնէ:

Ահաւտիկ անհող եւ հողահզօր բանաստեղծ մը, իր իսկ բառերով՝ «Մարդն այս գիբի՛ իր ցեղին մէջ արտակարգ ու միմակ», այդ միմակութիւնն է ազգակը, որ պիտի փարի իր դրասեղանին իրբնւ իր պենակից սիրե-լին»: Այս բանաստեղծութիւններուն մէջ յաճախ թեւաթափ թռչունի պէս կը դարձուի պանդուխտ բառը: Անցած է խանձահամ քաղաքներէն՝ միշտ իր ա-րեւը որոնելով: Այլեւս հեպտէտէ կը նուազի «Մասիսածիմ»-ի փողերգը,

կ'որսայ հայ տաղանայնիքու իւրաքանչիւր պահը, կ'աղօթէ անհրկիւղ եւ հաւատազօր, եւ իր անձկութիւնները կը տրցակէ ժամագիրքի պէս.

Կեանքը կեանք է, երբ հոգւոյդ կը պակսի բան մը կապոյտ,
Երբոր սափորը արտիզ միջեւ յատանն է դատարկ,
Յայնի հացին մաւրացկանն է սեղանը օրերուդ,
Եւ աչքիդ դէմ չի շողար տեսիլքի ա'յ մէկ հրագ.
Երբ գիտես, թէ գացոյ հաւակներուն ետեւէն
Ո'չ յաց ունիս աչքերուդ, ա'չ քաշկիմակ մը ձեռքիդ:

Երբ ալ բուր զգումներն ու սէրերը հարթուած են, կը մըմնջէ.

Տէ՛ր, նոր գարնան մը յայտով պայծառագո՛ր կեանքս այս հին:

Եւ կ'աղաղակէ իր գաւանանքի ճառագայթը, երբ կը մատնուի անոր սննդորութեան.

Մըքիկ մը Յիսուս ունիմ կուրծքիս տակ՝
այս ծովն անյատակ,
Հրդեհ մը Յիսուս ունիմ սրտիս մէջ՝
այս անունն անշէշ,
Հեղեղ մը Յիսուս ունիմ բերնիս մէջ՝
այս աղբիւրն անվերջ:

Եթէ Հայերգութիւնը Յակոբեանի ջրապիկ ջնարէն բխող պոսթիկում մըն է, ապա աստուածերգութիւնը իր ներքին կեանքին, միսքիւնիզմին գործունէութիւնն է: Աստուած այն գաղափարն է, որուն մէջ իր սիրոյ լիութիւնը, իր գոյութեան եւ կոյումի իմաստը կը դանկ: Կ'ենթադրէ ինքզինք աշխարհէն տարագնացիկ ճամբորդ մը, որ Աստուծոյ քով պիտի հանդիպի: Եւ ասիկա կարծիքս զիծի մը պէս կ'անցնի իր այն բուր զարծերուն մէջէն, որոնք արբշիտ աղօթքներու հիւսկէններ են:

Չիս միշտ ալ վրդովեցուցած են այն նետահարումները, որոնք կ'ուղղուին ծագ Յակոբեանի ջնարի այս շարին եւ գորս ինք ընդունած է ժարտիբոսութեան գալցողի նման: Ինչո՞ւ համար է, որ չենք ատղիք ուրիշ հայ բանաստեղծի մը Հեթանոսութեան, տակաւին ուրիշի մը անաստուածութեան պոսթիկումներուն զիմաց, մենք՝ որ քրիստոնէայցիք ենք, ուրիշի մը ներփանաչի իր ոլորաններուն մասին մենագրութիւններ կը հասեցնենք, եւ կը կարծուի, որ Յակոբեան իր տաղանդը կը վատնէ, երբ իր հաւատացած Յիսուսին մասին կը գրէ:

Նախ՝ առդանդ կոչուածը կարտո մը չէ, որ պարպուի-վերջունայ. երկրորդ՝ ո՛վ այս բանաստեղծին յափ հաւատագոր եւ հայաչունջ քերթուածներու մէջ շոայլօրէն սփռած է իր միտքն ու սիրտը:

Երրորդ՝ կ'ապրինք քաներորդ գարուն մէջ եւ գոնէ Հիմա ընդունինք. որ գրողը անկախ է եւ միայն ինքը պէտք է որոշէ, թէ ուրիշ պիտի բիծի իր խօսքին մեղքը:

Ինչ աստուածատուր բան պիտի մղէր այս բանաստեղծը, որ բանաստեղծութեան միջոցով եւ անվերջ խօսակցութեան մը ձեռնարկէր հայ բնօրէնը: Կարելի չէ չսիրել ուրիշին համար բարտիտը այս սիրտը.

Կ'ուզեմ, որ երբ գիրքս բանաս՝ ըլլաս հոգիս բոցածի պէս,
Գուն ցաւերուդ փուշն ինծի տաս, իսկ ես քեզի՝ իմ վարդ
Խիճդիրս

Եւ խմբիկ նոյն գաւաթէն սա կեանքի մեղքն ու գիծին:

Կը հաւատայ բանաստեղծութեան գորութեան, վերափոխումի կարողութեան.

Տեղ մը դառնայ փուշը շուշան, ֆայցրանան ռիմ ու լեզիմ,
Տխուր տղաք ծննդայի պէս արծաթ արծաթ ծիծաղիմ:

Եւ ո՞վ աւելի լաւ պիտի բնորոշէ իր բանաստեղծութիւնը՝ քան ինքը.

Երգերս իմ մորմով եմ,
Բայց բողոք չեմ,
Խառն-խառն քաշող աղօթք եմ:

Երգերս իմ բալամ եմ,
Հովի բան չեմ,
Մովի ժայն չեմ,
Յայս ու յայսի պատգամ եմ:

Իր գործը դրել է, եւ գրականութեան գործը՝ յուզաշխարհը գրանորդել: Սփիւռքի բանաստեղծներն են, որ այս լուս պահերը ընդգրկեցին.

Նդեգի պէս բողոքած՝ կը շարժի գրիչը ճորէմ,
Քակուտը նստու պէս կրկիմ կ'ելլէ գրիչը ճամբայ:

Քակուտը նու՝ խարխուլէն հեռացող ուղեքի մը: Ճակատագիր մը: Մտաւորապէս յիսուն տարի գրելէ հաք՝ կ'ըսէ.

Թէեւ ներքին նուագիս դեռ լոկ մէկ տողն եմ երգեր:
Աշխարհ մը հով ու երկունք ունիմ սրտիս տակաւին
Ու թէեւ շուրջս մնապատ, ներքս յայս է ու Մայիս:

Եւ որ մը այլեւս հարց տալէ հաք, թէ որո՞ւ համար կը գրես, կը պատասխանէ ինքզինքին.

Կիսմէն անապատ մըն է, ժա՛գ, երգդ ովա՞խ կ'ընէ գայն:

Այս ձեւի բանաստեղծներու — եւ Յակոբեան Սփիւռքի տիպական բանաստեղծն է — ըզձանքը ո՛չ փառք է, ո՛չ անձահութիւն, այլ՝ փոքրիկ անկիւն մը իրենց ժողովուրդին սրտին մէջ: Ասոնց ժպիտը արցունքով չինւնցաւ. եւ յաղթածեա քայլերգներէ առաջ գաղտուկ եւ արտասուածքոր շարականներ հոսեցուցին, որ յաղթերը իր կայքը գտնէ Միացեալ եւ Անկախ Հայաստանի մէջ, որ հայ ժողովուրդի դարաւոր արտմութիւնն ու ճակատագիրը իր լոյսին հասնի, իր Հայաստանին.

Քեզի տուած կահաչիս ու կարկաչիս փոխարէն,
Ձեւ պլաներիս քեզմէ ծափ աւ քազի ո՛չ մէկ վարձք.
Բայց լսէի ձայնքդ գէթ,
Թէ ստացերիս իմ մաս... քէ տրոփներն իմ սրտին
Կ'արձագանգեմ սրտիդ մէջ արցունքիս հետ, ժպտիս հետ
Եւ քէ քաղթերս այս էաւ մտաւ միշտ պատասխան մը ունին...
Թէ լոկ գիտեմ կարկաչովս ու կանչովս հայկախա՛մ՝
Հազ չէ փոքրիկ աւ անշա՛ք — տիտ մ'ունի՞ հողիդ մէջ:



Սիրելի՛ ժող Յակոբեան, Լիրանանի աղուոր օրերուն՝ տունը անգամ մը հայրս տուն կու գար անութիւն տակ ձեր մէկ հատորը սեղմած, որ այդ օրերուն նոր հրատարակ ելած կ'ըլլար: Բարձրաձայն կը կարդար եւ ձեր յաղթերգներու եւ շարականներու շաւիղէն անձուշ լոյս մը կը գահավիժէր իր հոգիին խորը, երջանիկ ժպտով մը՝ որ ձեր հաւատացած Աստուծոյն ինք ալ կը հաւատայ: Մտիկ կ'ընէի, եւ այս բոլորը հրաշալուր ժամերգութեան պէս կու գար ինծի: Հիմա ալ, գրեթէ քսանամեակ մը ետք, կեանքի իունկերէն եւ սուգերէն անցնելէս ետք, դարձեալ ձեր քերթողութիւնը այդ հին ժամերգութեան պէս կը հնչէ, մաքուր մետաղի նման, որ ժանդ չի ճանչնար: Սփիւռքի գրականութեան այս յիսնամեակին, երբ բանաստեղծութիւնը կերպարանափոխման, ժխտումի, հաստատումի եւ մաքառումի շրջանէն կ'անցնէր, ձեր քերթողութեան ջահերթը տուաւ մեր հայրերուն խրոսովք եւ կաջբոյր. ջերմածոր սիրտ մըն էր, որ կ'առուհուռէր արեւի պէս մեր տուներուն մէջ: Այսօր, երբ ահա պաշտօնապէս նիւ ձըրդիի եւ նիւ Եօրքի «Համազդային»ի հրատարակած բանաստեղծութեան խաչաթոռին նստած էք, կ'ուզէի քերթուածով մը աւարտել ձեր այս լուս խօսակցութիւնը: Այս բանաստեղծութիւնը գրած եմ Սփիւռքի քերթողներու խառվարյոզ փաղանգ մը աչքի առջեւ ունենալով, որուն վերջին ներկայացուցիչն էք դուք. այս քերթուածը կը ձօնեմ ձեզի:

4. 13. 86
Նիւ ձըրդի

Վեհալեւոծ Թեթեւալ

Վ. Թ Ե Ք Ա Ն

ՍՓԻԻՌՔԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

Նուէր
ԺԱԿ ԾԱԿՈՒԲԱՆՄԻ

Առաջին տազնապանքը չպատմելու համար
երկրորդը պատմեցիր
եւ այն կաթուածը որ քերթուած կ'անուանուի
կարճ էր եւ մահացու
Հայ բանաստեղծ բազմաձին Աղէտէն ետք
ուրականի աչքի մէջ ինկած
գտար գոյութեանդ խարխալը

Արեւը միակ էր
երբ թեւերդ կրակէ դողողջ սիւներու մէջ իջեցուցած
շարժեցիր գաղափարին հոսանքը
երբ արեւը աշխարհի մէջ բազմաթիւ էր

Սփիւռքի փետրախոի փիւնիկին մէջ
ուր կար առօրեայի քար ու կոփճ
քառերու ժխոր եւ կերկեր լացուկոծ
ճակատդ ու սիրտդ լուացած գողթան երգերով **հորովելներով**
անցար ասպատակուած արահետներէ
երբ եղեռնի մրուրը կ'իջնէր ձայնիդ սարսուռին
եւ լարած ջիղ ու մկան
բերիւր քերթողութիւնդ իբրեւ այս գաղթատարած **այս անհայրենիք**
հողին խրուած խաչքար

Լեզուիդ խորը ծրարած երկիւղներդ մեծ
տքնութեամբ ու տենդով
սարսափով նաեւ խինդով ոգեղէն
քամահրելով սով ու սառցակոյտեր
դարուն կիպահար պատրոյզը բռնած ձեռքերուդ մէջ
մեր պատմութեան կարօտէն անհիւժ
մեր լինելութեան առասպելներէն
յանձնեցի՛ր Լեզուին
սեւ գիշերներուդ շափրակները լոյս

Քուկդ կրակի՛ մկրտութիւն է
Փոյթդ իսկ չեղաւ թէ աշխարհը ինչպէս պիտի աւարտի
Ոչ որ լսեց ասպներուն վրայ դեգերող ձայնդ
Ուզեցիր համբուրել կեանքը եւ անոր մահատիպ շրթները տեսար
Սակայն չճանչցար վարանում ու վախ
մարմնիդ հետ ծնած էր սարսափը
հոգիիդ մէջն է առանձնահիւս սարսափը Լոյսին
Աստուած պիտի աղօթէ որ հաշտուի գոյութեանդ հետ

Յաճախ անուղի եւ անուղեկից
աչքերուդ առջեւ լերան չափ կը բարձրանայ
գիրքերուդ մոխրացած խարոյկը
Քեզի համար գոյութիւն ունի ոչ թէ կշիռք
այլ՝ կիրք ու դաւանանք
Լոյսէ սիւնի պէս ես սակայն ծածկապ դրած եմ մարդիկ
որ չտեսնեն քեզ
Հատուածամոյներու մէջ կշռուիս պիտի

Եւ եթէ գոյնը չունիս այդ նժարին՝ պիտի դրուիս դուրս
 Անկախութեանդ պահպանումին դէմ պիտի անտեսման
 պարսատիկը ուղղուի բոլոր կողմերէն
 Եւ եթէ չփառաբանես կարծեցեալ կուռք ու գահ
 քերթողութիւնդ անեղծ պահես ինչպէս հարսանեկան մոմ
 քեզ ոտնաարբիչ պիտի կարծեն
 ատելութեան եւ նախանձի իրենց փոշին թափելու
 Եւ այնքան հանդարտ պիտի խօսին արեւմտահայերէնի
 մահուան մասին
 կարծես անդամալոյծի մը անկարողի մը մահը ըլլար
 Երկար պահեր թոյլչքներդ փշալարի գամուած պիտի տեսնես
 Բառիդ տարածք կամ արձագանգ չկայ
 պիտի անցնի սրտէդ հազար ամպի խաշամ
 հազար Գէթսեմանի անելանելի
 Եւ այս երթին մէջ
 որեւէ պահ՝ սրտէդ
 Սփիւռքի լուռ ծէսը պիտի չանջատուի

Հայոց հսկումի աւագ ճգնաւոր
 այս մթնշաղիդ մեղրամոմին դէմ
 գոնէ դուն մի հառաչէր տողը մթնագալար
 «միթէ վերջին պոե՞տն եմ»

Ճանչցար շաւիղը դառնաշունչ
 մրրիկը անգամ ահապանգ չունի որ քեզի հարց տար
 թէ ո՞վ լեցուց հոգիդ Յաւին անհունութեամբ
 ո՞վ մըմնջեց զիրքերուդ դիմաց հեզ մը՝ լո՛յս գուարթ
 Ունիս անտարանը քու եւ Աստուծոյդ միջեւ գրուած
 որ լեզուդ եւ ազգդ է
 Բարձրացի՛ր ամպրոպագոյն հեղեղէն
 անտապան
 աննահանջ
 լանջիդ յոյգերը քակած
 դէպի լեռը Մասիս
 ո՞չ թէ իբր ուխտաւոր այլ՝ ուխտը ի՛նքը

Ոչ յուպահեղձ մի տրցակեր յոյգերուդ որան
 անկիւն մը գաղտուկ

Բաց ձգէ մատեաններդ
 փոթորիկէն ետք կամարտուած ծիածանի հանգոյն
 անոնք իրենց անհուն կեանքը ունին

Եւ կանգնած վառամոլ կածաններու մէջ
այլեւս մի արձակէր անձկութեան հոգոց
«միթէ վերջին պոե՞տն եմ ես»

Պիտի գայ յաջորդդ պիտի գա՛յ յաջորդը
պիտի գայ անդող անայլայլ շեշտով
պիտի քակէ փշրէ տարակոյսի մղկակները ժանգ
եւ մեր քերթութեան հին մառանին պիտի իր նոր հոգին բերէ
Պիտի գայ հայ հանձարի միտքով լեցուն
առասպելեան շունչով
պիտի շուարի մեզի պէս եւ պիտի տոկայ մեզի պէս
բայց պիտի խօսի
մերթ իբր կարմիր ակզանշան մերթ իբր լքուած խաչմերուկ
Պիտի ժխտէ ժխորը
պիտի ըլլայ գեղաստեղծ բայց ոչ դարմանարար
թերեւս չունենայ անրջուն աչքեր
պիտի գայ հպօր եւ առողջ
պիտի գայ իբրեւ ճշուն ճառագայթ

Եւ վստահ եղիր որ յաճախ ուշ գիշերներուն
ան պիտի հակի քաղցրահեւ
եւ իր լուսահեղ շունչը եղեամ եղեամ կաթկթի
տողերուդ հայկազեան միւռոնին վրայ

Որովհետեւ հաւատա՛
ոչ ոք չի կրնար ժողովուրդէ մը
անոր ճակատագրի կորիզը կորզել

Ոչ ոք չի մեռաւ ոչ ոք չի ծնաւ Ամէնքս մէկ ենք
Ի սկզբանէ էինք բոլորս եւ բոլորս ենք յափտեանս յափտենից
Լուսանցոյց կածան մըն է ուր մեր երգը կը սփռենք հերթով
ճիշդ այնպէս ուր մեր անյուշ ու յուշավառ նախնիները անցան
դէմքով զունատ ու պիրկ եւ քնարով լուսաստղ

Որպէսպի դիմանաս կածանին մէջ
անհրաժեշտ է որ բառերդ մեր տոգորուն պատմութեան
խորքը ցուացնող խարխախ ըլլան

Հայրենիքի լուսինը չծանրանայ վրադ
 եւ չըսպասես ցոլքեր փայլակնասոյր
 հրատատան յաղթերդ
 այլ՝ իբրեւ եղեռնէն յօտուած եղէզ
 տեսնես մեր
 խաւարի մէջ արմատ կապող մշակոյթի կաղնին
 Բարձրացնես անդու ժայռը Սիւլիփոսի
 միածամանակ կատարես փնտռուքը Հազարան Հաւքի
 Մնաս տէրը բառերու մոգութեան
 եւ բերես տաքութիւն՝ իմացական ցրտութեան
 Աշխարհի բոլոր գոյները հեզես
 բայց հայ ըլլալու լոյսին վարթօնքը ոգես
 եւ Տիրի մեհենական խարոյկին վրայ
 իբր ինքնամատոյց ողջակէլ
 մեր մշակներու՝ որոնց խորհուրդի ողկոյաներն ու
 յոյզի կոթունները խուլ փետտուեցան
 մեր նախորդներու՝ որոնց առաւօտները ինկան սրահար
 մեր նախնիներուն արեան եւ հատուցման մոխիրները խառնե՛ս
 եւ այս կատարես
 մահուընէդ ետք իսկ՝ իբրեւ անեղ երդում

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

1986

Նիւ Ճըրզի

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

**ՍԵՐՈՒՆԴԻ ՄԸ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒՆ
ՅԱՆՁՆԱՌՈՒ ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐԸ**

Նօթանասունական թուականներու առաջին տարիներուն, երբ երիտասարդ բանաստեղծութիւնը կը յաջողէր իր վրայ կեդրոնացնել գրական շրջանակներու եւ հայրենի մամուլին լուսարձակները՝ ականջական հասկացութիւններու դէմ դրօշ պարզած երիտասարդ բանաստեղծներու ստորագրութիւնը կրող նորարարական փորձերով, երբ «Գարուն», «Սովետական գրականութեան», «Գրական քերթ»-ի եւ հայրենի մամուլի էջերուն ծաւալող բանավէճերը, կոյր յարձակումներն ու համակրական արտայայտութիւնները, բայց մանաւանդ երիտասարդ բանաստեղծներուն գրական աշխարհահայացքն ու տեսակէտները հիմնաւորող առարկայական պատասխանները աւելի եւս կ'աշխուժացնէին մթնոլորտը, անգին՝ գրականութեան յուսանքին վրայ դոյն եւ դիմագիծ կը ստանար երիտասարդ արձակ մը, աւելի ճիշդ՝ հանդէս կու գային յեղաշրջական մեզմ ախորժակներ մատնող եւ յարաբերարար «իւրօք» արձակագիրներ, որոնք եւս անմասն չէին մնար իրենց սերնդակից բանաստեղծներուն դասն ճակատադիրէն:

Նոր, չկրկնուած ձգտումներ եւ հեռանկարներ ունեցող բանաստեղծութեան եւ արձակին շրմաց կը բարձրանային խոչընդոտներ, խստապահանջութեան ապացոյցը հանդիսացող աննախապաշար դատումներուն փոխարէն՝ կը ստորագրուէին պատրաստի, մերժողական, անարժատ տեսութիւններ, որոնց իբրեւ ուղղակի հետեւանք՝ մամուլի էջերուն սիւնակները դրաւած ծաւալուն բանավէճերը «յանախ աւարտում էին սծպտուղ, եւ քննադատներն ու գրողներն յարաբերութիւններն միջեւ հերքական մշուշն էր տարածուում», ինչպէս արդարօրէն դիտել կու տար սերունդին ջննդատը՝ Ալեքսանդր Թոփչեան, 1972 Փետրուարին ստորագրած «Հերոսը եւ իր ժամանակը» խորագրեալ իր ուսումնասիրութեան մէջ(1):

Նոյն գրութեան մէջ, ակնարկելով բանավէճերու քանակին, Թոփչեան դիտել կու տար, որ անիկա ապացոյցն է այն իրողութեան, որ գրականութեան երկու բնագաւառներուն մէջ ալ կատարուած են իսկական տեղաշարժներ, ձեռք ձգուած են «արական լուրջ փոփոխութիւններ», «նկատելի է գրական կուլտուրայի առաջընթաց, ժանրային-ձևական քազմագումութիւն, գրական հմարցներն հարստացում, իսկ ամենակարեւորը՝ զգացում է, որ

(1) Տես «Բառի սահմանները», Երևան, 1978, «Սովետական գրող» հրատարակչութիւն, էջ 38-40:

այս ամենը մտնեցող, սպասուող անիլի մեծ փոփոխութիւնների եւ առաջըմ-
քացի Յայտանշաններ եմ» :

Սակայն, Հակոտակ ստեղծուած հետաքրքրութեան, Վահագն Գրի-
գորեան, Գրիգոր Զանիկեան, Վահէ Պօղոսեան, Ալվարդ Պետրոսեան եւ ի-
րենց նախաջերբը առնող միւս անունները կը մնային երկրորդ գիծի վրայ,
որովհետեւ անոնց կը պահպէր գրական սերունդի մը հանգանակը, իսկ Յրուշ-
չեան Զիւնահաւիչն ետք հայրենի արձակին նոր շունչ եւ հնչեղութիւն բերած
գերբնասարգ արձակագիրներնու (ներկայիս միջին սերունդ) տիրական դէմ-
քերը՝ Վարդգէս Պետրոսեան, Զօրայր Յալափեան, Մուշեղ Գալշոյեան,
Հրանտ Մաթեոսեան, Կարէն Սիմոնեան, Նորայր Արալեան, Յովհաննէս
Մեկքունեան, Պերճ Զէյթունցեան եւ Ռուբէն Յովսէփեան ո՛չ միայն կ'ապրէին
ստեղծագործութեան բեղուն շրջան մը, այլեւ, իրարայայտօր յաջողութիւն-
ներով(2), Ռաֆայէլ Արամեանի, Բաղիշ Յովսէփեանի, Մկրտիչ Մարգրե-
եանի, Աղասի Ալվարդեանի եւ Գէորգ Արշակեանի սերունդին կողքին՝ հայրե-
նի արձակին հաշուոյն իրենք եւս նուաճումներ կ'արձանագրէին՝ հարթելով
ուղին «մեծ արձակին» :

Այս ընդհանուր մթնոլորտին մէջ՝ ուշագրաւ կարգ մը գրութիւններ
ստորագրած Վահագն Գրիգորեան, Վահէ Պօղոսեան, Ալվարդ Պետրոսեան
եւ Ալեքսան Մեխակեան կարծես կը բուրբէին պատրաստութեան շրջան մը՝
իրենց կարգին նոր ստուգներ կատարելու համար : Չափաւոր խանդավառու-
թեան արժանացած այս երիտասարդներէն նոյնիսկ ամէնէն աշխուժ ու
թանցանունը՝ Վահագն Գրիգորեան, որ վեց տարուան ընթացքին կը ստորա-
դրէր պատմուածքներու երկու հատորներ՝ «Թղթէ աղաւնիներ» (1964),
«Կատակաւեր ստուգանքները» (1970) եւ միջակ ծաւալի խոստումնալի վէպ
մը՝ «Բոլոր օրերի ռոմանայները» (1967), չէր յաջողեր իր տերնակիցներու
խմբակէն վերջնականապէս անջատուելու իր ճիգին մէջ : Յմբակին մէկ փայ-
լուն դէմքը ըլլալով հանգնած, տակաւին հարցական կը մնար, թէ այս ար-
ձակագիրը ե՞րբ պիտի սկսի կերտել իր բազմաշերտ ու բազմաձայն «մեծ ար-
ձակ»ը :

1960-75 տարեհաւանակայ անկիւնադարձային հանգրուանին աւանդ-
ները ժառանգած նորագոյն անուններուն այս արձանաւոր ներկայացուցիչը,
սակայն, «կը յաջողէր փախուստ տալ իմբակէն, արձանագրել լայն առաւե-
լութիւն մը» (ինչպէս սովոր է ըսել հեծելարշաւի մրցումներու թղթակցու-
թեանց մէջ)՝ գէթ արտադրողական առումով, որովհետեւ իրձէ քոնի մը
տարի ետք հրատարակ իջած միւս տնուններն ալ կը մատնէին գրողական նկա-
ատեղի հմտութիւն եւ ճաշակ, թէկուզ նուազ ուժգնութեամբ :

II

Եթէ ճիշդ է այն նախապայտանքը, որ իւրաքանչիւր նոր սերունդ գրա-
կանութեանն ներս մուտք կը գործէ ի՛ր աշխարհընկալման եղանակով, ի՛ր
հարցերով եւ այդ հարցերը լուծելու ի՛ր տրամաբանութեամբ, ապա անվա-

(2) Ընդհանուր գաղափար մը կազմելու համար տեսնել «Հայաստանի արձակագիր-
ներ — ՅՐԳՈՒ ՍԵՐՈՒՆԷ» հատորը, Ածրիլիան, 1980, երատարակութիւն՝ «Գ. Միլիտան-
ցի գրական մրցանակ», Ի՛ր 15 :

րան կրնանք ըսել, որ Վահագն Գրիգորեան կը հանդիսանայ Հայրենի Երիտա-
սարդ արձակին ամէնէն հասուն ներկայացուցիչը:

Սեփական կենսափորձի մեկնակէտէն ճամբայ ելլելու այս գիտակ-
ցութեան փաստերը կարելի է գտնել նոյնիսկ Հեղինակին առաջին գործերուն
մէջ, սակայն անոր պերճախօս ապացոյցը կը հանդիսանան «Թագաւորի փոքր
որդին» եւ «Կարմիր ձիւնը» վիպակները, որոնք իրենց շօշափած նիւթով ո՛չ
միայն Հոգեդարձները կը թուին ըլլալ, այլեւ՝ միեւնոյն նիւթին երկու տար-
բեր ընթերցումները:

Ընկերային-հասարակական սուր հարցադրումներ կատարող արձա-
կադիր մըն է Վահագն Գրիգորեան իր այս երկու գործերուն մէջ, ուր հա-
տու գիծերով ի յայտ կու գայ սեւ զուարթախոտութեամբ, հոգեվերլուծական
մենախօսութիւններով, լարուած երկխօսութիւններով վիպաշարը զարգա-
ցումէ զարգացում առաջնորդելու այն կարողութիւնը, որ 1972ին իր վրայ
կեդրոնացուց Հայրենի քննադատներուն ուշադրութիւնը՝ առաջացնելով
թեր ու դէմ տեսակէտներու սուր բախում, որուն առանցքը հանդիսացաւ
ընկերային եւ բարոյական մերկացումներ կատարող «Կարմիր ձիւնը» վի-
պակը:

«Կարմիր ձիւնը» վիպակին շուրջ «Գրական քերթ»-ին մէջ ծաւալած բա-
նավէճը բաւական մեծան հոսեցուց, երբ ընդդիմախօսումները տեսեցին քանի
մը տարի, «Գրական քերթ»-ի էջերէն փոխադրուեցան Երեւանի համալսա-
րանի դահլիճ եւ տակաւին՝ մինչեւ խորհրդային գրական մամուլի անդամ-
ներէն «Գրուծքա Պարոզնով»-ի էջերը, ուր տեղի ունեցած մտքերու բռուն
փոխանակութիւնները ամփոփուեցան ծաւալուն զրախօսականի մը տարա-
զին մէջ (1975 Յուլիս):

Հայաստանի գրողներու միութեան 1976ի համագումարին եւ Ռոբ-
հրդային Միութեան գրողներու համագումարին լուրջ խօսակցութիւններու
առիթ ընձայած, քննադատական յղումներու մէջ շարունակ յիշատակ-
ւող, ոտներէնի, հստոներէնի եւ լեհերէնի թարգմանուած բախտաւոր գործ
մը եղաւ «Կարմիր ձիւնը», իսկ անոր երեսունամեայ Հեղինակը՝ նոյնքան
բախտաւոր աստղի տակ ծնած Հետաքրքրական անուն մը:

«Թագաւորի փոքր որդին» վիպակը, որ առաջին անգամ լոյս տեսաւ
«Գարուն»-ի 1972 Մարտի համարին մէջ, իր սերունդին կենսափորձը — հա-
ւանաբար՝ նաեւ իր — մեկնակէտ ունեցող բազմաչերտ գործ մըն է, որ ըն-
կերային, բարոյական եւ Հոգեկան խնդիրներու հարցադրումը կը կատարէ
արդիական շափանիչերով եւ երիտասարդի ակնոցով:

Այստրանական տարրը յաջողապէս օգտագործող վիպակ մըն է «Թա-
գաւորի փոքր որդին», որ կ'արժարձէ Հայրերու եւ զաւակներու հակադրու-
թեան թեման՝ ներքին մենախօսութեան, անհատ-հասարակութեան յարա-
մերութիւններու բացայայտման եւ կառուցողական ամուր հիմերու վրայ:

Հայրերու մեղքերուն ակամայ պատասխանատուն ըլլալու բարդոյթը
ապրող, իր մեղաւոր հօր ճնշիչ արդեցութեամբ գործող տիպար մըն է վի-
պակին հերոսը՝ Հրայրը, որ շրջապատուած դիմաւաւոր համադեղացիներ-
ով՝ կը փորձէ ներթափանցել այս վերջիններուն կողմէ մեղադրուած իր
հօր էութեան մէջ, որպէսզի ճանչնայ իր պատեանին մէջ քաշուած, թան-
ճր մշուշներով պատուած անոր գրեթէ անտեսանելի էութիւնը, ճշմարտա-
դոյն պատկերը, որովհետեւ «պատեանի ներքոյ միմեանց փոխարկնուի՝ եւ
տարբեր մարդիկ»:

Այսպէս, առաջին իսկ էջերէն եւ անոնց թաւաւումին հետ՝ մեր աչքերուն առջեւ կը սկսի կազմուիլ դիմապիծը պարտաւորական հերոսին, որ հաշտաբար է իր ճակատագրին, գիտէ, որ քաղաքը իսկական դիմակահանդէս մըն է, որուն ինք կը մասնակցի գիտակցաբար, հրաժարելով իր բարոյական, ընկերային եւ մարդկային պարտաւորութիւններէն, հօր տարեդարձը՝ պարզ ու անիմաստ սովորութիւն մը, որ մեզի ծանօթ իր դիմապիծին վըրայ քանի մը նոր գիծեր աւելցնելու մղող ազդակ մը կրնայ ըլլալ միայն, առաւելագոյն պարագային:

Փաստօրէն, առաջին իսկ էջերէն մեզի ծանօթ տիպար մըն է քիմիագէտ Հրայրը, որուն ներքին մենախօսութիւնները, անոր էութիւնը աւելի-ծող ատմանակն ու գինք պարուրող խորհրդաւորութիւնը աւելի թափ կու տան խոստովանութեան, մէկէ աւելի առիթներով նշուած խորհրդաւոր տիպարը՝ Մարտիրոսը կը շարունակէ մնալ նոյնքան խորհրդաւոր եւ առեղծուածային անուն (ինչպէս Կոտոն՝ Սամուէլ Պէթթի «Ապստեղով Կոտոյի» թատերախաղին մէջ), խոստովանութեան կը յաջորդէ այլ խոստովանութիւն մը, Հրայրը շրջապատած մարդոց եւ իր դէմքէն վար առնուած իւրաքանչիւր դիմակին տակէն կը յայտնուի նոր դիմակ մը, մեզի արդէն ծանօթ Հասարակաց դիմակին մէկ այլ տարբերակը, որ, իր կարգին, աւելի կը սրէ զգիտակցութեան հոսքը, սակայն բոլոր ճիշդը դարձեալ կը յանդին տարդիւնութեան վերջակէտին, որովհետեւ պատրանաթափ երիտասարդը գիտէ, որ ոչինչ կրնայ փոխել միջավայրէն, անոր պարտադրանքներէն եւ նոյնիսկ ըմբոստները զինաթափող ուժէն:

Այնուամենայնիւ, պայտէն ու Հայրերէն ժառանգած Հարստութիւններն ու մեղքերը ճիշդ գնահատելու, արժանները խորապէս ճանչնալու, եւ այդ ճանաչուած գիտակցութեամբ թէ՛ Հայրերուն եւ թէ՛ իրենց կրօնորակականութեան դէմ լռելիան պայքարելու անհամար ժողովը կը շարունակէ գրգռել յուսահատ երիտասարդութեան ներկայացուցիչին՝ Հրայրի սղէ էութիւնը, որուն համար, հակառակ իրերայնորդ պարտութիւններուն, ապագան անխալ ապրելու մտաւոր չի զադրիք նպատակակէտ ըլլալ:

Գիտակցութեան, սեւ հեղանքի, հոգեմիճակները տրամաբիզէ ընող խոստովանութեան այս ուշադրաւ խաղը կը շարունակուի գրողական մակարդակի վրայ, մեզի պահ մը կը թուի, թէ Հերոսը պիտի առնէ ճակատագրական քայլ մը, սակայն Հերոսը կը բախի նոր պատերու, տիպարը նըկարագրային ոչ մէկ զարգացում կը յաջորդի արձանագրել, կը մնայ նոյն կըրթաւորական անձը, որուն ինքնափերուձական ճիշդը աւելի կը լարեն խոստովանութիւնը՝ բացայայտելով անոր ներքին պատմութիւնն ու մշտնջարտ ներաշխարհը: Կարծես այս բոլորը տեղի կ'ունենան՝ ստեղծագործական խաղը իր վերջակէտին առաջնորդելու համար: Ե՛ւ Հրայրը, ե՛ւ Նարինէն, ե՛ւ Հրայրի Հայրը, ե՛ւ Նարինէի Հայրն ու մայրը, եւ միւս բոլոր տիպարները կարծես միջոցներ են, ստեղծագործական խաղը համոզիչ եւ ուշադրաւ իր վերջակէտ—սկզբնակէտին հասցնող լծակներ՝ առաջնորդելու համար օտեղծուած այն գազաթնակէտին, ուր առաջին իսկ մայրկենանէն ամբողջական ու աւարտած գիծերով միպակէտ ներս մուտք գործած տիպարները կ'ուզեն իրենց թելադրական երկրորդ կեսները՝ անծանօթ ապագան, ընթերցողին ներքին պատարին վրայ:

Վիպական այս ուշադրաւ հնարներուն շնորհիւ՝ ինքնանպատակ խոստովանութիւնը նոյնիսկ Վ. Գրիգորեանի գրելին տակ կը օտանայ յատուկ նշանակութիւն եւ նպատակակէտ, երբ գրութիւնը կը թխադրէ ընթերցողներուն պայքարիլ քաղքենիական բարբերուն ու կեղծիքներուն դէմ՝ վար առ-

նկու համար կեղծաւոր պարտականերուն բռնորդ դիմակները: Ուշագրաւ է վախճանը, բացասական սեւ հեղանքին եւ լուս աստիզմին գրական դեր վերապահած այս խօսուն վախճանը, որ ամէն բան կ'ըսէ՝ տոանց բառերուն դիմելու:

Մանուանդ ուշագրաւ են փլուտակ բնակարանի մը, ահշարժ լերան մը, լքեալ դերեզմանոցի մը կամ փոշեծածկ մեռելութիւններուն կեանք տալու, զանոնք կենդանութեամբ թրթռացնելու եւ հուսկ՝ կեանքը բերեղացրնոց խորհուրդներով զանոնք պարուրելու Վ. Գրիգորեանի գրողական արժանիքները, որոնց շնորհիւ ան կրկնակ կենդանութեամբ կը ջերմացնէ իմ ստեղծագործութիւնները, երբ կը կատարէ Հոգեվիճակները խառնոց նմանօրինակ խորհրդածութիւններ. «Այն ժամանակ, երբ քաղաւ էիմ հօրը՝ Բիմիայի աւուցչիս, ես յանկարծ շտապեցի հեռանալ, որովհետեւ արածս յայտնագործութիւնը չէր տեղաւորուիմ իմ արամաքեցեացեաց օղակներում. միայն երա հողին յանձնելով էիմք մեծ գույլ երա մօտ տասնոց ճանապարհը, եւ բաւական է, եւ կենդանանար, որպէսզի մեծ կրկն վայր ճանապարհը կարգնէիմք: Այդպէս էլ էջմիածնում: Գարձեալ ես շտապում էի դուրս գալ տանքից, որովհետեւ յանկարծ այն դաղարի էր չորբորդ դալում կառուցուած ու եօթներորդ դարում վերակառուցուած ճարտարապետական կաթոգ լինելուց. ինձ տանում էր անծանօթ մակընթացութիւնը, ու քանի էր, որ եթէ դու իմ մտիրարքես կանու թուրի բերնքանքը, այն յօդս կը ցնդի տանքից դուրս գալուն պէս»:

Վիպակին գլխաւոր հերոսին շրթներուն դրուած այս եւ նման խոստովանութիւններ կը յաջողին ո՛չ միայն բացայայտել անոր էութեան հակադիր երկու բևեռները՝ սինիզմը եւ զգացական զսպուած ապրումները, այլ՝ եւ կը կատարեն ժամանակներու հաւասարումը՝ բարդ իրադիմակներու միաձուլ ամբողջութեան մը մէջ: Այսպէսով, տեղեալը կը սկսի աճել ներկային մէջ, որուն զսպանակներէն յայն կը բացուին ապագայի մոխրագոյն հորիզոնները, կը միահիւսուին իրարու հետ՝ բերեղանալու համար ժանկութեան յիշողութիւններու լրտեսումով: Յիշողութիւնը, անփորականը անստիբէն տարանջատող այս ներգոր ուժը, խտացած վիճակին հասնելէ ետք, կը դառնայ իրադիմակները իմաստաւորող թթիւմը, դէպքերու շարաշարումը իրարու կամբողջ մթնոլորտ, որուն տարածութեան մէջ հերոսները կ'ազդին իրենց սովորական օրին անստիբ մտկարգակը, կը բախին իրարու՝ աւելի յարելով մերթ ինքնանպատակ հեղանքով, մերթ յուզումով եւ յաճախ միայն խօսքով բաւարարուող, այսինքն՝ կրաւորականութեամբ խորացող բանաստեղծութիւն Հոգեվիճակը:

«Ամէն անգամ նորից ներմակ արքայազն» օժնելու, այլ խօսքով՝ զըլխադիր Մարգր դառնալու խոցր հետզհետէ լայն կը բանայ ներքին հորիզոնները հերոսին, անոր սիրուհիին, միւս տիպարներուն՝ իբրեւ նպատակաշարժար զսպանակներ ունենալով անոնց տաղանապայի յարաբերութիւնները, յուսախարութիւնները, սպասումները, երկակենցաղ Հոգեվիճակներն ու թեւարեկ անհշիւրը, որոնց անհաշտ հաւասարումով վիպակը կը հարստանայ պիրկ կշտութեամբ, մենախօսութեան վերիվայրումներուն համազօր քննով, վարակիչ ցերեթեամբս:

Աւելին. մէկ կողմէ յիշողութեան ու դէպքերու ներդաշնակ դոյալեցութեամբ, միւս կողմէ՝ գլխաւոր հերոսին եւ միւս տիպարներուն միջեւ հեռզհեռ զարգացող մտերմութիւններու եւ բախումներու հաշտեցումով, կրորդ մակարդակի վրայ՝ իրարու հակադրուող եւ իրարմէ թուիչք աւանդ անհաշտ իրադիմակներու վերջնական հաւասարումով՝ «Թագաւորի փոքր

որդին» վիպակի էջերուն իրագած բաղձերանդ աշխարհին «անորսալի շշուկ-նեբը» կը դառնան շօշափելի էրականութիւն, երբ «հերոսին մայրը, կինը՝ Նարինէն, եւ մինչեւ իսկ իր պապը կը ձուլուին Հրայրի գաւակին ներաշխարհին մէջ, որ վերոյիջեալ տիպարներուն իւրարանջիւրջն ժառանգած իր անդիմակ եւ մնայուն Հարստութիւններով գոտեպնդուած՝ կ'ըլլայ, կ'ըլլայ ամբողջովին եզակի, անթերի, անբաժանելի եւ բոլոր հերոսներուն իրականացումը հանդիսացող վերջակէտը, այսինքն՝ անդիմակ կեանքի էպպէս նոր երթ մը, «արսվիհետեւ քաղաւորի փոքր արդուն սազակամ չէ դիմակ կրել: Հենց դրանով է մա մերմակ արքայագն»:

Այսպէսով, երազին մէջ միայն իրականացող հեքիաթը կը դառնայ կրկնապէս իրական, երբ Նարինէի այգերուն դիմաց վար կ'իջնան զինք շրջապատած մարդոց դիմակները, «արսվիհետեւ քաղաւոր երաշալիքները քա արսապումն են եւ տեսմելի են միայն քեզ», ինչպէս կը խոստովանի Հրայր:

Հոս գրութիւնը կը հասնի այն ժակարդակին, ուր հոգեվիճակ-տիպարը կը հասկնայ, որ ածականութիւններուն պիտի յարդրեն ձանձրալի օրեր, կանաչ ծառերուն՝ ամէն կենդանութիւն իր սառն ծածկոյթին տակ թաղող ձիւնէր: Եւ Հրայր կը ճանչնայ այս բոլորը՝ իրենց լաւ ու վատ կողմերով, կ'ափոտայ ու կ'ըլլայ այն թեւաբեկ երազը՝ «ինչի համար տարում էիմք մեմք, ինչ մեզմից իւրաքանչիւրը երազում էր իր համար, քայց տեսաւ քա մէջ»:

Վերջապէս, հոգեվիճակները կը հասնին իրենց հասունացման գագաթնակէտին, եւ՝ «Իմ կամաւոր կը միանա մեր դիմակահանդէսին: Քեզ կը ժպտան ու կը ծագրեն մեր դիմակները՝ քատերակամ մի քիչ կեղծ ու մի քիչ էլ անկեղծ, իսկ դու կը յիմեւ տաւնց դիմակի, որսվիհետեւ կ'իմանա, որ դիմակը, ինչպիսին էլ այն լինի, միմիայն միջոց է, քայց ոչ երբեք էլ է: Դու կը տառապես քա քարուքեան մեքում, քայց չես դաւանանի քեզ: Դու կը մնա մերկ ու սլայծառ արքայագն եւ ապարմեփոյ դռները կը բացես նըրանց առջեւ»:



«Թագաւորի փոքր որդին» վիպակին երկրորդ ընթերցումը հանդիսացող «կարմիր ձիւնը» նոյնածաւալ ստեղծումը կը սկսի երիտասարդ հերոսին՝ Յովիկի նոյն տաղնապով, որ գտնուում է կուրծքս: Ան եւս կը տառապի իր արժանները յայտնագործելու տաղնապով, այն տարբերութեամբ, որ խոստովանութեան զուգահեռ՝ հոս վիճակ առ վիճակ զարգացում կ'արձանագրէ նաեւ երիտասարդ հերոսին ըմբոստ նկարագրերը, որ տիպարը կ'առաջնորդէ արժատական կեցուածքներու, հասարակութիւնն ու զինք շրջապատած ստապատիւր ու կեղծ դոյութիւնները մերժելու, անոնց զէժ վերջնական պատերազմ յայտարարելու յանդուգն քայլին: Յովիկ դուրս կու գայ Հրայրի թմբիկին եւ կը լծուի իր պապն ու ինքզինք յայտնագործելու գծուարին աշխատանքին:

«Ես գերադասում եմ մնալ միջանկեալ գոտում՝ Քնի տ Արթնացման, Յոյսի ու Տագնապի արանում: Եւ քանի դեռ իւրաքանչիւր չիզոյ դիմադրում է յամառ ու դաւադիր տագնապին, իսկ ինչու վերջնականապէս չի լին ինձ, եւ շարունակում եմ յուսայ» լաւատես տրամաբանութեամբ մեծախօսող Յովիկը:

վիկը, սակաւ առ տակաւ, կը ծրագրէ զուրս դալ «միջանկեւ զօտի»էն, որովհետեւ անոր ներաշխարհին մէջ արժատ կը նետէ ա՛յն համոզուժը, թէ՛ «Իժրախտութիւնը կողմն է, քա՛մնում է այս տան խաղաղ շնչառութեան մէջ, դարանակալում է առօրեայ համգտութեան միջից, գիշերուայ ընթացքում ծանրացած այս օդը նրանով է յղի»...

Ուրեմն՝ պէտք է յայտնագործէ այս տունը, իր ներսը խլրտող «հին զգացմունքներն ու սովորութիւնները», յաջողի իսկապէս տեսնել անտեսանելի անցեալը, թափանցել իր ներքին աշխարհին մէջ աստիճանաբար արթնցող «հին կեանքի ութմ»էն ներս, որովհետեւ՝ «կրկին յայտնագործելով այս տունը, գուցէ կարողանա՛ւ հասնել այն բանին, ինչը մի անգամ ինձ շյաջողուց»:

Կայ Հայրը, գիւղական ուսուցչի համեստ պաշտօնէն մինչեւ նրեանք զպրոցներէն մէկուն տնօրէնութեան պաշտօնը Հասած ճշգրտաւ, շափուած-ձեւում զաղաքակիրթ մշակը, զգացումներուն վրայ իշխելու արտակարգ կարողութեամբ օժտուած մայրը, «տան Հաւասարակշռութեան կենտրոնը», «նրա սիւնը», երրորդը՝ քայրը, կեանքի մէջ ձախողած, ինքզինք չգտած բացակայ ներկայութիւնը, բայց մա՛նուանդ՝ մեծ մայրը, որուն «ամլրեպ պատնէնն է [Հայրս], նրա երկուքեակը», որ «մեզ տալիս է ներշնչանք, մշտապէս քարմնացնում էր մեր յիշողութիւնը, աննկատ մնալով հանդերձ մեզ հայարտութիւն էր ներշնչում մեր տեսիլ նկատմամբ», որ սկզբունքով ստոյիկ տիպար մըն է եւ «եամուգում է, որ մեզ բաժին ընկած անարգարութիւններն աւ տառապանքը օրբացնում են մեր ցեղը(...) եւ մենք պետք է հայարտութեամբ կրենք մեր խաչը»:

ՍԱՐԳՍԻ ՆԻՐԱԿՈՍԵԱՆ

■ (Շար. 1)

Յ. Պ Ե Ր Պ Ե Ր Ե Ա Ն

**Ք Ե Ր Թ Ո Ղ Ա Կ Ա Ն
Ա Ճ Ո Ղ Ս Ա Հ Մ Ա Ն Ն Ե Ր**

Արմէն Մարտիրոսեանի առաջին Հատորը՝ «Բամաստեղծութիւններ», լոյս կը տեսնէր 1973ին: «Թուչունները» լոյս կը տեսնէր 1978ին, իսկ «Մեր սիրոյ երկիրը»՝ 1982ին:

Մարտիրոսեանի առաջին իսկ գործէն խառնուածք մը երեսն կու գար, որ Հետզհետէ Հասունեալով կը խօսէր ո՛չ միայն անհատական մակարդակի վրայ, այլեւ՝ Հաւաքական, դառնալով Հաւաքական եսի մը դրսեւորումը:

Եթէ բանաստեղծին առաջին դործը կ'առանձնանայ իր այլազանութեամբ (նկատի ունենալով, որ բանաստեղծին աչքը առանձին տեղ մը կանգ չէր առնէր, այլ կը բախէր տարբեր տեղեր, կը բանար տարբեր զգայնութիւններ), «Մեր սիրոյ երկիրը» կը յատկանշուի իր թեմաքիֆ ամբողջականութեամբ եւ կեդրոնացումով:

Անուշտ սրու Հարցեր կան, որոնք տեղ կը գտնեն Մարտիրոսեանի իւրաքանչիւր Հատորին մէջ. օրինակ, այս առեւտրութեամբ, իրարու Հետ աղերս ունին «Բամաստեղծութիւններ» Հատորին մէջ տեղ գտած «Արեւիտաներ» շարքը «Թուչուններ»ու «Մանկութեան քաղաք»ին եւ Հեղինակի վերջին Հատորին առաջին բաժնի բանաստեղծութիւնները:

Եւ ի՞նչ է այս Հարցը, եթէ ոչ մարդու շարունակականութեան կամ յուրժոռութեան խնդիրը, որ կը յուզէ բանաստեղծը ո՛չ միայն անհատական անցեակի եւ սպասանի դժոխ, այլեւ՝ Հաւաքական, որովհետեւ մարդու շարունակականութիւնը անմիջապէս կը կապուի իր երկրի ու ժողովուրդի բախտին, ճակատագրին հետ: Եւ եթէ Մարտիրոսեան իր վերջին Հատորի առաջին բաժնին մէջ այս Հարցը կը յուզէ անհատական մակարդակի վրայ, «Միջնադարի առաւօտը» շարքին մէջ գայն կ'արծարծէ անհատի ու իր ժողովուրդի յարաբերութեան մակարդակի վրայ:

Փորձենք արագ ընթերցումը կատարել այս փորձառութեան.

«Իսկ իմ տէրն ես միակ, իմ քաղաքը» —
ասում է որդիս,
որ դեռ չծնուած, շագմաւորուած՝ հանգիստ ասրում է
իմ երակներով հոսող արեան մէջ.
Տա հայեացքիս դիմաց տարւոյնդում է
ժամանակի միջով ետ ու առաջ:

Երբ առաջ է շարժուում, ես տեսնում եմ նրան
արժայական շքեղ ծիրանու մեջ՝
իր ունենալիք գաւակների թիկնապահ գումըը առաջնորդող...
Իսկ երբ ես է գալիս, երեխայ է միայն գահաժառանգ...

*Եւ այսպէս, բանաստեղծը ժամանակէ մէջ կը նաւարկէ ետ ու առաջ,
եւ քանի որ ընտանիքի մը բոլոր անդամները նոյն երկրին մէջ կ'ապրին,
բնականաբար նաեւ նոյն ճակատագիրը կը բաժնեն.*

Իսկ մեզ համար խորթ չեն մութ ու սառնամանիք.
Յրանք մեր կեանքի ազնկիցներն են եղիլ անցեալում...

*«Ինքնամկար» բանաստեղծութեան մէջ Հարցը աւելի անձնական չիլտ
կը ստանայ, սակայն կրկին կը ներկայացուի իրականի ու Հեքիաթայինի,
կամ՝ անիրականի նոյն սահմաններուն մէջ:*

*Բանաստեղծութիւնը կը սկսի այդ Հեքիաթային մթնոլորտին մէջ:
Բանաստեղծին ծննդեան դիշերն է, տան օճախը ինքնիրեն կը վառի, լամբը
կը բոցկլտայ ինքնիրեն, գիւղական խրճիթը կը լուսաւորուի վերջնականապէս,
եւ մայրը իր առջիններէն կ'ըսէ.*

... դու ապրեցնող լոյսի ծառագայթ ես
.....
Իսկ հայրս լուռ էր եւ ոչինչ չասաց,
Իսկ հայրս լուռ էր, բայց ես գիտէի, որ մա խօսում է
իր մէջ մանրորդող քտիտաշրջիկ երագների հետ...

Իսկ տատը փառք կու տայ՝
Իմ առաջին ճիչով մեր տուն այցելած Աստույ պատկերին

Ըստ Սոնա տառին.
Երեխաները, — ասաց, — ճշդօրէն յիշեցնում են
իրենց հետաւոր ու մօտիկ նախնիներին

*Եւ այս մէկը իրականութիւն ըլլալով հանդերձ, չի մտղթեր որ իրենց
ճակատագիրները եւս նոյնանման ըլլան.*

բայց Աստուած չամի, որ նայն ճակատագիրը ինձ ազնկցի՝
օրբօրեան, գաղթի
եւ հայրենիքում պանդուխտ լինելու ճամապարհով...

*Կեանքի ամբողջ ըմբռնողութիւն մը կայ այս շարքին մէջ, ուր նախ-
նիները կը մեռնին եւ աշխարհ կը վերադառնան նորածիններու կերպարան-
քով: Մարտիրոսեան կարծէք այս ձեւով կը հասկնայ յաւերժութեան գաղա-
փաբը: Անշուշտ այս մէկը ընդունելու համար հաւատք պէտք է, որովհետեւ՝*

Եթէ չհաւատանք, դժուար կը լինի ապրելը հաւանաբար,
չափազանց դժուար, անասելի դժուար, անտանելի...

Ինչ կը վերաբերի «Միջնադարի առաւօտը» շարքին՝ հոն եւս նման հարցեր կ'արծարծուին, սակայն այդ բոլորը կ'առընչուին Հայ ժողովուրդի պատմութեան, ճակատագրին, աւանդներուն, դիցաբանութեան, լեզուին, եւ այլն: Հաւանաբար օլտակար է այս շարքը կարգով Արմէն Մարտիրոսեանի «Մագէ կամուրջ» արձակ դործին հետ, որուն մէկ մասը տեսած ենք «Սովետական գրականութիւն» եւ «Վարուն» ամսաթիւերէրու 1983ի վերջին թիւերուն մէջ:

Շարքին մէջ յաճախ կը հանդիպինք ծերուկ բաժնուհարին, որ այս ինքնուրոյն «սրտեմ» տարբեր բանաստեղծութիւնները կը կապէ իրարու:

«Միջնադարի առաւօտը» կը բացուի «Հայոց լեզու» բանաստեղծութեամբ, եւ հասկնալի ու միատեմանակ տրամաբանական է այս մէկը, որովհետեւ լեզուով է, որ կը փոխանցուի պատմութիւնը, աւանդը, լեզուով է, որ կը պահուի ժողովուրդի յանրժութիւնը եւ, վերջապէս, լեզուով է, որ կ'աշխատի բանաստեղծը:

Եւ երկնքի ծովը կմտազանց է դառնում բռտերի,
 եւ մրանք, որ արդէն, իբրեւ քրիստոնեայ, մկրտուել են,
 այս անգամ կմտում են կրկնակի,
 իրենց լեզուի ծովում հորից մկրտում են,
 իբրեւ ապրազ, արարազ, մեռնազ զինուորներ,
 եւ հայոց լեզուի պահապան վերանակի տակ
 չկան շինական ու թագաւար:
 Երանք ամենքն ալ զինուար են կեանքում,
 իսկ մահից յետոյ՝ մահատակներ:

Մերունք բաժնուհարը յաճախ կը խօսի «ոգու սովի» մասին, որովհետեւ ոսկիի եւ փառքի համար տարուող ներքին պայքարները յաճախ աւելի կը մնասեն, քան արտաքին թշնամիները:

«Այս պատերազմը ամենից սարսափելիմ է՝
 ոսկու եւ փառքի պատերազմը մարմնական
 միամիտ ու ազատ հոգիների դէմ,
 երբ ոգու սով է շուրջը համատարած
 ...այս պատերազմը անլի սարսափելի է,
 քան պարսիկի, թուրքի, հռոմի դէմ կռուելը...»

Յատկապէս Անիին առընչուող բանաստեղծութիւններուն մէջ այդ ներքին, ֆիզիքական ուժակութիւնները կը հակադրուին ոգեկան արժէքներուն... Այս պատճառով ալ:

Մենք ենք մեր երկրի թագաւորները եւ դահիճը մաւր,
 ...մաս-մաս զիջեցինք երկիրը անմեղանակ՝
 շարունակ ճահանջելով, գաղթելով ու մանրանալով...

Սակայն պոյութիւն ունի ժողովուրդին կենսական մէկ կորիզը, որ սերունդէ սերունդ կ'ապահովէ անոր յանրժութիւնը: Ճիշդ է, որ ասոնց մէջ կան մարդիկ, որոնց սայլը ծանրաբեռնուած է գազթի ու անցեալի յիշողական մարդիկ, որոնք սայլը են, որոնք ճայրքներում որքան են անհայրենիք», սակայն ծեր բաժնուհարին տեսականը բաժնող այս մարդիկը իրենց հոգեկան հայրենիքը ունին, շարականներէն եկած հաւատքը, որ ծեփած է վանկան պատերը... եւ երբ նոյնիսկ այդ պատերը չկան, այդ հաւատքն է, որ զիրենք ու երկիրը կը պաշտպանէ արտաքին վտանգներէ...

Մարտիրոսեան յաճախ գրական ու պատմական յղումներ կը կատարէ, հոն արձագանգներ կը գտնենք Նարեկացիէն եւ միջնադարեան տաղերէն, յաճախ նոյնիսկ բանաստեղծութիւնները կը գրուին միջնադարեան տաղերու ձևով:

Անշուշտ շարքին մէջ ամենայնջող գործերը անոնք են, ուր կը միաձուլուին հեքիաթայինն ու իրականը՝ առանձին փոխաբերութիւններու մէջ, մանաւանդ երբ բնութեան եւ մարդու խորհուրդները կը խաչածեւուին: Օրինակ, «Անճիւր» բանաստեղծութիւնը, որուն անգամ մը հանդիպած ենք Մարտիրոսեանի «Քանաստեղծութիւններ»ուն մէջ, կը վերայայտնուի հաս: Հասկերը դեղին թիկնոցներու մէջ լոյս կ'աղերսեն, անոնք կը հագնին լոյսի թիկնոցներ եւ վերստին կը բարձրանան՝ մահուան դէմ կռուելու համար: Իրենց հետ յարութիւն կ'առնեն Սասնայ արքաները, որոնք զուրս կու գան քարանձաւներէն: Մանգաղներուն տակ կ'իյնան հասկերը, Սասնայ արքաները կրկին կը մեռնին, կը փակուին հողին կամ քարանձաւին մէջ, յաջորդ տարի, անձրեւներու եղջերափողին հետ կրկին արթննալու ու լոյսի թիկնոցներ հագնելու համար...

Հոս թէ՛ շարունակականութեան տաղնապը կայ, թէ՛ մեռնող-յառնող բնութեան եւ թէ՛ յաւերժականութեան: Եւ կը տեսնենք, թէ ինչպէս առասպելն ու բնութեան խորհուրդը կը միաձուլուին հասկերու փոխաբերութեան մէջ, եւ ինչպէս անհատին տաղնապը ու ժողովուրդի պատմութիւնը կը հանդիպին, կը միաձուլուին...

Մարտիրոսեան բանաստեղծ մըն է, որ գլխաւորաբար կը յենի իր բանաստեղծական խառնուածքին եւ ներքին կարելիութիւններուն վրայ: Եթէ սխալ չհասկցուինք՝ պիտի ըստինք, որ իր սերունդի ամենանուագ զմտուորակներն է, հակառակ իր քերթողական հարուստ ենթահողին...: Կը կարծենք, որ Մարտիրոսեանի նման դէմքեր պէտք է առնել ու հասկնալ իրենք իրենց մէջ, որովհետեւ անոնք կրնան մաս կազմել ոեւէ սերունդի, որովհետեւ իր բանաստեղծական քիչ մը տերվիլ խառնուածքը բնականաբար կ'անջատուի որեւէ շարժումէ:

1984ին լոյս տեսած Հարցադրոյցի մը մէջ, Դաւիթ Յովհաննէս կ'ըսէր. «Նոր կեանքը» արտայայտում է հինգ այն, ինչ ուզիր եմ ստել. խօսքը իմ կեանքի, բանաստեղծութեան հար շրջանի մասին է: Այդ իմաստով որոշակի կ'ապ եմ տեսնում նախորդ գրքիս վերնագրի «Անցեալ կորուսեալ»ի եւ ներկայիս՝ «Նոր կեանք»ի միջեւ»:

Անշուշտ նման յայտարարութեան մը պէտք չկար, հաստատելու համար, որ Դաւիթ Յովհաննէս զգալի նահանջ արձանագրած է իր սերնդակիցներուն առաջադրանքներէն:

Հետաքրքրական է նաեւ այն խանդավառութիւնը, որ աւանդական քննադատութիւնը ցուցաբերեց Դաւիթ Յովհաննէսի քերթողական այս Նոր կեանքին աւրելութեամբ: Ակնարկութիւնս կ'երթայ Մելիքեթ Մելքոնեանի եւ Դաւիթ Գապարեանի դրախտական-յողուածներուն եւ Մերո իմանդադեանի քիչ մը նանուցումային բնոյթի ակնարկին, որ կը տպուէր «Անցեալ կորուսեալ»ի կողքի ներքին էջերուն: Հոս պէտք է արձանագրել, որ մեր բուրջ յարգանքովը հանդերձ Դաւիթ Գապարեանի արձակի վերաբերեալ տե-

սակէտներուն, բանաստեղծութեան գծով, իր մօտեցումը զարմանալիօրէն աւանդական, չըսելու համար պահպանողական կը գտնենք...

Այս «նահանջ»ը շատ ալ զարմանալի չէ, որովհետեւ երբ 1978ին կը ներկայացնէինք տուեալ սերունդը, որոշ մերապահութիւններ արձանագրած էինք Դաւիթ Յովհաննէսի «Երգերի պսակ»ին գծով: Վերապահութիւնները գլխաւորաբար կը բխէին անոր հոռոտական լեզուէն, որ իբրեւ բանաստեղծական միտիա չէր կրնար զինք ձերբազատել հայրենի աւանդական քերթողական մտածելակերպէն: Եւ այդպէս ալ պատահեցաւ...

Անհանդստացնողը այս բոլորին մէջ բանաստեղծին ընդունելի ըլլալու մարման է եւ հոս-հոն գլուխ ցցող... անհամեստութիւնը: Օրինակ, բանաստեղծը Զարեհեան ձեռով պիտի խօսի իր բանաստեղծութեան մասին ու ըսէ:

Երգում եմ, քանզի իմ կամքով
իմ ընտրած գործն է այդպէս,
երգում եմ ցափ, խնդութեամ,
կեանքի ու մահուան մասին,
ու քէպէտ երգերիս թեման
հանութ է, յաւերժ ու հանճարեղ,
բայց յանգստաւարակ է, թեթեւ,
ուստի շատերի համար պարզ,
եւ իր մէջ իր գաղտնիքը պահած
երգս հոսում է անարգել:

«Հանճարեղ»ը մէնք ընդգծած ենք եւ պատճառը, կը կարծենք, բացարձակեան կամ մեկնաբանութեան չի կարօտիր...

Միւս կողմէ սակայն՝ շահուկան են այն կերքը կամ եռանդը, որ Դաւիթ Յովհաննէսի տողերուն մէջ կը մնան, ինչպէս եւ այն նուրբ հեզանքը, որ «Հին կամայ» շարքին մէջ կը շարունակուի:

Դաւիթ Յովհաննէս, ինչպէս իր սերնդակիցներուն մեծ մասը, քաղաքային բանաստեղծ է, եւ այս մէկը, իր պարագային, կը շեշտուի Երեւանի կապուած բանաստեղծութիւններուն մէջ, ուր հին քաղաքը եւ քերթողին անցեալը յաճախ կը միաձուլուին: Եւ Դաւիթ Յովհաննէս «Հին տներ, եին կամայ» բանաստեղծութեան մէջ քաղաքի կորսուող անցեալին մասին պիտի ըսէ:

Քանզիում եմ եին տները,
եւ քուղոգները, բերանը բաց,
յարձակումներ է գործում տներեր,
եւ մերկաթում եմ աշխարհի առայ
ներսի պատերը քա՛ց —
ինչպէս կիմր, տարիքը առած,
ցուցադրի մերկութիւնը խեղճ:
Եւ բալկոնները նրանց փայտաշէն,
քարերը փտած, զամիշները շեղ —
կանչում եմ կարծես օգնութիւնը իմ:

Անշուշտ անցեալը միայն առարկայական տուեալներէ չի բաղկանար: Բանաստեղծի անցեալին մաս կը կազմեն նաեւ մեռած բանաստեղծ ընկերոջ՝ Սլաւիկ Զիրոյանի նուիրուած շարքը («Երգեր մեռած ընկերոջս»): Իսկապէս

բարսխուն եւ բուական բարդ հոգեվիճակ մը կը փոխանցուի այս շարքին մէջ: Կ'անկալուի սակայն, որ իր ա՛յլ բանաստեղծութիւններուն մէջ Գ. Յովհաննէս աւելի նրբանկատ գտնուէր իր միւս սերնդակիցներուն նկատմամբ, որոնք դեռ... ողջ են:

*
**

Ինչպէս այս հինգ անուններուն հրատարակած հատորները ցոյց կու տան, գրեթէ ամբողջ բանաստեղծներու այս գտնուածքն է, քերթողական հասկացողութիւններու իմաստով, շատ քիչ հասարակաց բան կը մնայ:

Ճիշդ է, որ անոնք քաղաքային կենցաղի ու արտաքին բանաստեղծներ էին, բացի Արմէն Մարտիրոսեանէն, որ, ինչպէս անգամ մը ըսինք, որեւէ շրջադիմի մէջ կարելի չէ սահմանափակել, եւ զինք պէտք է հասկնալ իր անհատական ու բանաստեղծական մտահոգութիւններու ինքնայատուկ կացութեան մէջ:

Դաւիթ Յովհաննէս դուրս եկաւ իր առաջին հատորին մէջ քողարկուած քիչ մը տատանող, քիչ մը անորոշ դրութեանէն, եւ փողով-թմբուկով յայտարարեց իր նոր ուղղութիւնը... դէպի ապահով գոտիներ:

Յովհաննէս Գրիգորեան չէր կրնար ընդունիլ այն արուեստական արժեքափերը, որոնք միջինը կը կազմէին քերթողական ըմբռնումներուն, եւ ինչպէս տեսնենք՝ հակազդեց իւրովի, նոր շեղում մը եւ նոր աշխարհ մը ստեղծելով: Իսկ Գրիգորեան իր երրորդ հատորէն սկսեալ, եւ ինչ որ տեսած ենք ատկէ ետք հարցինի մամուլին մէջ, բանաստեղծական նոր հոլովոյթ մը կը բերէ, ուր սովորական արտաքին եւ հոն պահոււցած քնարական տիրութիւնը, իրականութեան փոքր փաստերու գեղեցկութիւնը, բանաստեղծին շունչին տակ նոր որակ կը ստանան:

Իսկ Էդոյանի եւ Յարութիւնեան, որոնց բանաստեղծական դիտարար մտքին փոխաբերութիւնը եւ անկէ բխած լեզուամտածողութիւնը կը մնար, այս իմաստով երկու ամենամօտ սերնդակիցները կը մնան, հակառակ անոր, որ բոլորովին տարբեր քնաշխարհներ կը պեղեն:

Սփիւռքահայ գրադատութեան եւ ընթերցողներուն համար միշտ ալ զժուար եղած է հետեւել հայրենի գրականութեան՝ հիմնականօրէն քննարկել պատճառներով: Այսինքն՝ հայրենի հանդէսներու կամ գրական ամսաթիւթերու անկանոն առաջումը սփիւռքահայութեան պատճառ կը հանդիսանան, որ կարելի չլլայ հանրապետական հետեւել հայրենիքի մէջ ծաղկող գրականութեան: Գիրքերու պարապան աւելի զժուար է, Տակաւին՝ նոր գրող մը ընթերցողին ուշադրութիւնը վրաւելէ ետք, պէտք է այդ հեղինակին առաջին կամ երկրորդ հատորը ապահովել, ինչ որ, շատ յաճախ, անկարելի կ'ըլլայ... Եթէ այս բոլորին վրայ աւելցնենք Լիբանանի սասնամեայ պատերազմի պայմանները՝ պատկերը աւելի քան յստակ կը դառնայ...

Եթէ նախապէս յիշուած անուններուն որոշ չափով կրցած ենք հետեւիլ՝ սրտճառք այն է, որ «Բազին» ԴՊական թուականներու սկզբնաւորութենէն հետեւեցաւ Էդոյանի-Գրիգորեանի-Մարտիրոսեանի սերունդին, մէկէ աւելի արտայայտութիւններ եղան անոնց առաջին գործերուն մասին: Աւելին. «Բազին» խմբագրութիւնը ամէն ճիշդ ի դրո՞ւս, ուսանողներու թէ հայրենիք այցելողներու ճամբով անոնց գործերը ապահովելու...

Գծբախտարար, նոյն ձևով կարելի չեղաւ հետեւիլ յաջորդ սերունդին: Հատուկորոշման, մամուլի ճամբով կատարուած ընթերցումներ, տպագրութիւններ, եւայլն, բնականաբար բաւարար չէին յստակ պատկերացում կազմելու համար:

Այս իմաստով, դժուարութիւն կը ստեղծէ նաեւ տեղեկութիւններու պահպարդ Օրինակ, ո՞ւր զետեղել էլուարդ Միլիտոնեանի, Կարէն Առաքելեանի կամ Աշոտ Աւդալեանի պէս անուններ:

Էլուարդ Միլիտոնեանը իր բանաստեղծական արտադրութեան գլխաւոր տարեկից կը թուի վերոյիշեալ սերունդին, սակայն համեմատաբար զգուշուոր հետաւորութեամբ մը՝ աւանդականին եւ նորարարութեան միջեւ: Անկեղծօրէն, Միլիտոնեանի «Յիշատակի գանգիրը» (1979) յատուկ տպագրութիւն չէր ձգած մեր վրայ, յստակ քերթողական հոլովոյթ կար «Մազիկ ծովային» հասարակութիւնի պարադայնին, իսկ վերջին տարիներուն հայրենի մամուլի մէջ լոյս տեսած իր բանաստեղծութիւնները խորացող շունչ մը կը մասնեն:

Մանթութիւնները շատ աւելի քիչ են Կարէն Առաքելեանի մասին, հակառակ անոր, որ ինչ որ մամուլի մէջ կարգացած ենք իրմէ, կը յատկանշուի ջնարական նուրբ զգայնութեամբ մը: Որոշ պողպատ մը տալու համար այս առընչութեամբ՝ կարգանք կարգ մը տողերը «Ողջոյն քեզ, Մարիա՛մ...» բանաստեղծութեան.

Այսօր բառերը հացի համ ունեն:
Ջրերը նորից տխուր են հոսում: —
...Ոչինչ չի փոխուել:
Պատկերը նայն է:
Նայն է վարսերիդ սրբիչը խաւատ —
եւ կրունկների փռչիմ է նայնը
եւ տղամարդու երկուցը կաւատ:

.

— Ողջոյն քեզ, Մարիա՛մ, հերարձակ մշուշ...
Հրաշք օրերին քս փա՛ռք ու պատիւ.
Եւ մեղանշումիդ՝ սիրոյ մէջ ամուշ,
Եւ տառապանփոյ՝ պայծառ ու պատիւ:

Մէկ այլ բանաստեղծութիւն՝ «Խնձորի ծառ» խորագրուած, Լորգայէն մէջբերում մը կը կատարէ եւ կը սկսի հետեւեալ տողերով.

Խնձորի ծառ:
Քո նիւղերին բայն են դրել
Քամիները մոռացումի:

Հոս՝ Կոմիտասէն եւ Լորգայէն եկած արձագանգները ազու բարեխառնութիւն մը կը ստեղծեն: Ծիւղ է, որ Յ. Գրիգորեանի մը յանգչնութեան կամ Հենրիկ Էդոյեանի վոխարերական մտածելակերպին պէս քերթողական կեցուածքներ չկան, սակայն գոյութիւն ունի արուեստականութիւնները թափափած ջնարական պարզ մտեցում մը, ինչ որ իսկապէս շահեկան է:

Այս իմաստով ուշադրաւ անուն էր Աշոտ Աւդալեանը, որուն վաղաժամ մահը պատճառ դարձաւ, որ իր հաշուոյն աւելի մեծ ակնկալութիւններ չկատարենք:

Աչոտ Աւղայեան կարծէք օղակ մըն էր Էդոյեան-Գրիգորեանի եւ Յակոբ Մովսէս-Արմէն Շեկոյեանի սերունդներուն միջեւ :

Պատահաբար մեզի հասած իր առաջին գրքոյի՝ «Նաւասարդ», իր աչխարհով ու միջնորդումով կարծէք ազերս ունէր Արմէն Մարտիրոսեանի քերթողութեան հետ (յատկապէս Մարտիրոսեանի բանաստեղծական մէկ երակին հետ, որուն աւելի ամբողջական ձեւով հանդիպեցանք «Մեր սիրոյ երկիրը» շատրօին մէջ) :

Գծաբանաբար, Աւղայեանի երկրորդ ժողովածուն՝ «Արծաթէ օր»ը չենք տեսած, սակայն ինչ որ լոյս տեսաւ Հայրենի մամուլին մէջ Աւղայեանի մահէն առաջ՝ ուշադրութեան արժանի որակ մը կը ներկայացնէր : Իր 1985 Մարտի Համարին մէջ «Բազիմ» անդրադարձաւ այս շարքին :

Միջնադարեան տաղերգութեան լեզուն այնքան լուռ ընկալուած եւ գերաթարմացուած էր երիտասարդ բանաստեղծին կողմէ, որ այլեւս իր ինքնուրույն ոճին մաս կը կողմէր : Օրինակ, «Օր արք-հացման»ի մէջ կը կարդայինք .

(Օր արք-հացման —
ծաղիկների հովանաւոր,
որ մատնեիրիդ կրում ես յայս
ու աչքերիդ՝ գարգանկար,
ու քնեիրիդ վրայ լայսն է հանդիսական . . .
— Այսօր եղեք հանդիսական
ցնորքների պատարագին
ու խմբերգի համար բերէք
մի ծիսարան :

Ինչպէս կը նկատենք, ծխական հանդիսաւորութիւն մը կայ Աւղայեանի տողերուն մէջ : Եւ հետաքրքրականը այն է, որ հակառակ այս բանաստեղծութեան ծխականութեան, տողերը չեն ճնշեր ընթերցողին վրայ, այլ կը փոխանցուին թեթեւ շունչով մը :

Այլուր՝ փորձառութիւնը, որ կը փոխանցուի, կարծէք ջրանկարային պատկերի թափանցիկութիւնը ունի .

Եւ երեկոն այնպէս հալուեց,
որ արիւրիս մէջ գումատուեց տեսանելիմ,
ու երկմէքի գուլպալ ափով
վազեց քամին՝
տագնապահար, տեսանելի ու տիրական :
Իսկ մէկ ուրիշ բանաստեղծութեան մէջ պետի ըսէ .
Անցան օրերը,
գու յիշագութեան գաշտում մեծացար
ու ոտաբառյիկ
նայեցիր ծաղկանց տօնին գնացող կանանց նտեւից :

Կը կարծենք, թէ Աւղայեանի կամ կարէն Առաքելեանի բանաստեղծական աշխատանքը տեղ մը կը հանդիպի Էդոյեանի կամ Գրիգորեանի ճիւղին հետ, այն իմաստով՝ որ քերթողական լեզու մը կը ստեղծէ, որ հետուէ հսկայականութենէ կամ պատմականութենէ : Այս իմաստով՝ զուգահեռ աշխատանք մը տարուած է կարծէք : Փաստօրէն, խորհրդահայ բանաստեղծ-

ծուծեան ընդունուած կամ պաշտօնականացած քիչ մը հռետորական, քիչ մը պատմողական-նկարագրողական միջին յղացքն է, որ կ'ամլացնէ իր հասանքին մէջ ինկող ամէն քերթողական փորձ:

**

1981ին Յովհաննէս Գրիգորեան կը գրախօսէր Յակոբ Մովսէսի նոյն տարին լոյս տեսած առաջին գիրքը՝ «Թոխիջներն երկիմէ»ը, հոն տեսնելով գլխաւորաբար անձնականացած բնապաշտութիւն մը:

Յակոբ Մովսէսի եւ Արմէն Շեկոյեանի բանաստեղծական կազմաւորումով կը սկսէր զիմագիծ կազմել յաջորդ սերունդը, եւ այդ սերունդին քերթողական մտահոգութիւններն ու առաջադրանքները կը սկսէին ձեւաւորուիլ:

Եւ պարզ այն փաստը, որ Գրիգորեան կը ներկայացնէ Յակոբ Մովսէսի երախայրիքը, կու գայ հաստատելու, որ Գրիգորեանի սերունդին հաճաքական ճիշդ այլեւս ընդունուած արժէք է, ինչպէս եւ՝ ինքնուրոյն նոր սերունդ մը սկսած է կազմուիլ:

Այս նոր սերունդը այնքան ուժգին ճիշդ սպասելու պէտք չունէր՝ աւանդական մտածողութեան դէմ պայքարելու համար. նախորդ սերունդը շատ բան հարթած էր այս պծով, բնականաբար նաեւ՝ պէտք չունէր բիրտ հակազդեցութիւններ ցուցաբերելու: Եթէ կ'ուզէք՝ այս քերթողութիւնը նախորդէն նուազ յառաջապահ է, նուազ զմտախոհական: Եւ հակառակ այս սերունդին աւելի համեատ առաջադրանքներուն, աչքատու է իրենց իրենց հետ անկեղծ ըլլալու միտումը՝ անհաստական ու բանաստեղծական մակարդակներու վրայ:

Այս կապակցութեամբ, «Նարունակութիւն» բանաստեղծութեան մէջ Արմէն Շեկոյեան պիտի ըսէ.

Այսօր տարում մեզ շարունակ
պարզաբանուած մի ասելիք,
քր նկարուէր մեր ընդերքում
տարածութեան դէմքը գալիք:

Արմէն Շեկոյեան երբեմն կը խօսի նաեւ իր սերունդին դիմադրաւած հարցերուն, մտահոգութիւններուն, ինչպէս եւ հաւաքական կացութեան մասին: «Մեճ» խորապարտած բանաստեղծութիւնը պերճախօս է այս առումով.

Այո, երկտակուցեցինք ու գալարուցեցինք
մեճի քանարուեստի վարժ նիրսններում:
Մեր շնորհները մեճի ո՛րնց վատնեցինք
Երեսնի պազ սրճարաններում:
Գուցէ դա էր էն օրերի միշդը,
գուցէ վատնելու ժամանակն էր դա:
Ինչքան յիշում եմ՝ տղերքը միշտ էլ
իրենց նըղել են, որ մնան արդար:

Սփիւռքի մէջ մեզի ծանօթ է Շեկոյեանի «Ձեզ հետ միասին» հատորը միայն:

Յակոբ Մովսէսի քերթողական երանդապնակը աւելի հարուստ է, ինչպէս եւ՝ արտայայտական կերպերը:

Երբեմն Աւդալեանի ծիսականութիւնը կամ միջնադարեան տաղերու շունչը մեր ուշադրութիւնը կը դրաւէ, այլուր՝ երեւակայութիւնը, այլ մակարդակի մը վրայ՝ հովուերդութեան հասնող քննադատութիւնը, եւ երբեմն՝ մշակութային ենթահողը:

«Աւետիս» բանաստեղծութիւնը կը բացուի այսպէս.

- Ելէ՛ք, տեսէ՛ք, զի՞նչ կայր ծովիմ:
- Ելի՛մ, տեսի՛մ՝ զնա՛ն ի ծովիմ:

Ելէ՛ք տեսէ՛ք նա՛ն է գալիս
 նա՛ն է գալիս մեզ աւետիս
 տեսէ՛ք ահա փայլուն արեամ
 եօթ գոյներով ոնց ծիածան
 նա՛ն է գալիս բացն է նաւին
 դէ ցնծացէ՛ք ծովիմ է կայմին
 առագաստներն իր սսկեթել
 եւ արծաթ եմ ցռուկ ու խել

Նման բանաստեղծութիւններուն առթած միակ մտահոգութիւնը այն է, որ գեղեցիկ ու թելադրական ըլլալով հանդերձ, ջիջ մը շատ մշակուած կամ յղկուած կը թուին: Ընթերցողին համար անմիջապէս նկատելի կը դառնայ, որ երիտասարդ բանաստեղծը դրական որոշ մշակոյթ ունի եւ զայն խելացի կերպով կ'օգտագործէ:

Այլ գործերու մէջ, աւելի յանդուգն երեւակայութիւն մը կը դրսեւորուի.

Երեխաները հաւաքուած
 ուղեկցուք՝ քամի վառ մամբի
 գլխարկներն եմ նետում իրենց
 քրերի մէջ ալ գետերի:

Գուցէ պատկերին թիւրդրականութիւնը շատ յստակ չէ, սակայն տուելը, որ վերցուած է «Մոխրամուտ է ասողը պայծառ» բանաստեղծութենէն, եւ քերթուածին ընդհանուր մթնոլորտին մէջ լաւ կերպով կը շաղուի:

Յակոբ Մովսէս «Թռիչքների երկինք»էն ետք հրատարակեց «Յնծուքեան պահեր» բանաստեղծական ժողովածուն (1984):

Այս տղոց գործերուն մէջ խրախուսիչ է նաեւ մայրենիի մաքրութիւնը: Նման հարց պիտի չզննէնք, եթէ յաճախ շնեղանայինք Էդոյեանի, Գրիգորեանի, Գաւթի Յովհաննէսի եւ Արտեմ Յարութիւնեանի տողերուն մէջ ազատ համարձակ շրջագայող օտար բառերէն...

Եթէ այս սերունդէն խօսեցանք զլիսաւորաբար Յակոբ Մովսէսի եւ Արմէն Ենկոյեանի մասին, պատճառը միայն անոնց գործին գատորոշուող պարագան չէր, որովհետեւ սերունդ մը կը բաղկանայ իր բոլոր անդամներով, անկախ իրենց արտագրութեան որակէն, եւ այս ամբողջութիւնն է, որ կը ճշդէ անոր հաւաքակտն ուղղութիւնը, եւ աւելի ուշ՝ դիմագիծը:

Եթէ բաւարար չիւթ ունենայինք մեր ձեռքին տակ՝ պիտի ուզէինք խօսիլ Հրաչեայ Սարուխանի, Գարուշ Հարեանցի, Իգնատ Մամեանի (գուցէ եւ Սամուէլ Կոսեանի)՝ եւ նման երիտասարդ անուններու մասին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԷՐԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

Հոգևորներ

ՅՈ՛Ւ ԱՐԱ,
ԵՋՕ՝...

«Բագին»ի Փետրուարի համարով տրուած Արամ Հայկազի «Հանդիպում մը» պատմուածքին մէջ ընթերցողը տեսաւ հարկաւ Քիւրտիստանի լեռներուն մէջ իրարու հանդիպած երկու շնչուորները՝ հայ մարդ մը եւ տարագրութեան ճամբաներուն վրայ տարապարհակի ենթարկուած իր եղբւր։

Արամ Հայկազի նկարագրած զէպքը, ինքնին, լրիւ կը պատկերացնէ այն մտերմութիւնը, որ անպակաս եղած է հայ մարդուն ու իր եղան միջեւ։ Մտերմութենէ աւելի՛ բուն մը։ Հայ գիւղացիին համար լծակից մը եղած է եղբւր, խօսակից մը, ստեղծիչ անկամը, այն աստիճան, որ Երևանի գրականութիւն մը մշակուած է այդ փոխարարութեան հիմամբ, ու երգ մշակուած է, երգ-երգոցնէ՛ր, մէկը՝ Կոմիտասի Հորովելը... Արի, ա՛րի, բէ՛ մատաղ, Խ՞՞ եղբ, ջա՛ն...

Սը շտեռած կամ եզան հետ մօտաւոր ու հեռաւոր որեւէ կապ չունեցած, շունեցող մարդերն անգամ այնչո՞ւր յայտ երգը, մեծ ոտաններու մեծ սրահներուն ու հողիներուն մէջ սուառնալիս ման եկած անմաշ այդ գոհարը, անշուշտ, իրեն հետ ունի արուեստին հրաշքը, յայտ Կոմիտասին համար հայ գիւղացիին ու անասունին միջեւ գոյութիւն ունեցող կապը ի՛նչ արժէք ունէր, հողիին կը կրէր հողին, հողագործին, հողագործին աշխատակիցին կտպուած միաժայլ կարարգանքը, տասնց սրուն հաւանաբար այնքան ուժգին պիտի չհնչէր անիկա, երգը, ու սերունդներու հետ ջայլ պահելու բախտ մը պիտի չտրուէր անիկա անոր հերոսին։

Հայրենի հողերուն վրայ ասորուած այս մտերմութենէն ետք, իր եղան հանդէպ ունեցած հայ մարդուն զգացումները գրեւորուեցան նաեւ այլուր, մեր ժողովուրդին կրած մեծ ցնցումներուն ընթացքին եւ անցան գրականութեան մէջ իբրեւ սրտատուչ դրուագներ, հերոսներէն ասունը՝ իբրեւ կենդանի մեռել, անասունը՝ շարժող յուշարձան։

Արամ Հայկազի հերոսը կ'ըսէ.
«Ձեռն հասկնար, ախպար ջան, առ մէկ ամառուէն գառ ա՛լ բամ չէ մնացեր թախկին շէն օծախէն... կիմ, ծնազք, տուն, գաւակ, արտ, այցի, հող, ամէն բան, ամէ՛ն բան կարմնուցեր եմ... եւ ահա Աստուած կը խղճայ վրաս ու Տոգանը կը զրկէ ինձի»։

Իր ընաշխարհէն հայ մարդն ու իր եղբ հանած ու Քիւրտիստանի լեռներուն մէջ տարազնած թուրքը ներխուժեց նաեւ Արեւելեան Հայաստան, ուր սպահ մը կրկնուեցաւ եռյակ տարողնումը, որուն հէնքին վրայ հայրենի բանաստեղծ Վահան Գրիգորեանի կատուցած արձակ հատորը համարեալ

կը կրկնէ Արամ Հայկազի փորձառութիւնը, «վերապրած» եզր գրած Հոգիին առիթով.

«Բայց չէ՞ որ Զոյալը փաստօրէն իմ ամենամօտիկ ընկերն էր եղել, իմ նախնական բարեկամը, որ յիշեցնում էր հիմա բայտրին, բայտրին, որոնց կարգրել էի...»:

Ու Արամ Հայկազի Հերոսին միտ վերաբերումը, առաջինին չափ սրտառուչ, նոյնքան մարդկային.

«...Եւ դուք էլ եւ կ'ազնէք, որ սիրտ չունենամ, հալած, հատած, կաշի-սակոք մնացած անասունը ուրիշՊի-րու բոլոր կենդանիներուն հետ նետեմ հասարակաց գո՞մը...»:

Իր Հարազատին Համար Հանգստաւէտութեան լուազոյն պայմաններ երացող, ստեղծող Գիւրտիստանի Հերոսին յարեւ նման ապրումներ գրեւորեց Հայ մարդը նաեւ Խորհրդային Հայաստանի մէջ, սեփականութիւնները ջնջող ու ամէն ինչ Համայնացնող օրէնքին կիրարկութեան օրերուն: Այդ իրադարձութիւններէն մաս մը վիպականացուցած Սուրէն Այվազեան եւս ունի ուշադրու էջեր, ուր կ'ուրուանայ Արամ Հայկազի Տողանին եւ Վահան Գրիգորեանի Զոյալին պէս եզ մը, Խումարը, որուն տէրը նուազ վիրաւոր չի թըւիր, քան իր եզը Հասարակաց գոմին չվատահող Հերոսը. «Պրծաւ, հումար քան... Սրանից դէնը քեզ ո՞վ պիտի քորի: Էլ մագերայ այսպէս չեմ շողայու: Հարիւր տէր ես ունենայու, ամա ոչ մէկի սիրտը քեզ համար չի ցաւալու: Ո՛չ նրանք քեզ կը համայնեմ եզների մէջ, ո՛չ դու նրանցից մէկին: Հարիւր ձեռքի տակ անտէր հումար...»:

Սուրէն Այվազեան մինակը չէ, որ նման ապուրու-թիւններ կը բերէ Համայնացման շրջանէն: Ջիւնհալի օրե-րուն եւ անկէ հտք շատեր նիւթ դարձուցին տուեալ պահու իրադարձութիւնները եւ նոյնանման դրուազներ յանձնեցին թուղթին: Ահաւասիկ երկրորդ նմոյշ մը, Անահիտ Սահինեանի «Վարօտ» վէպէն.

«Իսկ թէ գոմերի շուրջը եւ գոմերում ի՞նչ էր կատարուում, ի՞նչ ազմուկ, ի՞նչ հայեոյանք, ի՞նչ ծեծ: Գոմապահ-ներին չվստահելով, ամէն մէկն ինքն էր գնում, քաճում կամ քացայայտ իր անասուններին իր ձեռքով կերակրում, խոտը միւսներին առջեւից քաշում լցնում իրենի առաջը, կապած տեղից արծակում, տանում մի ուրիշ, իր կարծիքով աւելի յարմար տեղ կապում»:

Թաքուն սէր, բոցայայտ կապ, միշտ սրտազրաւ: Ամբողջ անցեալ մը վերակենդանացնող Խորհրդանշական շունչ մը, եզը, որուն մասին մշակուած դրականութիւնը նոյնիսկ Համեմատութեան եզը դարձաւ ու ստացաւ առանելութեան նիշեր, այս անգամ Վարուժանի ստեղծած Հմայքին տակ:

Արամ Հայկազի վերոյիշեալ պատմութեան քէն ետք, Հետա-դաշ էջերուն կը ներկայացնենք շարք մը նմոյշներ, որոնց յուզած ապրումը, ափսո՞ս, մեր Հոգիներուն մէջ Հետազհետէ կը պարպուի իր բովանդակութենէն...

*Մեր հզները չեն անձաւայնէր Ֆրանսան, զոնէ զբազանութեան ժէջ,
բայց անոր հզները կ'անձաւայնեն Հայաստանը: Աճբողջ տարբերութիւ-
նը հող է:*

ԼԻՒՊ-ԱՆՏՐԷ ՄԱՐՍԵԼ

Հ Ա Ր Կ Ի Ն Ք



Եզներս են խարտեաշ, լոյս նակատներով՝
Ջոր պանուներ եմ նուխարով կապոյտ:
Գարունի առտուան օդէն են գիւնով —
Կը նային, խաղա՛ղ, դաշտերում անփոյշ:

Ձրմեղը գանձի խարս՛վ սրմուցի —
Մեհեանին պարարտ կուտներն են կարծես:
Իրենց սանտրրուած պոչը քուարծի
Կը լիզէ իրենց կողերն՝ օձի պէս:

Կը սիրեմ անոնց հուսը քիւրածալ,
Ռումզերնին տամուկ, բիքերնին խոշոր՝
Ուր կայ գաշտերուն երազն անայլայլ,

Եւ հօնէը իրենց, եւ պոչիւնն հրգօր
Հորիզաններէ՛ն, — երբ կ'երթան անվերջ
Եզիւրնին մըխած Արշալոյսին մէջ:

ԳԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

digitised by A.R.A.R.@

...ժողովից դուրս գալով, Գալուստը դրսում խոր ներս է քաշում սառը, ասես շրթունքներով շօշափելի օդը: Կա մեզ հետ լուռ քայլում է նոր երկած ձեռն վրայով եւ անվերջ ծխում է: Հասնում ենք տուն, եւ կա ուղիղ գոմ է դնում: Մայրս ասում է.

— Քեռի Գալուստի հետ մտիւր գոմը, տաքացիր, մինչեւ ես օջախը վառեմ:

Գալուստը բաց է անում գոմի ծանր դուռը: Տաք, կծու հոտով յազեցած գոյորչին խփում է մեր դէմքին: Այդ գոյորչու ետեւից, նարնջի պայտով փայլում են եզան աչքերը: Երբ դուռը բացւում է, եղբ որոտալից բառաշում է: Գալուստն ասում է.

— Չա՛ն... — ու գրպանում լուցկի փնտռելով զգոյշ քայլում է դէպի այն կողմը, ուր դրուած է կաւէ աղանակերպ ճրագը: Մի ձեռքում պահելով վառած լուցկին, միւսով նա զաղանակը կտուցից քաշում է պատրոյգը ու մօտեցնում լուցկու զողացող բոցը: Մազութի ճրագը աղօտ լուսաւորում է գոմը: Անկեւնում, ուր հազիւ թափանցում է ճրագի լոյսը, վրձնի պէտ ինչ-որ բան է շարժւում: Մի քիչ յետոյ պարզ երեւում է. այժ է՛ նստած ախտափայտի տակ, որոճում է, արագ շարժելով ոսկեմազ ժօրուքը: Կողքին հորթանոցն է՝ հիւսած ախիլի դալար ճիպտաներով, ամուր, դեղեցիկ: Այդ հիւստածքի վրայից երեւում է նորելուկ հորթի գորշ, երեքուն գլուխը: Կոճր դունչը փորին դրած, աչքերի մէջ մայրութիւն, նայում է հորթուկին: Բառաշում կարճ, զորովալից: Ախտոի միւս ծայրին եզն է՝ հոնի դեղնակարմիր կապը վզին: Գլուխը բարձր պահած նայում է տիրոջը, ասես զարմացել է, սր մեխուել է գոմի մէջը: Կա նախաձեռնութիւն իրեն: Գալուստը երկար է մնում կանդնած: Նայում է հորթանոցին, կովին, նոր սարքած ախտին, որ ձի պիտի ունենար ու կապէր այնտեղ, ճրագին է նայում, որ ժայռեղէն պատի վրայ մրով ժօրուք է քաշել, ու մօտենում է եղանը, ձեռքը քաշում է մէջքով, զօրում է ճակատն ու ականջատակերը: Յետոյ մի բուռ խոտ է վերցնում, կտանում է, քերում ծնիկների վրայ շորացած թրիքը: Եղբ պոչը բարձրացնում է եւ տաք, կոշտ լեզուն քաշում է տիրոջ վզով: Գալուստն էլ իրեն պահել չի կարողանում, գրկում է եզան գլուխը, լաց է լինում ու խօսում է հետը.

— Պրճաւ, կուճար ջան... Սրանից գէնը քեզ ո՛վ պիտի քորի: Ել մազերդ այսպէս չեն շողալու: Հարիւր տէր ես ունենալու, ամա ոչ մէկի սիրտը քեզ համար չի ցաւալու: Ո՛չ նրանք քեզ կը ճանաչեն եղների մէջ, ոչ դու նրանցից մէկին: Հարիւր ձեռքի տակ անտէր Խումար...

Նորից ձեռքը բռնում է եզան մէջքին, վզին, ճակատին, ապա բուռաւէս կորնդան է լցնում մտուրները, եւ երբ անասունները սկսում են ուտել մուշմուշ, ինքը նստում է մտուրափայտին ու մտածում է բարձրաձայն. «Ե՛նչ պիտի լինի մարդու օրը, որ արտերի մէջ իր արտը չունենայ, այգիների մէջ՝ իր այգին, նախրի մէջ՝ իր կովը, եղբ: Ախր ինչպէ՞ս կարելի է պտպերի ձեռքով քաշած սահմանները քանդել ու ամէն ինչ խառնել իրար: Կը քանդեն, իսկ որտեւ քաշած սահմանները ինչպէ՞ս պիտի քանդեն... Լաւ, մարդ որ մեռնի, որպէս ժառանգութիւն թ՛նչ պէտք է թողնի իր երեխաներին...»:

ՍՈՒՐԷՆ ԱՅՎԱԶԵԱՆ

(«Տար Ընդդ, կեանք — 214 — 215)

Ե Ձ Ը

Ենթադրենք, երկխոս ձեզ հարգը-
նում է, թէ ինչ բան է հզը: Բացա-
բում էք, աւելի տեսանելի դարձնելու
համար նորիկ կատակում էք՝ կովի
ստուսինն է, հորթի հայրն է... Այո-
պէս կը լինի թէ՛ սուսերէն, թէ՛ ցան-
կացած այլ լեզուով: Քուստ է, թէ
թարգմանելուց հեշտ բան չկայ: Ըն՞ որ
զո պարզապէս բառ է, զեղամէնը բառ:
Բայց այդպէս չէ, որովհետեւ այդ բա-
ռը տարբեր լեզուներում տարբեր կեն-
տադրութիւն ունի... Ին՞՞ համար, օ-
րինակ, հզը մի Հակոբական, տեսելի

ժանր, հայրենի ամենածանր բաներից
մէկն է: Երա մէկ ես տեսնում եմ իմ
ժողովրդի կերպորը, երա տեղումը,
երա ուշադրանքի կերպը: Ձե՞ որ հայ
գիւղացու համար հզը ոչ միայն աշ-
խատանքի եւ փոխադրութեան միջոց է,
այլեւ բարեկամ, զրուցակից, ունկն-
դիր: Պատահական չէ, որ մեր բանա-
հիւտութեան ամէնէն ժողովրդակա-
ն տեսիլը հորովինն է, ինչ երա զխա-
տար հերոսը՝ հզը...

ՀԱՄՈ ՍԱՀԵԱՆ

Մի մեծ գերդաստան նրա յայտն էր,
Գարունը բացուեց՝ լուծը ուսին էր,
Ճակատին շարմալ լիալուսին էր,
Եզն այսպիսին էր:

Եզը գուքանի գուքն ու գրգիռն էր,
Ոգու կորովն ու արեան բրբրան էր,
Ուղեծիր համող նրա ձրթիւն էր...
Ճակատագիրն էր:

Եթէ բախտը կար, հզը միջուկն էր,
Օճախի ծուխն էր, նախիրի շուքն էր,
Նա շինակամի միակ մեջուկն էր,
Նրա բագուկն էր:

Երբոր միայտը կողին շաչում էր,
Նա ինքն իրենից բուսնում, աճում էր,
Ինքն իրեն տիրում ու նուաճում էր,
Եզ էր, քաշում էր:

Եզան կերածը դարման ու սեզ էր.
Ինքը բարութեան քայլուղ մի գէզ էր,
Յամառ էր, բայց եւ խոնարհ ու հեզ էր,
Ինչ անէր, հզ էր:

Օրը թեփում է, ու ես մթնում եմ,
Մ'ըզ իմ, գուքան իմ, ե'զ իմ, քրտնում եմ,
Ինքն իմ սուտերից մէկ-մէկ խրտնում եմ,
Բայց զեռ տնքում եմ...

ՀԱՄՈ ՍԱՀԵԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԵՒԱԿԻ ՆԵՏ

...Դեռ նոր էինք մտնել Եռւմա, երբ փայտէ մի դարպասի առջեւ հանդիպեցինք մի յաղթանդամ ծերունու: Բաց դարպասից երևում էին բակում շարուած կաւէ ամանները: Մօտեցանք, բարեւեցինք: Սեւակը հենց սկզբից նրա հետ խօսեց խոյի բարբոտով, իսկ նա այդ բարբոտին տիրապետում էր կատարելապէս: Մերունին հանելի զարմանքով նայեց Սեւակին:

— Պախուածքդ քաղաքավարի է, լեզուդ՝ մերա: Դու վո՞վ ես, այ բալա:

Ընդհանուր բաներով ներկայացրի Սեւակին, յարգելով նրա ծայրայեղ համեստութիւնը: Գիտէի, որ նա չի սիրում փայլուն խօսքեր ո՛չ իր, ոչ էլ ուրիշների հասցէին:

— Կոմիտասի մասին գիտեմ, գիտեմ: Զարեկոյիս ասիրեմ՝ ըմէն կարդացիք, լսիք իմ: Ինչպէս ինչ էլ եմ լսի: Ապրես, բալաս, թող էդ խորոտ ճակատդ պաշեմ:

Դադալ դային, — այսպէս էր ծերունու անունը, — մեկ տուն հրաւիրեց: Նա ութսուն տարեկան էր, առոյգ, գրուցատէր: Տան նահապետի իրաւունքով կարգադրեց «ազիզ հիւրերի» համար մի քանի հաւ մորթիւ:

— Էն խորոզն էլ մորթիւնք, դար միտը խամով կ'ըլլի, — վերջում աւելացրեց Դադալ դային:

— Դադալ դայի, թէ ընձի սիրաս ես, խորոզի խաթրին մի կ'զի, — ասաց Սեւակը, — էսքան խաւերին մի խամ խորոզ պէտք է, թէ չէ էդ խեղճ խաւերը «անբարոյական» կը դառնան...

...Նստեցինք բակի խնձորենիների տակ փռուած առփրայի շուրջ: Մեր գլխավերեւում կախուել են առողջ բուրաւէա խնձորներ: Սեւակը ծայրապատիկ նստել էր, ինչպէս Դադալ դային: Նրանց տրամադրութիւնը բարձր էր: Միմի բաժակ անական գինի խմեցինք: Սառը, անպական գինի էր, մաժուկ պէս կ'զլում էր Դադալ դայու ձեռքով պատրաստուած կաւէ փարչի պատերին:

— Այ խայ, — ասաց Սեւակը, — սկի են թելի խաղերէն չէ՞ս նախի:
— Ընչի՞ չեմ նախի...

Եւ երգեց-

Օրը պացլաւ, յուսացաւ,
Մաքկալն Աստծուն յուսացաւ...
Վարի, դէ վարի, եզ ջան, եզա,
Աստուած կը տայ մեր ցարեմի տեղա...
Մեռս տնեմ վըր էն մանիմ,
Ազօթկ անեմ էն սուրի խաչիմ,
Խաչիմ մեռնեմ Տիրոյն էլ խեւտ,
Կուծեր կըտայ օրերու խեւտ...

Մերունու գրնդուն ձայնը որ կարծես դարերի խորքից էր լսւում, յուզեց բոլորին: Սեւակի աչքերում արցունքներ փայլեցին: Հայ երկրագործի աշխատասիրութիւնը, նրա ազնիւ վերաբերմունքը դէպի իր լուծընկերը, նախնական պարզութեամբ լցրեց բոլորիս հոգին: Սեւակը առաջարկեց այդ երգի եւ՝ նրա պահպանողի կենացը՝ Դադալ դայու կենացը:

(«Գրական քերթ», 1984, թիւ 6) ՍԱՄՈՒԷԼ ՃՈՒՃՈՒԼԵԱՆ

Այս տարի ճնշեան 100ածական է Միաց Մեծարկնցի, որ ընդամենը 4-5 տարիներու վըրայ երկարած զրական իր գործունեութեամբ կրցաւ դառնալ հայ գրականութեան ամենէն խոնջիլ ղէմքերէն մէկը՝ մայի, գոյնի, խորհուրդի ու մա: զկայնական անտոգիւտ ապրումներու անկրկնելի հարստութիւն մը կտակելով մեր զրպւրութեան:

«Բազմեջի խմբագրութիւնը իր Հոկտեմբերի համարը ամբողջութեամբ պիտի նուիրէ եզերաբարտ բանաստեղծին անձին ու գործին: Առ այդ արդէն կատարուած աշխատանքները ու մտիկ եւ հետաւոր աշխատակիցներէն ստացուած գրութիւնները համարձակութիւն կու տան մեզի ըսելու, որ Թրագրուած քաջատիկը պիտի ըլլայ բանաստեղծին յիշատակին արժանի հրատարակութիւն մը:

Ուշախուփիւն է յայտնել նոյնպէս, որ ներկայ տուրուան ընթացքին կրկնելոյ կաթողիկոսութիւնը Թրագրած է ստանձին հատորով մը լոյս բնծայել Մեծարկնցի ամբողջական գործը՝ չափանոյթէ արձակ:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՍԱՅԱՆԻ

ԴՐՕՇԱԿ

ԺԷ. ՏԱՐԻ, 1986

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ Ա. ԵՒ Բ. ՀԱՄԱՐՆԵՐԸ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ


Ա. ԹԻՒ — Հ. Բ. Դ. Բիւրօ, Հ. Մարութեան, Ն. Պերպերեան, Գ. Պելեան, Հ. Տանապետեան:

Խմբագրական, Ազգային կեանք, Միջազգային կեանք, Այրուրեն:

Բ. ԹԻՒ — Ե. Յովհաննիսեան, Վ. Օշական, Ա. Աւետիսեան, Ա. Ամուրեան, Ն. Պ., Ժ. Պ., Գ. Պ., Ա. Տէր Միգանեան, Մ. Ս.:

Նամակատուի, Մեր մամուլի լուսարձակին տակ, Ազգային կեանք, Այրուրեն:

digitised by A.R.A.R.©



ԼԻՌԱՆՆԵ

Հատավաճառ 20 Լ. Ռ.

Տարեկան բաժնեգին 200 Լ. Ռ.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 20 Ս. Ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տալար

بَاكِين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
 المدير المسؤول
 السيد ارثين كارنيك قزانيان

•

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITERAIRE & ARTISIQUE

Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
 ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
 ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
 ՍԱՐԳԻՍ ԿՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
 Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban
 Tel. 296898

حزيران ١٩٨٦